



Բ ՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

« Հուսկ բանք »	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ	193
Մարտի երգը, թրգմ. Հ. Արսեն Ղազիկեան	ՔԱՐՏՈՒՉՉԻ	194
Թուրքին հունձքը	»	195
Հէքեաթ	ՌՈՒԲԷՆ ՉԱՐԴԱՐԵԱՆ	195
Հուսկ ըղձանք, թրգմ. Ա. Չ.	ԹԷՈՅԻԼ ԿՈՒԹԻԷ	196
Աշնան երգ, թրգմ. Ա. Չ.	ՓՕԼ ՎԵՐԼԷՆ	—
Տաղ, թրգմ. Ա. Չ.	ԺԱՆ ՄՈՐԻԱՍ	—
Նորագոյն կարծիքներ՝ հայ ճարտարագետութեան մասին.	Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ	197
Հայ եղեր. — Տաղ խաչի.		220
Քրտնիկ	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ	221
Քառեակներ Պարսիկ խորհրդապաշտ բանաստեղծութիւնից, թարգմ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴ. ՄԱՒՍՈՒՏԵԱՆՑ		223
Երուանդ Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը.		224
Էտկար Շահինի նոր գործերը		225
Հայ աստղաբաշխ մը.		225
Օր. Մ. Բաբայեանի երգեցողութեան դասընթացքը.		226
Ճառ՝ արտագանուած Փօլ Վերլէնի մահուան ժՁ տարեդարձին առթիւ		226
Ցանկ Անահիթի նիւթերու, Գ—ԺԲ. տարեշրջաններու		229

ԱՆԱՀԻՏԻ ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Անահիթի Ա. եւ Բ. տարեշրջաններու նիւթերու ցանկը տուած ենք այդ երկու տարիներու վերջին թիւին հետ Գ—ԺԲ. տարեշրջաններու նիւթերուն ցանկը կուտանք այս թիւին հետ :

ԱՆԱՀԻՏԻ ՀԱԻԱՔԱԾՈՒՆ

Անահիթի Ա. տարեշրջանն սպառած է : Բ. տարեշրջանէն կը մնան շատ քիչ օրինակներ : Գ—ԺԲ. տարեշրջանի հաւաքածունները կրնանք ուղարկել գնել ուզողներուն, սովորական գնով հատորը 12 ֆրանքի, բաց ի ժ. տարիէն, որ 5 ֆրանք է : Ուսուցիչներու, ուսանողներու եւ չունեւոր գրասէրներու համար պատրաստ ենք կտրեւոր զեղչ մ'ընելու՝ երբ մեզ գիմեն :

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀՍՏՈՐ Ա.

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ

35 Նկարներով զարդարուած

Ստանալու համար պէտք է գիմել թիֆլիսի գրավաճառներուն : Գինն է՝ 1 թել. 50 կոպ.

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՍԵՊՏԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 9-12

« ՀՈՒՍԿ ԲԱՆՔ »

Ներկայ թիւէն յետոյ՝ որով տասներկու-երրորդ տարեշրջանը կը լրանայ՝ Անանիս պիտի չհրատարակուի այլ եւս :

Այդ որոշումը տուի մեծ ցաւով, բայց առողջութեանս վերջնական կազդուրման համար՝ ատեն մը ամէն ծայրայեղ յոգնութենէ, մանաւանդ ամէն սրտնեղութենէ զերծ կեանք մը վարելու անհրաժեշտութիւնը՝ զիս ստիպեց այս որոշումը սալու :

Անանիսի հրատարակման նիւթական դժուարութեանց յաղթելու « թուս աը ֆօրսը » զոր տասներկու տարի յաջողեցայ ի գլուխ հանել, թերեւս դեռ երկայն ատեն շարունակէի սիրով, եթէ առողջութիւնս խախտուած չըլլար : Մեր ցեղը շատ լաւ յատկութիւններ ունի, բայց հաւանականաբար՝ իր անստոյգ, մշտանալած, յարաւրդով գոյութեան հետեւանքով՝ մտաւորական գիտակից ու կենդանի, ընդարձակ ու կազմակերպուած գործօն « հասարակութիւն » մը չէ կրցած ձեւացնել : Թերթ մը, որ զբօսուցիչ ու եւ է հանգամանք չունի, ոչ ալ օրաթերթի « գործնական » նկարագիրը, թերթ մը որ զուտ մտաւորական զեր մը կ'ուզէ կատարել, մեր մէջ չի կրնար դեռ գտնել իր նիւթական ծախքերն իսկ հանելու չափ բաժանորդ, եւ գտնուած բաժանորդներէն ալ՝ սակաւաթիւ

բացառութիւններէ զատ՝ բաժնեգինները գանձելը Արեւելեան կոնգրէսը լուծելէն աւելի դժուար է : Այս այսպէս ըլլալով՝ հասկանալի է որ այս տեսակ ծանր բեռ մը՝ որ ամենէն քաջաւուղջ մարդն իսկ կրնայ ջղագար դարձնել՝ կրկնապէս անտանելի դառնայ հանգստեան պէտք ունեցող անձի մը :

Այն մտաւոր եղբայրակիցներս, որ ազնուօրէն, անշահախնդրօրէն աշխատակցեցան Անանիսին, թող այստեղ՝ այս առթիւ՝ ընդունին իմ խորին շնորհակալութիւնս գրական եւ ազգային գործի մը մէջ իրենց ինծի բերած թանկագին աջակցութեան համար : Շնորհակալութիւն պէտք է յայտնեմ նաեւ ընթերցողներու ասն քանակով շատ փոքր այլ որակով մեծարժէք խումբին, որ տարիներու ընթացքին մէջ՝ գիտակից ու սրտագին համակրութեամբ մը հետեւելով այս թերթին գործունէութեանը՝ իմ կրած տաժանքս քաղցրացուց : Շնորհակալութիւն եւ այն գրասէր անձներուն որ այս բարոյական աջակցութեան միացուցին նիւթական աջակցութիւն, նուիրատուութիւններով թերթին հրատարակման դժուարութիւնները մեղմացնելով կամ Անանիսի բաժանորդագիրները գանձելու ահաւոր տուեայանքին մէջ ինծի օգնելով :

Աւարտելէ առաջ այս « հուսկ բանք », պիտի ուզէի վերջին ուսումնասիրութեան մը մէջ վերլուծել ու բացատրել Անանիսի կատարած գործը : Այդ վերլուծումն ընելու ուժը չեմ

զգար այս պահուստ։ Ու թերևս լաւագոյն է որ ուրիշներ կատարեն զայն, ամբողջականօրէն, անաչառօրէն տեսնելու համար ինչ որ թերութիւնն ու յատկութիւնը կազմեց այս հրատարակութեան։

Սաշափը պիտի ըսեմ միայն թէ այս թերթը իրեն նպատակ ունեցաւ 1° Նպատակ մեր ազգային գառին իր ամենէն բնական, ամենէն յստակ, ամենէն վսեմ ձեւովը լուծում գտնելուն։ 2° Մեր ազգին մէջ ցեղային ինքնասիրութեան եւ ինքնաճանաչութեան զգացումը զօրացնել, իր գոյութեան իսկ սպառնացող վտանգներով պաշարուած ցեղի իր զիրքին բերամբ՝ « ցեղային » շահերուն պաշտպանութեան հարցը ամէն ուրիշ հարցէ վեր դնելու ձգտումը ամրացնել մեր մէջ։ 3° Չափաւոր, խոհական, ճշգրտեալ ու դրական ազատամտութիւնը որ մեր ցեղին աւանդական ոգին է հղած՝ պահպանել, փոխանակ ծայրայեղ ու ցնորական ազատամտութեան մը հոսանքը քաջալիւրդելու։ 4° Մեր ազգային եկեղեցւոյն՝ իբր մեր ցեղապահպան մեծ ուժերէն մին եւ մեր մտաւոր կեանքի ստաւարներէն մին՝ դեռ մինչև ցարդ ունեցած կարեւորութիւնը շնչունել եւ զայն փոքրացնել ուղղներուն դէմ մաքաւել։ 5° Մեր ցեղին անցեալին մէջ կապարած պատմական, գրական ու գեղարուեստական գործը ամբողջականօրէն հրեւան հանուելուն աշակցել։ 6° Մեր նոր գրականութեան ու նոր լեզուին նրբացման, ճոխացման, ընդլայնման, կատարելագործման օժանդակել, ու մասնաւորապէս մեր գրականութեան մէջ՝ « ցեղային նօթ » ին զօրացման պէտքն զգացնել։ 7° Օտար գրականութեանց ամենէն ճշմարտապէս գեղեցիկ եւ անկորնչելի գլուխ-գործոցներու խնամոս թարգմանութեամբ մեր գրականութիւնը հարստացնել, ու՝ արեւմտեան քաղաքակրթութեան շարունակելով հանդերձ միշտ տալ նախապատուութիւն, մեր նոր սերունդներուն ուշադրութիւնը հրաւիրել մեր մէջ տարօրինակապէս անտեսուած արեւելեան հին մեծ գրականութեանց վրայ, որոնցմէ՝ իբր արեւելցի ցեղ՝ մենք շատ բան ունինք օգտուելու։ Մէկ բառով՝ այս թերթը ցանկացած է կրցածն ընել որպէս զի հայ ցեղն ըլլայ հետզհետէ աւելի գիտակից իր ինքնութեան, իր ուժերուն եւ

իր պատմական դերին, եւ աշխարհի թատերաբեմին վրայ հետզհետէ աւելի հզօր, փայլուն եւ ինքնադրոշմ կերպով կատարէ այդ դերը։

Թէ ի՞նչ չափով իրականացած են այս ցանկութիւնները, որո՞նք են այս ծրագրին այն բաժինները որ յաջող արդիւնքներու յանգած են, որո՞նք են որ կիսկատար մնացած են եւ կամ ձախողած են եւ ինչո՞ւ, — երկար ու սուսնասիրութեան պէտք կայ ասոնց պատասխանելու համար. որովհետեւ այդ հարցմանց պատասխանել՝ գրեթէ մեր ժամանակակից ընկերական եւ գրական բոլոր հարցերուն քննութեամբն զբաղել ըսել պիտի ըլլար. եւ ինչպէս ըսի՝ լաւագոյն է եւ պատշաճագոյն է որ ուրիշներ կատարեն օր մը այդ քննութիւնը։

Փակելով Անահիտի վերջին էջը, ես ջիւրմաղէս կը փափաքեմ որ մեր նոր սերունդները ընդգրկեն այս թերթին ծրագիրը եւ զայն իրագործեն աւելի լայն ու հզօր կերպով։

ԱՐՇԱԿ ԶՊԱՆՆԵԱՆ

ՓՈՒԻՉ, Դեկտ. 1911

Մ Ա Ր Տ Ի Ե Ր Գ Ը

Ինչպէս որ կից մը յղի, որուն վրայ յամբողջ՝ Յուշիկ կ'իջնէ քմբուրեան բսուերն ու զայն կը գրաւէ, Արձակ՝ ինկած մահնից վրայ, կը բարբախտ ցէ բասուն, Հառաչաններ, կըցկոսուր շեշեր շուրթին վրայ կու գան Ու դեմքին վրայ կը վազեն կարմրութիւններ յանկարծոյն։

Երկիրն այ է նոյն նրման, ամպերուն շուր կ'անցնի Կանանչից վրայ փերք առ փերք մէջէն սրտոյն արեւուն. կը ցրնցէ հով մը նամէ նրեցնիներն ու դեղձին ջրողիւմ ներմակ ու կարմիր, ու ծաղիկներ կ'իյնան, եւ բուններուն ծերպերէն կը բարձրանայ երգ մը վեր։

— Ո՞վ դուք կոզեր երկրնի՝ ամպեր ներմակ ու նրսեմ, Որ կը թեւէ դէպ ի վեր արօտերէ ծովային, Օ՞հ, կարք վա՛ր հոսեցէ՛ք ձեր ուռուցիկ ծիծերէն Մարգին՝ բլրան, որ անա կը կանաչնան՝ կը ծրպեին, եւ անտառին՝ որ կը զգայ իր առաջին տրոփիներէն։ —

Իրենց տունէն արքրնցող ծաղիկներն ա՛յսպէս կ'երգն. Այսպէս կ'երգն բողբոջներն՝ որ կը սրբփան, կը շաւթին, եւ արմատներն որ ծիլ ծիլ կ'ընդարձակին բոճակաք. Այսպէս կ'երգն հողին սակ քաղուածներուն ոսկրերէն Շառալիցներ կեանքի եւ բնօրհաններ հողի։

Կը պղպրջէ ջուրն անա, կը մրմրոյայ որոտումն, Հորքը խոնաւ ախոռէն կը կարկառէ գոռիւր դուրս, կը կարգրնէ վտռելի իր թեւերն քսէպ ձեծելով,

Պարտեզին մէջ կուգուն խոր հառաչանքներ կ'արձակէ
Եւ ամուսին վրայ հրդաճն քնդոս քնդոս կը խայտան :

Աշխատութեան ծրուցէք, ո՛վ կազմութեան ուսեր ,
Ո՛վ քաջառոյց սրբեր , օ՞ն , արտաբաններու բացուցէք ,
Երազներու սրբացէք , հոգիներու քեւեր , օ՞ն .
Չըլագեցած փափանքներ , դէպ ի կրուի խոյացէք ,
Ինչ որ եղաւ՝ կը դառնայ ու պիտի՝ դառնայ դարձ դար :

ԹՈՒՐԲԻՆ ՀՈՒՆՉԲԸ



ԱՐԷՆ, 12 Յունիս . — Թուրքերն
սկսան ենձել Թեսալիոյ մէջ եւ կը
շարունակեն քալանք . (Հեռագիր)

Կը հրճէ՞ Թուրքն : Երկէ Հայու գրուիւնք
Իր կեռ սուրին քակ կ'իյնային դիսսպաս .
Եւ ինք գանձն՝ մագկութնչ , մախիզ՝ կը ձօնէր
Եւրոպային որ գրգռուէ արցունքով :


Կը հրճէ՞ Թուրքն : Այսօր անա Թեսալիան
Խարսիւցան արեամբ . Եւ չէր ներկողն ինք .
Պատերազմի դա՛ւսն է իմ կալս՝ քսաւ ան ,
Ու ձաղկելով պիտի կամենալ կեամբուրքն :

Կը հրճէ՞ Թուրքն . ու նախանան գորողին
Հելլէն գեղոյն ծաղիկն բնծայ կ'ուղարկէ :
Միապետները Քրիստոսի պիտի՝ նրակն ,
Ճերմակ կուրեր՝ Փաշիւանի հարձակն :

Քարտուցչի

(Քարգւ. Հ. ԱՐՄԵՆ ՂԱԶԻՅԱՆ)

Հ Ի Ք Ե Ա Ք



Ա

Ա՛լ ջուրերը խփեցին ու կանաչ ալիքները
Իրենց տակ ծածկեցին : Հաղարպտապայ ռոտքին
տակ գիւղ մը կար , ցած քիւրքէն ցախեր կը
կախուէին , աղիւտէ փրփրկած տուններն ալ հո-
ղին կպած կ'երեւնային , հեռուէն տանիքնե-
րուն վրայ գիւղուած ուրթոտի կապոցները ու
մանուկներու կախօրթանները կը տեսնուէին :
Ու առտունները աքաղաղներուն սուր շնիորը .
արթնցող մանկիկներուն լացը մինչեւ հեռուն
գիւնացի գիւղը կը լսուէր :

Գիւղին առջեւէն ծովակը կ'երկնհար ու
ալիքները գիւնացի ափին վրայ կ'երգէին . հի-
մա ա՛լ գիւղը չիկար , ոչ ալ այն արագիւններուն
խոչոր , վեր տնկուած բոյները ուր ձագեր կը
ճուային եւ սուրկէ իրենց երկար վղերը գուրս
կ'երկնցնէին : Գիւղը հին գիւղ մըն էր . ջու-
րերուն տակ մնաց :

Բ

Մատղաչ սուրի մը հատակը , աչքերը՝
մայրը եղնիկէ մը գողցած , ու մազերը ուսն ի
վար , կոնակն ի վար , աննման , գիւղը հարս
մը կար . ականջին օղերը իրենց ոսկի շողիւնը
կը խաղցնէին անոր սպիտակ լանջքին վրայ ,
ու վզին ճերմակը՝ ամպի գոյն , կաթի գոյն էր .
գեղեցիկ , գեղեցիկ , ջրի պատանները ծնած
էին այդ աղջիկը : Ծովակի-հարսը կ'ըսէին
իրեն :

Ու գեղեցիկը , գիւնացի գիւղը , ծովակի
ափին վրայ , սիրական մ'ունէր :

Գ

Գիւղերնորուն , երբ խաւարը իր թեւերուն
տակ լեռներն ու ծովուն ջուրերը կը պահէ ,
գորանքը իրենց կուկուրքը կ'սկսին ու ջուրե-
րուն մէջէն ճաթող պղպջակներու պզտիկ չը-
թոտուքները , երբեմն ալ գորանքու ճողփիւնը
կը լսուի . ջրի կրիաները գուրս կը սողան ու
խոտերուն մէջէն պզտիկ խլրատուք մը , ձայն
մը կուգայ :

Ճրագները ա՛լ մարեր են , գիւղը ամբողջ
կը քնանայ , միակ պատուհանէ մը հոգէ ճրա-
գաման մ'իւր լոյսը կը խրկէ հեռուն , աղօտ
ճառագայթով մ'ալ մօտի պատերը լուսաօրկելով
քովընտի . յուշիկ , գողի վախով թեւ մը կա-
մաց կամաց ջուրերը մէկ կողմ կը նեղէ , լսու-
լու սրտադողով , մինչ անպաղտնապահ ալիք-
ները թեթեւ շրուկ մը կը հանեն , ու լողացող
մը կը մօտենայ եղերքին . աչքերը ճրագի՛ն ,
ճրագին որ կը պլպլայ :

Ծովակի-հարսին սիրականն է , ու ճրագը
անորն է , գեղեցիկի՛նը :

Դ

Ամէն գիշեր , ձմեռ ամառ , նոյն ճրագը
իր տեղէն , նոյն գողարիկ , քթթող աչքովը
հեռաւոր սիրականը կը կանչէ , խորունկ ալիք-
ներուն մէջէն սիրականին կ'առաջնորդէ , ու
մարդ չի գիտնար , ձուկերէն զատ , թէ ջուրե-
րուն մէջէն մարդ մը կուգայ եւ առտուայ
վերջին լուսաօրին նայելով՝ նորէն ջրերուն
գրկէն զէպ ի գիւնացի գիւղը կը վերադառնայ :
Ինչպէս բաղնը բարտին կը սիրէ՝ փաթ-
թուելով անոր , ինչպէս հովը տերեւներուն
մէջէն սօսաւիւնով ծառերը կը սիրէ , այնպէս
իրար կը սիրէին անոնք , այնպէս կը սիրէր
ծովուն-հարսը իր սիրականը , աչքերէ պահ-
ուած , արեւէն ալ գաղտնի , ամէնալու վախով ,
ծովուն-հարսը իր սիրականը կը սիրէր՝ ինչպէս
այծեամն իր ուղածը կը սիրէ մութ թառուա-
ներուն մէջ :

Ե

Ամայի հովիտներուն մէջ՝ արձագանքը
առուակին ու թռչունին գաղտնիքը գուրս կը
հանէ , հեռուն հնչելով , ջատու մ'ալ գեղեցիկ-
կին գաղտնիքը կը կուսնէ . քթթը գետնին հա-
սած պատու մը , ու էրկանը լուր կուտայ :

Խարուած էրիկը, կատաղի, կ'ուզէ որ սակայն վրէժնէրուն ամենէն սոսկալին կատարէ, կընտջը սիրականը անոր ձեռքովը մեռցնէ ու ան ալ տառապանքով յա՛մր յա՛մր հասցնէ: Գիշեր մը ուր խաւարը ածուխի փոշիով արեղերքը բոլոր սեւցուցած էր՝ ծովակին կանաչ ու թանձըր, խորունկ ջուրերուն վրայէն մանր ալիակներ վէտովէտալով կը ճղուէին, կը սարածուէին, գուարթ բան մը կար ծովուն վրայ, ճրագը իր տեղէն անդիտակից՝ նորէն բաց մնացած միականի աչքի մը պէս խաւարին վրայ կը նայէր: Սիրաբ իր սիրածին շուտ կը հասնի: Հեռուն լողուոր մը կայ նորէն. ալիքները թեւի մը հետ կը կուտին, մարած խշրտուք մը կուգայ ջրի. ծովի-հարսին սիրականն է որ ծովը կը բանայ: Կէսը հասաւ տնա, ձայնը աւելի որոշ կուգայ. բայց, ս'վ սոսկալի սանջանք, ճրագը իր տեղը մարեցաւ ու ալ աչքերը բան չեն տեսներ: Վեր առին, վար նետեցին գայն ջուրերը, յոգնած թեւերը կախուեցան ու ջուրերը բացուեցան... Էրիկն իր վրէժը կը լուծէր, ու սիրականը, ծովի-հարսին կրտսրի՞ն սիրականը, կամաց կամաց, յուսանտի տանջանքներով ջուրերուն մէջ մեռաւ: Իր սուգած տեղէն փրփուրներ ցատկեցին վեր պղպջալով ու անոնք ալ քիչ մը հոգը մարեցան գացին:

Զ

Առաւօտուն, արեւն երբ լուսցաւ ու գիշերն իր արհաւիրքներով ծովին տակ գնաց՝ ալիքները արեւն կարմիր երակներ կը բերէին արեւնքն ի վար:

Ու ալ չերեւցաւ ծովու-հարսը, դուրս չեկաւ, մարդ չի տեսաւ գինքը, մինակ օր մը հովիւները երբ արօտէն դարձան՝ շապիկ մը, շալկար մը, գոյգ մ'օղեր ու ապարանջան մը բերին գիւղը, քարերուն վրայ դրուած՝ գաած էին Տեսնողները ճանչցան ու ըսին թէ անո՛րն էր, բայց ինչո՞ւ խեղդուեք էր, ցաւն ի՞նչ էր որ...:

Է

Չուրերը խփեցին ու գիւղը ալիքներուն տակ մնաց, հիմտ նոյն գիւղին վրայ, ալիքներուն մէջ, ամեն գիշեր սկար լոյս մը կը շողայ, փայլփլոզ ապակիի կտորի մը, փոսուրայի մը պէս. ու կ'ըսեն նոյն սիրոյ կանթեղն է որ ջուրերը իրենց խորերէն կ'անդրադարձնեն ու չեն մարեր գայն երբէք:

Առաւօտները, ամեն արեւածագի, նոյն արեւնքի եղգնուաներէն գոյգ մը ճերմակ, փրփուրի գոյն, կարմիր կտուցով թուռներ դուրս կ'ելլեն հանդարտ լողալով, առանց երջի, անշուկ կը լողան, կը կորսուին, թեւերնին ջուրի մէջ կը թաթխեն ու ջուրի մանր ցայտքեր կը թոցուեն շուրջերնին, մարդ չգիտեր ո՛ւր կ'երթան ու առաւօտներէն դատ, ալ չեն երեւիր: Գիւղացիները անոնց հրացան չեն քաշեր երբէք:

1895 ԹՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀՈՒՍԿ ԸՂԶԱՆՔ

Շատնց է որ ձեզ կը սիրեմ,
— Տասնուերը տարուան սէր է, —
Վարդագոյն է՛ դու, Ես՝ դեղնած,
Գարունն ունի՛ դու, Ես՝ ձրմուն:

Թուններս ծաղկած են քալիսակ
Լեղակներով գերեզմնոցի.
Ընդհուպ խաւրած նակասս ամբողջ
Պիս՝ անոնցմով հովանուորի:

Տժգոյն արեւս իմ խոնարհող,
Հորիզոնին մէջ՝ սի սուզի,
Եւ բրուրին վրայ մահաշու՛հ՝
Իմ վերջին տունս անա կ'եստեմ:

Ա՛խ, բող բերնիս վրայ ձեր բերնէն
Ինչպիսի համբոյր մ'յեսամնաց,
Որ կարենամ գերեզմանիս
Մէջ գէթ հանդարտ սրտով մնանալ:

ԹԵՌՅԻՒՆ ԿՈՒԻԼ

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Աւուրի՛ն ջուրակներուն
Ողբն երկայն՝
Կը խոցէ սի՛րսս անայլայլակ
Թախիծով:

Երբ ժամն հրնչէ, հեղձամբղձուկ
Եւ գունաս՝
Ես հիմ օրե՛րդ կը յիշեմ
Ու կուլամ:

Ու կ'թափառիմ, գիս կրող ժանս
Հովուն ցակ,
Մերք հոս մերք հոն, նրման չորցած
Տերեւին:

ՓՈՒ ՎԵՐԷՆ

Տ Ա Ղ

Այ՛նիս առջեւն է՛ միտ, անսա՛րժ նոնիներ,
Լոյսին մէջ բիրտ, կապոյտին
Վրջայ զրծուած, ջուրերուն ա՛փն, քալիսակ
Ցանկապատի մը մօտիկ:

Ե՛ս ալ ձեզ պէս մեռելապա՛ն եմ. հոգիս,
Մրտա՛յլ վիմ, ձե՛ր գոյնն ունի -
Բայց աղէտն ու Մանէն դո՛ւրս կը սլանամ,
Ինչպէս կասա՛րք ձերին:

Թարգմ. Ա. Զ. ԺԱՆ ՄՈՐԵԱՍ

ՆՈՐԱԳՈՅՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մատ ուրախալի կրեոյթ է որ վերջապէս Հայ ճարտարապետութեան և գեղարուեստի ուսումնասիրութիւնը կարգապէս գիտնականներու վիճարանութեան նիւթ է կարծեր. ապէ կարը դժուար թէ կուտայնք վէնքերնին վար գնեն, եթէ մենք կարողանանք անընդհատ ռազմամթերք հասցնել Հայ գեղարուեստի անհատնում շտեմարանէն, որուն հետեանքով քիչ տտե-նէն Հայ ճարտարապետութեան պատմութիւնն ալ իր պատուաւոր տեղը պիտի բռնէ ուրիշ ազգաց արուեստներու պատմութեան մէջ:

Ամբողջ 19րդ դարուն մէջ, Հայ ճարտարապետութեան մասին եղած գիտնական մասնաւոր հետազոտութիւններ միայն մէկ շջափելի օգուտ տուած էին՝ որ գոնէ նիւթեր և կարծիքներ կը հաւաքուէին ապագայ ուսումնասիրութեան համար: Նախկին հետազոտութիւններով գոյացած ընդհանուր կարկազուութիւնը կարելի է երկու խօսքով ամփոփել թէ «Հայ ճարտարապետութիւնը կոյր հետեոյութիւն է Հայաստանը շրջապատող մեծ ազգերու ճարտարապետական արուեստներուն»:

Բայց այժմ սկսեր է անցնիլ այդ շրջանը. նորագոյն հետազոտողներ աւելի մօտէն քննելով կամսց կամսց կը համոզուին թէ, Հայ ճարտարապետութիւնը կոյր հետեոյութեան մեծ փաստեր չի տալէն զատ, նաև տեղ տեղ մրցող և քան իր մեծ գրացիները գերակշռող դառնալ կսպաննայ:

Ինչո՞ւ և ի՞նչպէս սկսեցին Հին կարծիքներու փոփոխութիւնը, այդ շատ պարզ է. որովհետև վերջին տարիներու մէջ ուսումնասիրող գիտնականներ աւելի առատ և նպատակայարմար նիւթեր ունեցան իրենց սեղանին վրայ:

Բայց առատ և նպատակայարմար ըսելով, չի կարծուի որ Հայաստանի մէջ ուսումնասիրելի ինչ նիւթեր որ կային, անոնք մեծ մասը գրքերու մէջ մտան. երբեք: Միայն վերջին տարիներու մէջ կատարուած մասնաւոր պեղումներ, իսկական յիշատակարաններէ աւելուած լուսանկարներու որոշ ք նախութիւն մը, և ինամբով կատարուած քանի մը նորագոյն չափագրութիւններ, եկան Հին ազաւազուած պատկերներու տեղը բռնելու: Մէկ քանի բարեխիղճ գիտնականներ ալ վերջին քանի մը տարիներու մէջ կարծ և սահմանափակ ծանապարհորդութիւններ կատարեր են պեղումները և յիշատակարանները անձամբ տեսնելու համար:

Ահա այսքանը բաւական եղաւ Հայ ճարտարապետութեան համար նոր դարագլուխ մը բանալու:

Հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան այս նորագոյն շրջանը՝ սպաննական է նաև հանգէպ շատ մը հայ և եւրոպացի քննադատներ

րու, որոնք մեծամեծ հատորներ գրեցին Հայ պատմագրաց շուրջը՝ զանոնք մեծ մասամբ անվաւեր և չափազանցուած տեղեկատուներ համարելով:

Ճիշդ է որ Հայոց պատմութիւնը իր մէջ ունի զիւցապնեցական, առասպելական և կրօնական տարրերու տիրապետող բաժին մը, որ եթէ պէտք եղածին պէս գտնէք, շատ քիչ բան կը մնայ անցեալի մէջ Հայուն քաղաքական և տնտեսական վիճակը բացատրող: Աւստի շատ ընտան էր որ յառաջ պիտի գար այն ողորմելի գիտակցութիւնը ինչ որ քննադատներ կազմեցին լոկ պատմագրաց վրայ հիմնուելով՝ առանց զուգրնթացաբար ուսումնասիրելու Հայաստանի բազմադարեան անթիւ յուշարձանները:

Այս կրեոյթին մէջ ինչո՞ւ միայն Հայը մեղադրել. ուրիշ ազգերու ալ հին պատմութիւնները ոչ նուազ առասպելներու և կամայական խեղձութիւններու հիւսուածքներ էին գրեթէ դար մը առաջ: Սակայն անոնք գիտնականներու ձեռքով մաղուեցան, գտուեցան պեղումներով և անդագար խուզարկութիւններով: Այսօր ալ հիներուն տեղ, բոլորովին նոր պատմութիւններ գրուեցան աւելի ճիշդ, աւելի ընդարձակ և աւելի պատուաբեր այն երբեմնի մեծ քաղաքակրթութիւնը ստեղծող մեռած կամ կենդանի ազգերուն:

Մեր հին պատմագիրներ կարծուածին չափ ալ անպէտք չեն, անոնք շատ օգտակար կ'ըլլան մեզի, եթէ դարուոր յիշատակարաններուն հետ զուգրնթացաբար մասնագիտօրէն ուսումնասիրուին: Ահա այն ժամանակ շատ մը առեղծուածներ կը լուծուին և շատ մը առասպել ու չափազանցութիւն կարծուած հատուածներ ճշմարտութեան կը փոխուին:

Ապէք քանի մը տարի առաջ ո՞վ կարող էր երեւակայել որ, ամենէն շատ քննադատուած Մովսէս Խորենացիի Վիշապազուններու և Վիշապներու պալատի առասպելը իրականութեան փոխուէր: Բայց Խորենացիի առաջին յաղթանակը չէ ասիկա, ուրիշ շատ յաղթանակներ ալ տարաւ, վերջերս Գառնիի լիբանց անմատչելի բարձունքներուն վրայ մինչև 7 կանգուն բարձրութեամբ բազմաթիւ կոթածոյ վիշապներու գիւտը, աւելի ևս խոնարհեցնելու կոչուած է պատմաճօր քննադատները: Պր. Ն. Մառ այս տարուան Յուլիսի վերջերուն կատարած արշաւանքի ժամանակ այդ հսկայ վիշապներէն շատերը լուսանկարեց, և յուսալի է որ շուտով անոնք լոյս կը տեսնեն:

Համաշխարհային հռչակ ստացած Անիի մասին, մեր 10-14-րդ դարերու պատմագիրներ հակիրճ տեղեկութիւններ միայն տուած էին. սակայն այդ տեղեկութիւնները կատարեալ առասպելի գոյն ստացեր էին քննադատներու գրչին

տակ՝ մինչև այսօրուան բազմակողմանի լուրջ հետազոտութիւններ կատարուելը, ուրիշ երևաց որ սակաւախօս հայ պատմագիրներու գրածները ոչ միայն աւատարկ չէին, այլ և համեմատելով իրականին հետ գրեթէ ոչինչ էին գրած անոր մասին :

Մեր օրերուն հայ և օտար ծանապարհարդներու կողմանէ, ամբողջական Հայոց պատմութիւնէն աւելի ընդարձակ գրականութիւն մը ըստեղծուեցաւ միայն Անիի անունով . այնու ամենայնիւ այդ ամենը գեռ սկիզբն է 10-11-րդ դարերուն Շիրակի մէջ՝ Կարպացոյ բարձրագոյն քաղաքակրթութեան պատկերը ցոյց տալու համար : Ասիկա մեզի սքանչելի դաս մըն է սորվելու համար թէ՛ աւանց մնացորդ յիշատակարաններու ուսումնասիրութեան, ոչ միայն անկարելի է հայ ազգին դարաւոր անցեալը ճանչնալ, այլ և անկարելի է նոյն իսկ մեր ձեռքը կրած աղքատիկ պատմագրութիւններն ալ լիովին հասկնալ :

* * *

Հայոց պատմութիւնը աշխարհական և քաղաքական աւելի եկեղեցական ըլլալուն բնական պատճառներ շատ կան : Աւրիշ տեսակ ալ չէր կրնար ըլլալ, քանի որ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ ընդհանրական կրօն հռչակուած օրէն, աւելի միահեծան տիրապետողներ կղան կրօնական գլուխները քան աշխարհական վարչապետները :

Եթէ Տրդատ պահ մը ինքնակամ հաճութեամբ, Գրիգոր Լուսաւորիչը բացարձակ տէր դարձուց արքունի գանձին և ղինւորական զօրութեան, անկէջ յետոյ եկող հայրապետներուն համար անդիմադրելի պահանջ դարձաւ վարչական և տնտեսական գործերու մէջ ալ գերիշխան դիրք ձեռք բերելը : Հոգևոր և մարմնաւոր պետերու գերակշռութեան մրցումը տեւց մինչև Հայուն կատարեալ քաղաքական անկումը, որ եթէ չըսեմ աւելի, գէթ հաւասար չափով նպաստեց երկրին կազմալուծման ինչպէս ներքին տոհմային կռիւները և արտաքին թշնամիներու յարձակումները :

Տարաբաղդաբար, այս պայքարին մէջ հոգևորականութիւնը աւելի յաղթական դուրս կուգար միշտ՝ ի վնաս աշխարհային կազմակերպութեան . անկա հոգւոյ փրկութեան և յաւիտենական կեանքի երանութեանց դրօշակին տակ աւելի շատ զինուորուած ժողովուրդ գտաւ, քան գահակալն ու իշխանը երկրաւոր վաղանցիկ կեանքի վայելքն անունով : Բնականաբար, աշխարհական վարչապետներ անթե անթիկունք մնացած պիտի գրկուէին թագէն ալ գահէն ալ :

Քանի մը հեռատես գահակալներ, հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնները արքայական թագի տակ ի մի ձուլելուն մէջ գտան իրենց երկրին ապահովութիւնը, սակայն այդ բանը չի յաջողեցաւ Հայերուն համար, և կատարուած փորձերն ալ եղբրական վախճան ունեցան շատ անգամ :

Կղերին ի՞նչ հոգն էր թէ երկիրը անկոտ

էր կամ ստրուկ . անոր նշանաբանն էր տիրել ժողովուրդին հոգւոյն, սրտին և ստացուածքին, և փոխարէն ինքն ալ յաւիտենական անմահութեան գունդը պիտի բանար անոր առջև : Կղերին հայեացքով, ազգը այն ատեն երջանիկ էր, երբ եկեղեցին հարուստ էր, անոր հոգևոր պաշտօնէութիւնը լիառատ վարձատրուած էր : Գիտութիւն և գեղարուեստ միմիայն եկեղեցւոյ փառաց համար պէտք էր որ վարգանային : Եկեղեցին պէտք էր որ ներսով ու քրսով պճնուէր շարժական և անշարժ թանկագին վարդաբաններով և այդ ամենուն մէջ քահանայապետին թագակիր գլուխը միայն արժանի էր փայլելու՝ ժողովուրդէն, ազնուականէն, իշխանէն և թագաւորէն ալ բարձր :

Եկեղեցւոյ և եկեղեցականութեան բարձրագոյն հեղինակութիւնը սուրհովեւ միակ միջոցն էր քարոզել աշխարհականին որ անկա հրաժարուի բոլոր աշխարհային վայելքներէ . ճշմարիտ քրիստոնեային վայել չէր աւատ ու փարթամ կեանք վարել . հոգի աւատել էր Կամ զմարմն և մարմն Կամ զհոգի :

Այս քարոզները երբեմն այնքան խոր ազդեցութիւն ունեցան միաժամ ժողովուրդին վրայ որ մինչև անգամ թագաւորներն ու իշխաններն եղան, որոնք բաւական չի համարելով իրենց շինած վանքերն ու եկեղեցիները և անոնց անունով նուիրած ահադին եկամուտները, իրենք ալ կրօնաւորուելով վանքերը քաշուեցան հպատակ ժողովուրդը բազգին ու ճակատագրին յանձնելով : Այս ամենը եթէ օգուտ մը ունեցաւ որ անուրանալի է, այն ալ եկեղեցական ճարտարապետութեան վերին աստիճան վարգանայն է՝ թէ և քաղաքական անկախութեան զոհարելութեամբ գնուած :

Կարելի չէ գանել բնական վարհուրդի աղէտ մը կամ քաղաքական կորստաբեր հոսանք մը որ ժողովրդին ծովացած մեղքերուն չի վերաբերն մեր կղերական պատմագիրներն : Երկրաշարժ, հրաբուխ, լուսնի և արեգակն խաւարումներ, փոթորիկներ, երաշտ, մուկ, մարախ և ասոնց հետեւանօք սով ու համաձարակ, աստուածառաք պատուհասներ էին որ աշխարհ կուգային մեղաւոր ժողովուրդը արդարութեամբ պատժելու համար : Սուր, թալան և գերութիւն նոյնպէս անբաւելի մեղաց պատիժներ էին, որոնց դէմ կուուէր և ապահովելու միջոցը խուսել, ազտութիւն ու պատարագն էր : Արիստոյանի Անին պաշարած ժամանակ հազար և մէկ եկեղեցիներ պատարագներով զինուեցան թշնամւոյն դէմ . . . :

Ի՞նչ էին հայ ժողովրդի այդքան ծանր պատուհասներու արժանի մեղքերը, այդ կը գտնենք անոնց մեղադրական դատավճիռներուն մէջ : Մեծամեծ շքեղ ապարանքներու մէջ բնակիլ, փափկածաշակ կերակուրներով և ըմպելիքներով մնանիլ, մետաքսեղէն և ոսկեթել կերպաններով պճնադարձուիլ, անուշահոտ իւղերով օծուիլ, ծաղկանկար պատշգոյսներու և մահճակալներու մէջ պառկիլ . ահա մեղքեր, որոնք աստուածային բարկութիւնը կը շարժէին հաւատացեալին դէմ :

Այս կծու մեղադրանքներու տարափը ամեն որ զիւրաւ կը տեսնէ մէն մի պատմագրաց մէջ, իւրաքանչիւր անգամ աղէտ մը կամ փորձանք մը պատմելու ժամանակ. և այս բնական ու անբնական պատուհասներէն աղատելու համար կը յորդորէին հնագանդութիւն աստուածային օրինաց — սիրել թշնամին, հնագանդութիւն հոգեւոր իշխանութեան, սիրել յաւիտեանական կեանքը — :

Անին, երբեմն շոայլութեան, փարթամութեան և գեղի վայելչասիրութեան այնքան մեծ համբաւ հանեց, որ անոր ի տես զարհուրած մեր հոգեւորականութիւնը, այս նոր նիւուէին նոր Յովնան մը իրկեց յանձին Պուլ Յովհաննէս վարդապետի, զարձ և ազաշխարհութիւն քարոզելու համար :

Արքան պերճախօս էին այս մեղադրական վկայութիւնները և ի՞նչ խառցած գոյններով կը պատկերացնեն պատմական Հայուն բարձրագոյն քաղաքակրթութիւնը, որ գրեթէ ոչինչով չի տարբերիր մեր տոսորուն կեանքէն : Տարբերութիւնը այն է միայն որ հիներուն մէջ մեզք էր, իսկ այժմ անհրաժեշտ պահանջ :

Իրաց այս վիճակին մէջ մեր հոգեւոր փրկութեան առաջնորդ պատմագիրներ, այդ շատ ու փարթամ կեանքը բնաւ չէին կարող քաղաքակրթութիւն համարել և պատմութեան նիւթ շինել : Չէին կարող նաև մտածել թէ՛ փառասիրութիւնը, վայելչասիրութիւնը այնպիսի շարժիչ ուժեր են, որոնցմով արհեստաւորները կը մղուին դէպ ի կատարելութիւն, և արհեստներու կատարելագործութիւնը յառաջ կը բերէ անտեսական կեանքի բարեբաւ :

Այնու ամենայնիւ միութարակն փաստեր շատ կան որ, եթէ հայ շինականը և ամբողջին դասակարգը հըր ստրուկ էր կղերին, սակայն աքնուակառն ու իշխանը շատ դժուար են թարկուեր են դէպ ի խաւար և անկում առաջնորդող քարոզներու : Բոլորովին ոտքի տակ չեն տուած կղերին արժանապատուութիւնը, և կամ չեն կարողացած արհամարհել անոր ետեւ կեցող ամբողջին ոյժը, ուստի առատ նուիրատուութիւններով, անդադար վանքեր ու եկեղեցիներ շինելով չափաւորեր են անոր սուր պահանջները, և իրենք շարունակեր են ապրիլ իրենց սրտին ուղածին պէս, որուն անվիճելի արդիւնքը կը տեսնենք մեզ հասած բերդերու, ապարանքներու, ոսկեղէն, արծաթեղէն վարդերու և ընտանեկան գեղակերտ սպասներու ջարդ ու փշուր բեկորներու վրայ :

Թէ շատ անգամ մեր պատմագիրներ կամաւորապէս ծածկեր են աշխարհաչէն թագաւորներու և իշխաններու քաղաքակրթական կեանքի մէջ ունեցած մեծամեծ առաւելութիւնները, այդ մասին գեղեցիկ փաստ մը, արժանահաւատ պատմագրական իրողութիւն մը մէջ կը բերեմ, որով կարելի է ըմբռնել թէ լեր պատմագիրներ ի՞նչպէս կը դատէին երեւոյթները և ի՞նչ կը հասկնային պատմութիւն ըսելով :

Մեր նախնիք շատ քիչ թագաւորներու պար-

տական են այնպիսի խաղաղ ու երջանիկ օրեր, որպիսին ունեցան Գագիկ Ա. Բագրատունի թագաւորին օրով : Ստեփաննոս Ասողիկ ժամանակակից պատմագիրը, այս թագաւորին բոլոր աշխարհաշինութիւնները, բարոյական ու ֆիզիքական բոլոր առաւելութիւնները երկու բառով ահամայ խոստովանելէն յետոյ, յայտնապէս կը հրաժարի անոր գործունէութեան մանրամասնութիւնը նկարագրելէ, որովհետեւ անիկա մեծ մեզք մը գործած էր :

Ձի էր (Գագիկ Ա.) եւ վարժ ի պատերազմի, եւ առասանեռն ի բաշխելն, եւ զբաժ մարկաց յոլովից տեղեաց աղատեաց, եւ զկիրակիցն ցայապաւսոսն սաղմուտեղութեամբ կատարէր : Աւաղ վասն միոյ չարին որ արգել զբան զովեստի պատմութեան իմոյ :

(Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւնի գերական . Ս. Պետրբուրգ 1885, էրես 356 :)

Ի՞նչ էր Գագիկի մեղքը, այդ չի բացատրեր. բայց կտակած չի կայ որ Գագիկ երբեք ազգին դէմ չէր մեղանչած : Անպայման եկեղեցւոյ կամ հոգեւորականութեան դէմ գործած էր ոչ ոք մեղք, որուն պատճառաւ Ասողիկ խորապէս վշտացած վրէժխնդիր եղեր է անոր առաւելութիւնները ապագայ սերունդէն ծածկելով : Բայց այդ բանի մը տող վշտի արտայայտութիւններն ալ բաւական մեծ գովեստներ են Գագիկ Ա.ի հասցէին : Թէև այսօր՝ առանց անոր ալ բա՛ն ու բրէ՛ըր աւելի շատ բան պատմեցին Գագիկի համար քան ինչ որ պիտի կրնար գրել Ստեփաննոս Ասողիկ :

Միևնոյն դառնութիւնով լեցուած է Ասողիկ Գագիկի եղբոր Սմբատ թագաւորի. դէմ, հարևանցի կերպով անհարկելով թէ Սմբատի ժամանակ ոչ մէկ թշնամի չէր համարձակած երկրին խաղաղութիւնը վրդովելու, մանրամասն կը նկարագրէ անոր գործած մեղքերը որոնց մէջ ամենէ մեծը և ամենէն ծանրը իր քրոջ աղջկան հետ պսակուելն է :

Բովանդակ Հայոց պատմութեան մէջ Ծ-րգ զարը միակ շրջանն է, որուն մէջ հոգեւորականութիւնը մեծ մասամբ ազատ է ուրիշ դարերու դատապարտելի ուղղութիւնէն : Գիր, գրականութիւն, լեզու, ազգային ինքնուրոյն կեանք, նոյն դարուն մէջ ծագող բանի մը գիտաւոր աստղերու կը պարտինք, գինուած՝ խաւարի ու տգիտութեան դէմ, մէկ սիրտ մէկ հոգի եղած ժողովուրդին հետ, արեան գնով գոյութեան կռիւր մղեցին ներքին և արտաքին վտանգներու դէմ : Այն դարուն քանի մը հազուագիւտ եկեղեցականներու կանգնած ամբակուռ շէնքն է, որ դարերէ ի վեր կուրծք կուտայ ամեն տեսակ հարուածներու և կործանարար փոթորիկներու : Անցաւ այն Ռէ-դարը, ու այլևս չի վերադարձաւ :

* * *

Մինչև այստեղ նպատակս էր ընդհանուր գծերով ցոյց տայ թէ ի՞նչ պատճառով Հայոց հին գրականութեան մէջ տեղ չեն բռներ հայ ճարտարապետութեան և գեղարուեստի մասին

ընդարձակ տեղեկութիւններ : Այժմ կ'ուզեմ ցոյց տալ քանի մը փաստեր, որոնց պատճառաւ ներկայիս այ հայ գեղարուեստի ուսումնասիրութիւնը ենթակայ է գիտակցաբար կամ անգիտակցաբար խեղաթիւրուելու :

Այս սողերուս առիթ կուտայ նորագոյն հրատարակութիւն մը, որուն մէջ, տարիներ առաջ քանի մը հեղինակներու կողմէ արձանագրուած պատմական և նկարագրական սխալներ կրկնուելէ զատ, կը տեսնուի նաև թէ հեղինակը խիստ սակաւաթիւ նիւթերու վրայ ստիպուել է դատողութիւններ ընելու և եղբակացութիւններու յանգելու համար միտքը չարչարել :

Նոր հրատարակութեան անունն է Manuel d'art Byzantin, հեղինակն է Charles Diehl, տպուած է Փարիզի մէջ 1910 թուականին :

Մասնաւորապէս երկու յօդուած նուիրած է հեղինակը հայ-վրացական արուեստներու ուսումնասիրութեան, որոնց մէջ առաւելագոյն տեղը բռնած է Հայոց արուեստը :

Ի հարկէ շատ քիչ են այդ երկու գլուխները, տասնեակ դարաշրջաններ ապրող, նորանոր վերածնութիւններով զարգացող և իր ետեւը անհամար կոթողներ ձգող արուեստի մը համար : Սակայն դարձեալ շատ գոհ պէտք է ըլլանք որ այդքան սակաւաթիւ և մեծ մասամբ աննպատակաբարմար աղբիւրներով ալ, հեղինակը կարողացած է մինչև հիմա հայ արուեստի շուրջը յայտնուած կարծիքներէն տարբեր նոր եզրակացութիւններու համիլ, որուն մէջ շատ քիչ ունի իր նախորդները : Նոյն իսկ իր հինգ տարի առաջ յայտնած կարծիքներէն ալ մեծապէս կը զանազանին իր այժմեան կարծիքները :

Ուրիշ կարևոր աշխատութիւն մը հրատարակած է 1905ին, որուն մէջ խօսելով բիւզանդական արուեստի արտաքին ազդեցութիւններուն վրայ կ'ըսէ թէ՛ L'Arménie et la Georgie sont remplies d'édifices de style byzantin, de monuments incomparables de l'orfèvrerie et de la bijouterie Byzantines, (Charles Diehl. Etudes Byzantin, Paris, 1905 էջ 172) :

Այս խօսքէն կ'երևայ որ հեղինակը այն ժամանակ Հայաստանի գեղարուեստը պարզապէս բիւզանդական համարած էր :

Սակայն դեռ 1907 թուին սկսեց էին անոր հայեացքները փոխուիլ նորանոր փաստերու առջև : Այս թուականին Փարիզի Սորպոնի Turgot անուանուած դասարանին մէջ բիւզանդական ճարտարապետութեան մասին կատարած դասախօսութեան մը ժամանակ պարզեր էր իր նոր հայեացքները, որոնք ժամանակին հրատարակուեցան Բասմաթեանի իմբազրութեամբ լոյս տեսնող «Բանասէր» հանդէսին մէջ : Նախապէս այդ կարծիքներէն քաղուած մ'ընել աւելորդ չեմ համարիր :

« Ի բնէ ուշիմ, խելացի ևւ շինող ժողովուրդ մը եղած է հայ ազգը. չի նայելով իր քաղաքական աննպատակ դիրքին, որ ամեն ատեն ամեն ազգերէ յարձակումներ կրած է դրացի թշնամի և ոչ քրիս-

տոնեայ ազգերէն՝ որոնք աւերած քանդած ու փլուցած են իր կառուցածները : Չի նայելով իր այս անխաղաղ վիճակին, այս ազգը միշտ պահած է իր ինքնուրոյնութիւնը, մինչև որ բաժանուած է երեք պետութիւններու միջև :

« Իր աւերակներուն մէջ նշմարուած կիսափուլ շէնքերը, կամ իր հին ճարտարապետական և վերջերը նորոգուած նմուշները, իրենց բիւզանդական ոճի նմանութեամբ, արժանի կ'ընեն մեր բիւզանդական ճարտարապետութեան դասերուն մէջ ուսումնասիրելու, ինչպէս նոյն ազգը այնպէս և իրեն գեղարուեստային ճարտարապետական ոճը :

« Այս շէնքերը տարածուած Հայաստանի այս այն կողմերը, որքան որ բիւզանդական ճարտարապետութեան ոճին կը նմանին, սակայն իրենց առանձնայատուկ սեփական նիշերով բոլորովին կը տարբերին անանցիկէն, և այսպէս ճարտարապետական ոճերու շարքին վրայ կ'աւելցնեն նաև խիստ հետաքրքրական ոճ մը « հայկական արուեստ » (l'art arménien) անունով » :

Իրեն ծանօթ քանի մը հայկական եկեղեցիներու նկարագրութիւնները և անոնց բնորոշ յատկութիւնները բացատրելէ յետոյ կը շարունակէ :

« Ուրեմն հայկական եկեղեցիներու սոյն ճարտարապետական ձեւերն իրենց բնածին, յատկանշական և առանձնայատուկ նկարագիրներով իսկ շատ կը նմանին բիւզանդական ճարտարապետութեան քան ուրիշ ազգերու ճարտարապետական ոճերուն : Թէ արդեօք սոյն նմանութիւնը պատմական է թէ փոխանցում, այս հարց մ'է որ լուծելու համար գիտնականներ բաւական զբաղած են :

« Ոմանք կարծած են թէ հայկականը նախապիպ եղած է գոթական ոճին. այս հաւանական է, զի հայ ազգի այն ճարտարապետական նմուշները հաստատապէս կը համոզեն մեզ թէ, հայ ժողովուրդը աւելի շինող, ստեղծող եղած է, իր քանդակները, իր գրմբէթներու այնքան բնականօրէն մոյթերու վրայ հաստատուելը և ուրիշ իր սեփական յատկանիշները օրինակ և փաստեր են իր ուշիմութեան և ինքնաստեղծութեան » :

Վերջին հրատարակութեան մէջ (Manuel d'art byzantin) քանի մը քայլ աւելի յառաջ կ'երթայ հայ արուեստին ինքնուրոյն զարգացումը և անոր օտարներու վրայ ունեցած ազդեցութիւնը ձանձնալուծելու մէջ : Հիացմամբ կը դրուատէ հայ ճարտարապետներու գերագոյն հմտութիւնը և քաղաքակրթութիւնն ու գեղարուեստ տարածելու մէջ հին դարերուն անոնց կատարած մեծ դերը :

Սակայն դժբաղդաբար ուրիշ աղբիւրներէ քաղած թերի և հակասական տեղեկութիւնները, վատ ազդեցութիւն ունեցեր են իր եզրակացութիւններուն վրայ : Անոր մեծ մասամբ ծանօթ չին Հայոց 7-րդ դարէն առաջ կանգնուած յիշատակարանները : Ասկէ գատ կան իրեն օգտուած աղբիւրներու մէջ այնպիսի յիշատակարաններու անուններ և պատկերներ կան որոնք անպայման 7-րդ դարէն առաջ են, սակայն նոյն աղբիւրներու

Տեղիակները զանազան թիւրիմացութիւններով և կամ նուազ հետաքրքրութեան պատճառաւ ժամանակագրական սխալ տեղեկութիւններ արձանագրած են անոնց մասին : Ահա այդ սխալ տեղեկութիւններէն յառաջ եկիր է Ch. Diehlի ալ մէկ թիւր կարծիքը թէ Էջմիածնի կաթողիկէին յատկաձեւը միայն կը պատկանի 5-րդ դարուն իսկ վրայի շէնքը կանգնուած է 7-րդ դարուն :

Ինչպէս իր նախորդներուն, նոյնպէս ալ Ch. Diehlի ուսումնասիրութեան մէջ Հայոց 10-դէն մինչև 14-րդ դարու ճարտարապետութիւնը մէկ ոճ է, մինչդեռ 10-11-րդ դարերու ոճէն անկախ նոր վերածնութիւն է 12-14-րդ դարու ոճը, Տին ոճէն աւանդական գծեր միայն պահելով իր մէջ. ասիկա արդէն ուսումնասիրելի նիւթերու քիչութեան հետեանք է : Այսու հանդերձ պէտք է խոստովանիլ որ նախնիքաց հեղինակներուն մէջ շատ հայտնաբերուած են որոնք կրցած են այսուս խորթութիւնից կերպով դնել և աւելի բնորոշ գոյն տալ հայ ճարտարապետական արուեստին :

Ահա թէ ի՞նչպէս նիւթերու պակասութիւններ վատ ներգործութիւն կ'ունենան լուրջ ուսումնասիրութիւններու վրայ և ի՞նչպէս կը յաւերժանան այդ սխալները ակնուշար պիտանականներու գրչին տակ, ճշմարտութեան գոյն ստանալով :

Ch. Diehlի ազդեցութիւնն մէկը եղած է Ստեփանոսիին : Այս անուանի գիտնականը շատ սիրով փարձած է Արևելքի պատմական արուեստներու ուսումնասիրութեան : Անի մեծ գրական աշխատութիւններ, որոնց մէջ պատկառելի տեղ գրուած են Տին Հայոց ճարտարապետութիւնն ու գեղարուեստը : Բաց ի գոնական յօդուածներէ, ամբողջապէս հայերէնի թարգմանուեցաւ անոր մէկ աշխատութիւնը — «Էջմիածնի Աւետարանը» — Վիեննայի Միջնադարեանց միտրան Է. Բաւնարսու Պիլեզիկձեանի ձեռքով 1892ին :

Այս աշխատութեան մէջ Էջմիածնի վերածնութեանց մասին կարևոր սխալներ մտեր են, որոնք սկսեր են հաստատուն ճշմարտութիւններ դառնալ : Այս և ստոր նման սխալներ, եթէ ոչ մշտնջենապէս, գոնէ երկար ժամանակ, հայ արուեստի պատմութեան լուսաբանութեան համար չարագուշակ հետեանք ունենալին անխուսափելի է :

«Էջմիածնի Աւետարան» ին թարգմանիչը անպայման պէտք էր որ լաւ գիտնար և հասկնար Ստեփանոսիի ակամայ սխալները Էջմիածնի վերածնութիւններու և նորոգութիւններու մասին : Բայց գոնէ թարգմանութեան մէջ առանձին ծանօթութիւնով մը այդ սխալները ուղղելու բարեհաճութիւնը չէ ունեցեր :

Այստեղ կը դնեմ Էջմիածնի մասին Ստեփանոսիի տեսութիւնը Է. Պիլեզիկձեանի հայերէն թարգմանութիւնէն առնելով, ուր պիտի տեսնուին թէ՛ հեղինակին կարծիքները և թէ՛ այլապէս տեղեկութիւնները, ճշգրիտ տեղեկութիւններն հետ համեմատելով :

« Էջմիածնի հիմնարկու կը համարուի նոյն ինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ըստ աւանդութեան՝ Տրդատայ դարձէն ետքը . ուրիմն 302 ին եկեղեցոյ հիմնաքարը դրաւ՝ այն տեղն ուր արքունի պալատան քով Արտեմեայ գլխաւոր մեհեանը կանգնած էր, և ուր Միածինն երևեցաւ իրեն : Այս արդի շինուածին վրայ, որ յայտնապէս նոր շինութիւն է ըստ էական մասանց, այս հնագոյն հիմնաքիւղութեան մնացորդները գոնեղ ջանացած են ոմանք, որոնց մէջ ամենէն յառաջադէմ էրաւ Տիւպուա : Այս գիտնականը չէ թէ միայն միւս ճարտարապետաց պէս յանձն առած է հիմնական որմունքն այն հնագոյնները կարծելու, այլ և հնագոյն եկեղեցին վերակազմելու ջանացած է, որ բոլորովին կամայական է . ինչպէս նաև այն հետեւութիւնը թէ, որովհետև ի բովանդակ Հայոց միայն ասոր վրայ յունական ազդեցութիւն կը կարծէ տեսնել, այս շէնքը Տրդատայ ժամանակի շինութիւնը ըլլայ որ Հռոմ սնած ըլլալով, հռոմէական շինութեան ձևեր մուծանելու ջանացած է կ'ըսէ... :

Եւ այսպէս բովանդակ յատկապէս, ի բաց առեալ հիւսիսակողման, հարաւակողման և արևմտեան կողակաց բնիկ հայկական ձևը, բոլորովին համեմատ է բիւզանդական գմբէթաւոր եկեղեցեաց առաջին կաղապարին որ Յուստինուս ժամանակ սկսաւ գործածուիլ :

« Բայց այս յատկապէս, որ հաւանականագոյնս հնագոյն շինուածքէ մնացած է, չի վերաբերիլ արևմտեան կողմի կարմիր պորփիրական մաս քարէ շինուած զանգակատունը, որ 1654ին շինուած աւելցուած է : Նաև եկեղեցոյն հիմէն վեր եղած շինուածքը նոր է բոլորովին, վասնզի Շահարաւ 1604ին եկեղեցին ու վանքը կործանեց և փրատակները Սպահանու մերձակայ Ջուզա գիւղը տարաւ որ նոր եկեղեցի մը շինուի : Մովսէս վարդապետ որ ետքէն կաթողիկոս եղաւ, նորոգեց 1627ին աւերակները : Իր յաջորդը Փիլիպպոս շարունակեց գործը զոր 1682ին լրացուց Եղիազար կաթողիկոս : Այս ժամանակէն ետքը զոյզն փոփոխութիւնք եղած են միայն » :

(Տր. Յով. Սեչիգովսկի. Էջմիածնի աւետարանը : — Ուսումնասիրութիւն հայկական, ռապիեմական եւ ստորագիտական գեղարուեստի : Թարգմ. Է. Բաւնարսու վարդ. Պիլեզիկձեան : Վիեննա, 1892, երես 3-4 :)

Էջմիածնի վերջին անցքերու տեղեկութեանց ազդեցութիւնն են Առաքել վարդապետ Գաւրի-ժեցւոյ պատմութիւնը և Յովհ. եպ. Շահարա-թունեանի «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի» անուն գիրքը . բայց ասոնց մէջ այնպէս չեն պատմուած իրողութիւնները ինչպէս որ լսեր է Ստեփանոսիին :

Ստեփանոսիի համար ներքին են այդ խեղաթիւրութիւնները քանի որ ինքը հայերէն չգիտեր վերոյիշեալ երկու ազդեցութիւնները անձամբ ուսումնասիրելու համար . այս պարագան դատապարտութիւնը կը մնայ տեղեկատուին որ տգիտաբար մարտութեան մէջ է ձգեր գիտնականը : Թէև Ստեփանոսի ինքն ալ բոլորովին մեղադրանքէ ազատ չէ կարող ըլլալ որ, հիմնուելով իր տեղեկատուին տուած մանրամասնութիւններուն վրայ, չէ հետաքրքրուեր Էջմիածնի տաճարը արուեստագիտորէն քննելու և բոլորովին ի գուր

մեղադրեր և Տիւրքալի նման բարեխիղճ գիտնականին, կամայական համարելով անոր կատարած հին ձևի վերակազմութիւնը: Եթէ լուրջ ուշադրութեամբ քննած ըլլար, անպայման պիտի տեսնէր և համոզուէր որ ոչ միայն Շահարաս հիմնադրած չէ ըրած, այլ մինչև Ծ-րդ դարու շինութենէն ալ մասեր մնացած են պատերուն մէջ: (Այս մասին աւելի ընդարձակ բացատրութիւն տեսնել իմ «Էջմիածնի Տաճար» աշխատութեան մէջ: Տպագր. Թիֆլիս 1910, էրես 3-5):

Թէև Շահարաս մտածեր է պահ մը Էջմիածինը ամբողջովին քանդել և անոր քարերով նոր Էջմիածին շինել, Պարսկաստանի Զուլայ քաղաքին մէջ, որպէս զի Հայոց սէրը Հայաստանէն կտրելով Պարսկաստանի հետ կապէ, սակայն որեւէ պատճառներով այդ նպատակը անիրագործելի մնացած է: Ես այդ պատճառներուն վրայ առանց կանգնելու կը քաղեմ՝ Առաքել պատմագրի տաճարին քանդուելուն և վերաշինութիւններուն վերաբերեալ հատուածները:

« Իսկ Թահմազ Դուլի խանն յետ Լուսաւորջի աջոյն առաքելոյ, բազում ջանիւ հողոյր զքարինսն առաքել, վասն որոյ ինքն յալովոք զօրականօք զնայ ի սուրբ Էջմիածին և զեղանաւոր քարինսն Էջմիածնի քահեալ հանին ի տեղոյն, որք են այսօրիք. սուրբ սեղանն յորոյ վերայ պատարագն սուրբ մատչէր, և այս սեղանայս սիւնն. Բրիտտոսի իրման տեղեաց քարն, աւազանն, մէկ քար ի կողման հարաւային աստիճանի բեմին, մէկ քար ի կողման հիւսիսայնոյ աստիճանի բեմին, վասն զի աւագ բեմի աստիճանքն յերկուց կողմանց են, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, չորս քար ի չորից անկեանց եկեղեցւոյն, ի դրաց կողմանէ. երկու քարէ մտնան [աշտանակ] որ մեծ իւզաբերից մտ՝ զնեն ի մէջն և վառեն, երեք այլ ուրիշ քարինք ի սալայտակ քարանց բեմին, ընդ ամեն տան և հինգ քար:»

(Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ: Վաղարշապատ, 1896. զր. ժ. էրես 212):

Ինչպէս կը տեսնուի Առաքել պատմագրի այս հատուածէն, Շահարաս բաւականացեր է տանն և հինգ քար միայն քանդել տալով: Իսկ ինչ կը վերաբերի Մովսէս վարդապետի նորոգութեան, դարձեալ կարելի է տեսնել նոյն պատմութեան ԻԴ. գլուխին մէջ, որ Շահարասի արշաւանքէն յետոյ ալ կանգուն էին եկեղեցւոյ պատերը, անվնաս էին պատուհանները՝ միայն առանց վանդակի. դրօի կողմէն քանդուած էր տանիքի սալայտակը, պատերէն քարեր էին թափած, գմբէթին գլուխը վնասուած էր:

Եւ մեծամեծ լուսամուտքն զոր ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի... իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթողիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն թափեալք և որմոց յատակաց վէմքն փշրեալ և ծակտեալ:

Յետոյ առանձնապէս ցոյց կուտայ եկեղեցւոյ նորոգուած մասերը -

« Յետ այսօրիկ զեկեղեցւոյ գմբէթի տանիքն նորոգեցին, քանդի ուլերն քանդեալ և ի տեղոյն ի բաց ստեալք էին »:

Եկեղեցւոյ այս կանգուն գրութիւնը Շահարասի արշաւանքէն յետոյ, տեսաւ նաև Տիւրքալի վերամնացի ուղևորը 1604 թուականին, որուն մասին Հ. Ղ. Վ. Ալիշան կը գրէ իր «Այրարատ» երկասիրութեան մէջ. « Եւ խնդրեալ [Տիւրքալի] հրաման ի Շահէն եկն ի քննին Էջմիածնի զոր և ասէ ի Թուրքաց կոչել [Իւչ քիլիսէ] երեք եկեղեցիս հինս, երկուքն աւերեալք, մեծագոյնն շէն և երբեմն մեծ ուխտատեղի »: (Հ. Ղ. Վ. Ալիշան, «Այրարատ». էրես 322):

Ասոնցմէ յետոյ եղած շինութիւններ բացառապէս կը վերաբերին զանգակատան, որն որ Փիլիպպոս կաթողիկոս հիմնարկեց 1658 թուականին հայիւ թէ գեանայարկի չորս մոյկերը միացնող աղեղները նոյն տարին կապուած էին, ձմեռը վրայ հասաւ, և գարնան ալ Փիլիպպոս կաթողիկոսը վախճանեցաւ:

Արովհետև Փիլիպպոս կաթողիկոս զանգակատան հիմնարկութիւնը կատարած էր առանց Երևանի խանին հաճութեան, իր մեռնելէն յետոյ, խանը արգելք եղաւ շինութեան շարունակութեանը՝ մինչև իրեն պաշտօնանկ ըլլալը: Յաջորդ խանի օրով Յակոբ կաթողիկոս հրամայեց ստացաւ և շինութեան շարունակութիւնը սկսան 1657 թուականին յուլիս ամսուն: Շինութեան վերջուորութեան մասին ալ հետեւեալն է Առաքել վարդապետի գրածը.

« Եւ եղև կատարումն զանգակատանն ԹՃԷ (1658) թուին և ի տօնի խաչվարացին օրհնեցին զխան որ ի պուլս զանգակատանն և քակեցին վառկէլէն: Արդ ստոյգ պատմութիւն զանգակատանն այս է, թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլապէս են »:

(Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ. զր. ԻՅ էրես 342):

Գաղով եղիպար կաթողիկոսին 1682 թուականին կատարած շինութիւններուն, անիկա աւելցուցեր է արտաքուստ երեք absideներու վրայ եղած երեք փոքրիկ զանգակատանները և ներսէն հարաւային absideին մէջի պատարագի սեղանը: (Յովն. եպ. Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի, հաս. Ա. 1842 էրես 29):

Միայն պէտք է գիտնալ որ Մովսէս կաթողիկոսի օրով թէև ցոյց տրուած է թէ գմբէթի արտաքին երեսէն քարեր թափած էին և կաթողիկէին գլուխը միայն քանդուած էր, սակայն գմբէթի շինութեան ոճը ցոյց կուտայ որ, եթէ ոչ ամբողջ գմբէթը, գոնէ թմբուկի արտաքին երեսը շուրջանակի նոր ճաշակով նորոգուած է, որով ստացեր է այսօրուան պատկերը. բաց թէ իսկապէս Մովսէսի գո՞րծն է թէ յետագայ կաթողիկոսներէն մէկուն, այդ մասին առ այժմ ոչինչ չեմ կարող վճռել:

Այժմ համեմատելով այս ստոյգ տեղեկութիւնները Մաշիգովսկիի տուած տեղեկութիւններու հետ, կը տեսնուի թէ անոր տեղեկատուն ի՞նչ անհեթեթ սխալներու մէջ ձգեր է զինքը, որոնց վրայ հիմնուած ինքն ալ սխալ եզրակացութիւններու հասած է:

Ավստոս որ Մաշիգովսկի իր տեղեկատուին

անունը յիշատակելու բարեհաճութիւնը չէ ունեցեր, որպէս զի այդ կարգի տեղեկատուներ Տրապարակաւ ստանային իրենց արժանաւոր վարձատրութիւնը :

Ստոյգ է որ Էջմիածնի տաճարին պատերը շատ նորագութիւններու ենթարկուելի են, սակայն նախնական 5-րդ և 7-րդ դարու շինութիւններէն այնպիսի մասեր մնացած են որոնք յստակ կերպով կ'արդարացնեն իրենց վրայ նոյն դարերու ոճերը, և այդ մասերու քննութեամբ շատ բան կը պարզուէր Ստշիգովսկիի նման հմուտ գիտնականին :

* * *

Յուսարով որ մեծ բաւականութիւն կը պատճառեմ պատմական հայ արուեստներով զբաղողներուն, այստեղ քաղաւթորէն կը դնեմ մեծանուն բիւզանդագէտ Ch. Diehlի նորագոյն տեսութիւնները, որոնք մինչև այսօր դրուութիւն ունեցող շատ մը կարծիքներ յիշաւորութիւն բնութիւնը ունին: Ի հարկէ նաև պիտի աւելցնեմ ուղղումներ հեղինակին ստացած սխալ տեղեկութիւններու մասին՝ իմ որոշ տեսութիւններովս հանդերձ: Ասով թերևս առիթ ըլլայ վերստին անդրադառնալու նոյն նիւթերու և աւելի լուսաբանուին անստոյգ մնացած կէտերու

Ch. Diehl հայ ճարտարապետութեան շատ ինքնուրոյն և անոր 7-րդ դարէն մինչև 10-րդ դար Հայաստանի միայն յատուկ բնորոշ գծերը տեսնելով հանդերձ, վարանման մէջ կը մնայ արտաքին ազդեցութիւններու մասին: Աւստի, պատմականօրէն բացատրելով, բիւզանդականի առաւելագոյն ներգործութեամբ կազմուած ըլլալը հաւանական կը համարի, իբրև փաստ ներկայացնելով Հայոց Բիւզանդիայի հետ ունեցած սերտ յարաբերութիւնը և քանի մը կաթողիկոսներու ալ նոյն դարերուն բիւզանդական կրթութիւն ստացած ըլլալը: Ա. յօդուածը կ'սկսի այսպէս.

« Բայց եթէ Բիւզանդիայի արուեստը 7-րդ դարու կէսէն յետոյ իր ծագում առած երկրին մէջ չի վերանորոգուեցաւ, սակայն իր ստեղծած մեթոտներու գերազանցութեամբ դուրսը պահուեցաւ անոր գորեղ ազդեցութիւնը՝ որ 6-րդ դարու սկիզբէն սկսած էր գործադրուիլ բոլոր քրիստոնէայ երկիրներու մէջ: Հոսմը արեւմուտքի համար շուտով պիտի կազմէր անոր փայլուն օրինակները: Այս գործունէութեան մէկ ուրիշ ոչ նուազ ապացոյցը կը տեսնուի Արևելքի մէջ, Հայաստան: Հայաստան իր աշխարհագրական դիրքով, շատ կանուխ մասնաւոր ուղարկութեան արժանի վիճակի մը մէջ գտնուեցաւ: Սիւրիայի, Միջագետքի և արևելեան Պարսկաստանի հետ յաճախ յարաբերութիւն պահպանելով, բնականաբար պէտք էր որ անոնցմէ օգտակար դասեր առնէր: Միւս կողմանէ Բիւզանդիայի հետ քաղաքական սերտ յարաբերութիւնը զինքը յունական ազդեցութեան կ'ենթարկէր: Քանի մը կաթողիկոսներ, որոնք 5-րդ և 7-րդ դարերու միջոցին Հայոց եկեղեցին կառավարեցին, Բիւզանդիանի մէջ կրթութիւն ստացած էին:

Յուսարմիանստի ճարտարապետներն ալ բազմաթիւ շէնքեր կանգնեցին Հայաստանի մէջ, որոնք կարող էին իբրև օրինակ ծառայել: Այս երկու երկիրներուն, Յունաց և Արևելքի իրարու հետ ունեցած շփումներէն պէտք էր որ ծնէր ինքնուրոյն և հետաքրքրական արուեստ մը:

« Ապահովաբար այս արուեստը դեռ լաւ ճանչցուած չէ, և շատ քիչ հետազոտուած, անոր շուրջը ծագած շատ մը խնդիրներ տակաւին վճռուելէ հետո են: Այլ սակայն արժէ որ քննուի և աշխատուի որոշել անոր յատկութիւնն ու ծագումը: Ստուգիւ հայ շինողներ անհամեմատ կարող արուեստագէտներ եղած են: Քարաշատ երկրի մը մէջ ապրելով, անօրինակ ճարտիկութեամբ զարգացուցէր են քարահատութեան արհեստը: Իբրև անխնայ ճանապարհորդներ և անդալար տեղափոխուողներ, շատ հեռու տարեր են իրենց մեթոտները: 9-րդ և 10-րդ դարերուն բիւզանդական արուեստի վերածնութեան վրայ, ոչ նուազ նշանաւոր տեղ բռնելու կոչուած էր Հայաստանի արուեստը »:

Այս ընդհանուր տեսութիւնէն յետոյ, հեղինակը սկսած է կարծիքներ յայտնել իրեն ծանօթ 7-րդ դարու քանի մը հայկական յիշատակարաններու վրայ:

« Արդ, 7-րդ դարէն սկսեալ Հայերը մեծ գործունէութեամբ աշխատած կ'երևին, այս թուականներէն շատ մը յիշատակարաններ պահուած են՝ յոննագոյն նորագութիւններով բաւական այլալուծ . սակայն անոնց մէջ հին յատակագծերը ըստ բաւականի որոշ են և հնարաւորութիւն կուտան ճարտարապետական ոճերու քննադատութեան »:

Էջմիածնի մասին խօսելով, շատ հետաքրքրական կը գտնէ անոր յատակաձևը. ճիշդ տեղեկութիւններ ունի 5-րդ դարուն կանգնուած և 7-րդ դարուն նորոգուած ըլլալուն վրայ. սակայն ինչպէս կ'երևի համոզուած է որ 7-րդ դարուն հիմն ի վեր նորոգուած է 5-րդ դարու յատակագծին վրայ: Ստշիգովսկիի համակարծիք ըլլալ կը թուի յատակագծին լուսաւորչաւանդ ձևը ըլլալուն:

Հռիփսիմէի վանքին համար կ'ըսէ թէ սա կը ներկայացնէ կաթողիկէին բոլորովն նման յարակաթմ մը. ինձ անհասկնալի եղաւ թէ ինչո՞վ այդքան նմանութիւն գտած է հեղինակը Էջմիածնի և Հռիփսիմէի եկեղեցիներուն մէջ: Հռիփսիմէի տասնևվեց երեսանի գմբէթի վրայ, Գրեգոր Նիւսացու նկարագրած հռչակաւոր ութանկիւնի եկեղեցւոյ ոճը կը տեսնէ, սակայն կոնաձև ծածքին համար կարծիք կը յայտնէ թէ շատ հին ժամանակներէ հետէ ասիական ճարտարապետութեան յատուկ ոճ է:

Գայիանէի վանքին ալ յատակագիծը նախնականը համարելով մնացած մասերը 17րդ դարու վերաշինութիւն կը նկատէ: Հակառակ ուրիշ շէնքերու մասին ունեցած ժամանակագրական ստոյգ տեղեկութիւններու՝ թիւրիմացութեան մէջ ինկեր է Գայիանէի վանքի մասին:

Գայիանէի վանքն ալ նորոգեր է Փիլիպպոս կաթողիկոս 1632 թուականին ըստ արձանագրու-

Թեան . սակայն Առաքել Գավրիէիցին այս եկեղեցոյ վիճակն ալ կը նկարագրէ նախ քան Փիլիպպոս կաթողիկոսի նկարագրութիւնը և ի՞նչ մասեր նորոգուած ըլլալը : Չորս պատերը և մէջի սիւները կանգուն են եղած . փլած է եղեր տանիքը և գմբէթը , արտաքին պատերուն վրայ մասնակի նորոգութիւններ միայն եղած , են որոնց շնորհիւ այսօր տակաւին մեծ մասամբ կը մնան 7-րդ դարու պատերը իրենց բնորոշ արհեստագործութեամբ և ժամանակին յատուկ զարդաքանդակներով , պատուհաններով և պակներով : Ահաւասիկ Առաքել վարդապետի վկայութիւնը Գայիանէի վանքի 17-րդ դարու վիճակին և նորոգութիւններու մասին .

« Եւ յետ ամենայն շինուածոցն Էջմիածնի , զոր սուրբ հայրապետն Փիլիպպոս արար , այնուհետև ձեռն ի գործ էարկ զի և զտաճարս սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեացէ . . . : Բայց սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր , զի տանիքն բովանդակ իջեալ էր , միայն շուրջանակի որմունք և չորքերն սիւնք կային կանգուն . գլուխն ի բաց և յատակք որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ . որոց արար նորոգման սկիզբն կաթողիկոսն աէր Փիլիպպոս , մեծաիրձ կարօտիւ և ջանիւ , և բազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաբէն ի հիմանց մինչև ցգագաթն գմբէթին » : (Առաքել վարդ. գլ. 16) :

Այժմեան շէնքը դիտելով ալ շատ պարզ կը տեսնուի որ Գայիանէի վանքին վրայ նորագոյն է միայն գմբէթը և արևմտեան կողմին կից շինուած սիւնապարզ գաւիթը : Այս գաւիթն ալ 1688 թուականին շիներ է Եղիազար կաթողիկոսը :

Համեմատաբար աւելի հետաքրքրուած է հեղինակը Ջուարթնոց եկեղեցիով , գրքին մէջ գրած է թերի յատակագիծ մը , հաւանականաբար Ստչիգովսկիի մէկ աշխատութիւնէն արտատպուած : Նկարագրական տեղեկութիւններ բաւարար են , բայց արամագծին երկայնութիւնը սխալմամբ 39 մետր գրուած է . ուղիղ չափը պէտք է ըլլայ 35,75 մետր : Արևելեան կողմին կպած քառակուսի բաժանումը մատուռ է համարած , որ մատուռ չէ այլ պարզապէս սրբազան անօթներու և այլ եկեղեցական իրերու յատուկ պահարան . չգիտեմ թէ ի՞նչ եզրակացուցեր է թէ մեկ ուրիշին կարծիքով ղեկավարուեր է : Գալով իր մասնաւոր տեսութեան , հետեւեալ կարծիքը կը յայտնէ .

« Հիմնարկութեան թուականը կարելի է ճշդիւ որոշել : Այս եկեղեցին կանգնուեցաւ Ներսէս Գ կաթողիկոսի ձեռքով որ զահակալեց 640էն 666, որուն փակագիր արձանագրութիւնները կան եկեղեցոյ խոյակներուն վրայ : Որովհետև ըստ Սէբէոսի այս Ներսէսը ի մանկութենէ սնած էր յունական երկիրներու մէջ , սորված էր նաև Բիւզանդացոյ լեզուն ու գրականութիւնը : Իրաց այս վիճակին մէջ , ամենայն հաւանականութեամբ , յոյն վարպետներ գործածեց այս յիշատակարանին շինութեան ժամանակ : Սիւները կը կրեն իրենց վրայ կողովաձև խոյակներ յոնիական խոյղներով զուտ բիւզանդական : Բայց

միւս կողմանէ յատակագիծը մարդը արեւելեան է և կը կապուի Ասիական և Սիւրիական բազմաթիւ եկեղեցիներու հետ : Այս յատկութեամբ և իր մէջ երեցող աղղեցութիւններու խառնուրդով , շէնքը շատ հետաքրքրական է : Ստչիգովսկիի կարծիքով , հայոց Լուսաւորջի վկայաբանութիւնը արտաքոյ կարգի կարողութիւն ունի արեւելեան քրիստոնէից պատմութեան համար , հետեւաբար նաև արևմուտքի համար :

Անոր ներկայացուցած օրինակը յաճախ կրկնուած կ'երևի , օրինակի համար *Saint Laurent de Milan* շատ մօտ նմանութիւն ցոյց կուտայ » :

Ստուգիւ Ներսէսի ստացած յունական կրթութիւնը և զէպ ի քաղկեդոնականութիւն ունեցած հալուածը չէին կարող չաղդել անոր ճաշակին վրայ : Ջուարթնոցի մէջ հայ ճարտարագիտութեան զարգացման ընդհանուր ուղղութիւնէն շեղող օտար ոճերու խառնուրդներ շատ կան , այնու ամենայնիւ անոր յատակագիծ ընդհանուր ձևը և elevationի մէջ գործ դրուած անօրինակ ծրարիքը տակաւին եզական ըլլալ կը թուի՝ միմիայն Հայաստանի յատուկ , քանի որ նայն ծրագրով շինուած նախորդ մը չէ երևցած ոչ մէկ երկրի մէջ : Ճիշդ է որ *Saint Laurent*ի հետ բաղդատելով , առաջին տպաւորութեամբ իրարու նման կ'երևին , սակայն երբ քիչ մը աւելի յառաջ տանիք բաղդատական քննութիւնը , տպաւորութիւնը անհունապէս կը փոխուի : *Saint Laurent* եթէ Ջուարթնոցի նման կիսաբոլորակ վերջացած թեկերով խաչաձև ներքին սիւնապարզ բաժանում մը ունի , արտաքուստ ևս ներքին խաչաձևին զուգահեռաբար կրկնուած է միւսնոյն խաչաձևը , որով շինարարական գործողութիւնը անհունապէս կը դիւրանայ առանց ճարտարագիտին ունէ մտահոգութիւն պատճառելու փանդներու կամ արկածներու մասին : Մինչդեռ Ջուարթնոցի մէջ արտաքին բոլորակը ներքին խաչաձևին հետ ձուլուելու և կրնակ գմբէթով շէնքը պակեղու համար ճարտարագիտին գործ գրած հանձարիկ և նրբամիտ միջոցներուն քով շատ կը փոքրանայ *Saint Laurent*ի ճարտարագիտը : Պէտք է մօտէն քննել և տեսնել թէ երկու տարբեր յատակագիծեր իրարու մէջ պատշաճեցնելու համար՝ ո՞րչափ ծանրութեանց ճնշում սպառնացող կէտեր յառաջ եկեր է Ջուարթնոցի մէջ և ի՞նչ հեռատես միջոցներով ճնշումներէ յառաջ գալիք փոսնգը չեղորացուցեր է անոր ճարտարագիտը : Այնքան ապահով և հաստատուն շինուած էր որ առ նուագն երեք հարիւր տարի կանգուն մնացեր է այդ շէնքը , և վերջն ալ պիտուիներու ժամանակ որոշ տեսնուեցաւ թէ երկրաշարժով մը կործաներ է յանկարծ ձուլուելով և չորս կողմին վրայ համանման բեկորներ թափուելով : Թէև նշաններ ալ երևցան որ նախ քան երկրաշարժը , բարբարոս ձեռքեր պատերու ստորին մասերէն քարեր քանդեր էին , աստիճաններէն շատերը հաներ էին և շուրջը քանդակուած մարդոց պատկերներու երեսները տաշեր էին : Այս պարագան ալ ոչ նուազ նպաստեր և յանկարծական փրուզման երկրաշարժի մը ժամանակ

Հեթանոսական դարերէն սկսած մինչև մեր օրերը բազմաթիւ շէնքեր կան կանգնուած բուրակ կամ խաչաձև Արևելքի և Արևմուտքի մէջ: Սակայն այս երկու տարբեր ձևերու, այսինքն բոլորակի և խաչաձևի այնքան վայելչօրէն և նրբամտօրէն ի մի ձուլումը առ այժմ կը մնայ իբրև հայկական ստեղծագործութիւն և միշտ պատիւ պիտի բերէ շինողին ալ շինել սուտողին ալ և այդ տեսակ պրանչելիքներ կերտել գիտցող հազուագիւտ հանձարներ իր ծոցին մէջ զարգացնող ցեղին ալ:

Իսկ երբ հետզհետէ գիտնականներ էջմիածնի և Զուարթնոցի ներքինին նման խաչաձև յատակագծերու ծննդավայրը Հայաստանը ըլլալուն համոզիչ փաստեր կը գտնեն, այն տեսնանքամ մը ևս Զուարթնոցի յատակագիծը զուտ հայկական ոճ և ստեղծագործութիւն ըլլալը հաստատուելէն զատ, հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ փառաւոր էջ մ'ալ կը բացուի ընդհանուր արուեստից պատմութեան մէջ, և մինչև ցարդ թիւրիմացութեամբ յունական խաչաձև անուանուած ոճը հայկական խաչաձև անուանով կը ծանցուի ապագայ գիտական աշխարհին մէջ: Աւելցնենք ստոր վրայ Զուարթնոցի կրկնայարկ գմբէթաւորումը՝ որուն ուրիշ օրինակը ո՛չ մէկ տեղ չի գտնուելէն զատ, Հայաստանի մէջ երեք միանման օրինակներ միանգամայն գտնուեցան — Զուարթնոց, Անիի գագկաշէն Ս. Գրիգոր և Պանոսի եկեղեցին: Չորրորդ մանրանկար մը ևս կայ այս երեք մեծերուն որ բարեբաղդաբար սակաւին կանգուն՝ բայց դժբաղդաբար ոչ զքի ուշադրութեան չարժանացած, այս մանրանկարը Անիի պարիսպներէն գուրս, հայ ճարտարապետութեան գոհարներէն մէկը, Հովիւի եկեղեցի բտուածն է:

Չեմ գիտեր որչափ հաւանական է Ch. Diehlի կարծիքը Զուարթնոցի մէջ Ներսէս շինողին յոյն վարպետներ գործածած ըլլալու մասին: Հայաստանի մէջ, թէ՛ շինարարական և թէ՛ գեղարուեստական տեսակետով 7-րդ դարը այնպիսի բեզմաւոր շրջան է որ երբեք պէտք պիտի չզգացուէր օտարազգի ճարտարապետներու մանաւանդ Զուարթնոցի օտարներու բողոքովին անձանօթ և անսովոր կազմութիւնը շատ կը հեռացնէ զինք օտար ճարտարապետներու գործ համարուելէ:

Զուարթնոցի մէջ ի՞նչ մասեր կան որոնք յոյն վարպետներու գործ կարելի է համարիլ, անոնք ալ գրեթէ կապ չունին եկեղեցւոյ ընդհանուր ճարտարապետութեան հետ: Այդ մասերը պէտք է համարիլ անոր մէջ եղած նկարները և մոզայիք վարդարանքները: Ահա այստեղ է Ներսէսի յունական ծաշակի և քաղկեդոնականութեան ուղիղ ազդեցութիւնը:

Յայտնի է որ մինչև 10-րդ դար Հայերը պատկերամարտեր էին. Ահհան կաթողիկոսը Անիէն հալածեցին եկեղեցւոյ սեղանին վրայ պատկեր գրած ըլլալուն համար: Մեկ հասած մինչև 10-11-րդ դարու եկեղեցիներն ալ այդ կ'ապացուցանեն իրենց վերին աստիճանի պար-

զութեամբ. նոյն իսկ 13-14րդ դարու եկեղեցիներէն շատերն ալ նկարազարդուած չեն: Հետեւաբար պատկերահալած երկրի մը մէջ չէր կարող պատկերահանութեան արուեստն ալ զարգանալ: Հազիւ քանի մը հատուկատոր տեղեկութիւններ ունինք պատմութեանէն որ 10րդ դարու վերջերուն մէկ երկու եկեղեցիներ նկարազարդուած են: Աւստի չէ կարելի հաւատալ որ 7րդ դարուն բաց ի Զուարթնոց եկեղեցիէն և կամ նոյն դարուն քաղկեդոնի կաթողիկոսներու շինած եկեղեցիներէն զատ ուրիշ եկեղեցիներու մէջ պատկերներ գտնուէին ներկով կամ մոզայիք նկարուած: Մանաւանդ մոզայիք պատկերներ շինելու արուեստը բնաւ չէր կրնար գոյութիւն ունենալ Հայաստանի մէջ, և Ներսէս Գ ի եկեղեցին իմ կարծիքով միակ բացառութիւն է իր մոզայիքներով: Ահա այստեղ էր որ Շինողը անկասկած պէտք պիտի ունենար բիւզանդացի կամ յոյն վարպետներու:

Նմանօրինակ դէպք մը կը պատմէ Ստեփաննոս Օրպէլեան որ պարզ կը ցուցնէ թէ 10րդ դարուն Հայաստանի մէջ կարող նկարիչներ գտնել գժուար էր և թէ պէտք եղած ժամանակ ուրիշ երկիրներէ բերել կուտային:

Միւսնայ Թահոր եպիսկոպոսը Տաթևի վանքը ամբողջովին շինելէ ետքը, կ'ըսէ Ս. Օրպէլեան, « ետ անէլ նկարիչս և զաւուախս որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ Փռանդ ազգաւ » . . . Պատմութիւն Գանակի Սիսական, Թիֆլիս 1911 երես 256) Թէև կը գրէ նաև թէ նոյն ժամանակին Տաթևի վանքին մէջ սկսեր էին նկարչութեան դասեր աւանդել, սակայն կը կարծեմ որ այդ դասերը մանրանկարչութեան ճիւղին կը վերաբերէին ձեռագիրներ զարգարելու համար:

Հայոց կրօնական յիշատակարաններուն վրայ օտար ազդեցութիւնները անշիփօթ որոշելու համար, պէտք է planներ և élévationներ առանձին առանձին քննել, որովհետև ասոնք շատ անգամ իրարմէ անկախ տարբեր ազդեցութիւններու ենթարկուած են: Հայ եկեղեցիներու ոճը ուսումնասիրողներ յաճախ շիփօթ եզրակացութիւններ ունեցած են մէկուն կամ միւսին վրայ դատելով: Եկեղեցիներու յատակագծերը բնաւ պէտք չէ որ կապուին շինարարական կամ գեղարուեստական ոճերու հետ, կրօնական վարդապետութիւնները և ծէսերը աւելի դեր կը կատարեն յատակագծերու համաչափութեանց և դասաւորութեանց մէջ քան արուեստն ու ծաշակը: Աւստի Հայոց հնագոյն եկեղեցիներու յատակագծային ոճերուն մէջ որոնք 7րդ էն մինչև 14րդ դար միշտ ձևափոխութեան ենթարկուել են, ճարտարապետականէ կամ գեղարուեստականէ աւելի պէտք է յոյն կամ լատին կրօնական ազդեցութեանց հետքերը փնտաւել վասն զի յոյն կամ լատին կրօնական վարդապետութեանց պարբերաբար Հայոց եկեղեցւոյն մէջ մուտ գտնելը որոշ ազդեցութիւններ ունեցեր են յատակաձևերու վրայ:

Զուարթնոցի մէջ, խորանը արևելեան պատէն

հետո ըլլալը և անոր հաւեր հասարակ ժողովրդին համար տեղ գտնուիլը, օտար ազդեցութեան մը հետքը ենթադրելի կուտայ, որուն արմատը պէտք է փնտռել մինչև 7րդ դար կեդրոնական սրբարան ունենալու համար եղած մրցումներուն մէջ: Յոյն և լատին շատ մը եկեղեցիներ աւելի պատշաճ համարած էին կեդրոնական սրբարանը, նախնական առաքելական ժողովարահներու յատկութեանց վրայ հիմնուած: Հռոմի Ս. Ստեփաննոսի բոլորակ եկեղեցին, Գրիգոր Նազիանզացիի, Գր. Նիւսացիի եկեղեցիները բոլորակ կամ բազմանկիւնի էին և կեդրոնական սրբարան ունէին: Չուարթնոցը այս կեդրոնական սրբարանով եկեղեցիներու մօտաւոր այլազանութիւնը կը թուի: Նոյնպէս 10-11րդ դարերէն սկսեալ Հայոց եկեղեցիներու մէջ խորանաւոր աւանդատուններու բազմապէս և քանի մը եկեղեցիներու արեւմտեան կողմին կից սիւնազարդ ծածկոյթներ (portique) շինուիլը, պարզապէս արեւմտեան ազդեցութիւններ են կրօնական վարդապետութեանց միջոցաւ ներմուծուած: Սակայն պէտք չէ շփոթել 10-11րդ դարերուն նոյնպէս Հայոց եկեղեցիներուն կից շինուած գաւիթ կամ ժամատուն անուամբ սիւնազարդ ընդարձակ սրահները portiqueներու և արեւմտեան եկեղեցիներու porche կամ narthex ըսուած բաժանումներու հետ: Հայոց եկեղեցիներուն կցուած ժամատուններ և գաւիթներ թէև ծագում առին Նիւիկիոյ և Փոքր-Ասիոյ սահմաններուն մէջ, սակայն բացառապէս հայերն էին շինողները և ունէին իրենց հարկեցուցիչ պատճառները: Այս մասին պիտի հրատարակեմ ուրիշ ուսումնասիրութիւն մը, որուն մէջ մանրամասն պիտի տեսնուի անոր պատճառները, ժամանակը և նպատակները:

Մինչև այժմ ուսումնասիրութեան համար հաւաքուած նիւթերն ալ շատ անկարգ և անկանոն կերպով հաւաքուած են: Ուէ յիշատակարանի մը յատակագիծը առնուած է առանց անոր ճարտարապետական մանրամասնութիւններուն, երբեմն ալ առանց յատակագծի յաջող կամ անյաջող լուսանկարներ միայն առնուած են, այն ալ առանց ընտրութիւն կատարելու կարևոր կողմերուն վրայ. բայց ինչ որ ալ ըլլայ, շատ դժուար է ուէ ինչրի լուծում տալ միմիայն ընդհանուր տեսքի լուսանկարներով առանց մանրամասնութիւններու:

Ինչպէս կ'երևի թէ՛ Հայերուս պարտականութիւն եղող և թէ՛ անհունապէս կարևոր այս գործն ալ եւրոպացի գիտնականները պիտի կատարեն անընդհատ նորանոր և մանրամասն նիւթեր հաւաքելով: Պարզապէս անոնք միայն հետաքրքրուած են հայ ճարտարապետութիւնը մօտէն ճանչնալու և ապագայ արուեստներուն մէջ անոր դիրքը և տեսակը որոշելու համար: Երբ և իցէ հայ ճարտարապետութիւնը ոչ այլոքան հետաքրքրական եղած էր և ոչ ալ գիտնականներու համար վէճի նիւթ, որ հետազոտելու աւելի լուսաբանուելու և ճոխանալու պագագայ կը խոտանայ: Չգիտեմ մեզ համար ո՞րչափ պատուա-

բեր է այս պարագան, այնու ամենայնիւ ճշմարտութիւն է որ այս ցանկալի յաւաքգիմութիւնը դարձեալ պարտական ենք միմիայն եւրոպացի գիտնականներու ջանքերուն՝ առանց մեր կողմանէ մագաչափ աջակցելու անոնց:

Ինչպէս իր նախորդներէն շատերը նոյնպէս ալ Ch. Diehl գուտ օտար ազդեցութիւններու վրայ հիմնուած, սակայն աւելի սրատես և մանրագիտին քննութեամբ, նոր գոյն և նոր կերպարանք կուտայ հայ արուեստին, նախորդներէն մեծ մասամբ տարբեր, և որ աւելին է՝ ազդեցութեանց խորնդիրը ճշդիւ որոշելու մէջ ինքը նախաձեռնող և լրջօրէն առաջին քայլերը առնողն է, երբեմն միանալով Սաչիգոփսկիին հետ և երբեմն անկէջ անկախ ճանապարհներ փորձելով: Այս մասին շատ հաճելի է լսել զինքը:

« Բայց հայկական յիշատակարաններու նկատմամբ էական խնդիր մը մէջտեղ կուգայ, թէ անոնք երբ և իցէ բան մը պարտական են բիւզանդական արուեստին թէ ընդհանուրապէս Հայաստանն էր որ ուսումներ բերաւ Բիւզանդիոն: Այս շատ վիճելի խնդիրը տակաւին չէ գտած իր վերջնական լուծումը: Սոչիգոփսկի առաջ լիովին կ'ընդունէր որ, Հայոց 5րդ էն մինչև 7րդ դարու արուեստը, իր ամբողջական քաղաքակրթութեան նման կախում ունէր բիւզանդականէն և այս տեսութեանց հիման վրայ ապացոյցներ ներկայացնելով ինքը մինակ կը վճռէր թէ անհերքելի կը թուին: Անկէջ յետոյ անկախ փոխած է այս բոլորը և կը յայտարարէ այսօր թէ բիւզանդական արուեստն է որ ընդհանրապէս մեծապէս պարտական է Հայաստանին, որն որ Արեւելքի ազդեցութեան տակ շատ կանուխ ստեղծեց իր նահանգներուն մէջ ինքնուրոյն արուեստ մը և ճարտարապետական յատուկ ձևեր, որոնք անկէ փոխազդեցան 7րդ էն 10րդ դարաշրջաններու մէջտեղ, մէկ կողմէն շրջան ընելով բիւզանդական տիրապետութեան երկիրները՝ Արաստանի, Ռուսաստանի և հարաւային Սլաւներու մէջ, միւս կողմանէ Բիւզանդիոն հաստատուող իշխանական սոցմի մը շնորհիւ մինչև կայսերական մայրաքաղաքը Բիւզանդիոն: Հայաստանէն էր որ պիտի գար յունական խաչաձև յատակագծի ոճը և նմանապէս Վասիլ Ա.ի կանգնած նոր եկեղեցւոյ ձևը: Այս ամենուն մէջ կը մնայ խոստովանիլ որ զեռ շատ բան անստոյգ է և ենթադրութիւն: Բայց ինչ որ ալ ըլլայ, վերին աստիճան հետաքրքրական է տեսնել թէ Հայաստանի մէջ ի՞նչպէս ձևակերպուեցան արեւելեան քրիստոնեաներէն ծրագրուած կարգ մը շինութեանց ոճեր »:

Այստեղ կ'եզրափակուի Ch. Diehl-ի Հայոց 7րդ դարէն մինչև 10րդ դարու հայ ճարտարապետութեան մասին տեսութիւնը, որ և գրքին մէջ բռնած է 313 էն մինչև 319 երեսները, որոնցմէ քաղցիկ եւ մասնաւոր յապաւումներով:

Բ. յօդուածին մէջ (երես 441-447) ի սկզբան համեմատութիւններ կը կատարէ Հայոց եկեղեցիներու և Արաց ու բիւզանդական եկեղեցիներու միջև: Յետոյ անդրադառնալով մասնաւորապէս հայ յիշատակարաններու վրայ՝ կը յիշէ Աղթամարի եկեղեցին, Անիի շէնքերէն՝ Վաթի-

ղիկէն, Ս. Գրիգորն (Ազուղամբնց) Փրկիչ և Լուսաւորիչ (Նախշի) եկեղեցիները: Ծանօթ է անոր նաև Հուսումնի վանքը որ սխալմամբ Khoska vank (Գօշավանքի տեղ) կ'անուանէ: Այս իրեն յայտնի 10 էն մինչև 13րդ դարերու հայ ճարտարապետութենէն աւանդական գծեր կը գտնէ և կ'եզրակացնէ թէ անոնք աւելի Roman ոճը կը յիշեցնեն քան թէ բիւզանդական:

Բազմահմուտ A. Choisy արդէն քանի մը տարի առաջ հայ արուեստին Roman արուեստին հետ կապակցութիւն ունենալու կարծիքին հիմը դրաւ, ցոյց տալով նաև անոր ճամբաները՝ ուրիշ անցնելով հայկական ազդեցութիւնը հասաւ Եւրոպա և Roman ոճի կազմակերպութեան մէջ իր օժանդակող գերը ունեցաւ: (Այս մասին տեսնել A. Choisy Hist. de l'Arch. t. II. page 81-86, և կամ Անանիս, 1911 թիւ 1-2 երես 18)

Ch. Diehl աւելի պատմական հիմերու վրայ կը խորստէ իր կարծիքները և ազդեցութեանց կնիքերը քաղաքական յարաբերութիւններով բացատրել կը քննայ, ուստի հետեւեալ շատ բնորոշ կարծիքը կը յայտնէ հայ ճարտարապետութեան 10 էն 13րդ դարերու ոճերուն զարգացման մասին.

« Բայց ընդհանուր առմամբ այս գաւառներու (Հայաստանի) ճարտարապետութեան մէջ գտնական տարբերքներու խառնուրդ մը կը գտնուի որ շատ լաւ կը բացատրէ երկրին թէ աշխարհագրական և թէ քաղաքական պայմանները: Պարսկական Արաբներու դրացնութիւնը այնտեղ մնացուցեր է չափական դարգաւորականները. Բիւզանդիոնի քաղաքական ազդեցութիւնն ու մնացուցեր է իր արուեստին նոր ձևերը: Այս ներմուծումները շատ խնամքով բաղադրուած են հնդկական հին աւանդութիւններու հետ: Այսպէսով ծնած է ինքնուրոյն արուեստ մը որ 10րդ էն 13րդ դարերուն երեւան եկած է բազմաթիւ շինութիւններով »:

Այս կարծիքը ամենէն ուղիղն է հայ ճարտարապետութեան կրած արտաքին ազդեցութիւններու մասին՝ եթէ միայն քաղաքական յարաբերութիւններով բացատրել ուզենք: Սակայն իրականութիւնը, ըստ իս, բոլորովին տարբեր երևոյթներ յառաջ կը բերէ: Տարբարդ դարար հեղինակը մասնաւորապէս չէ մատնանշած թէ 10-13րդ դարերու հայ ճարտարապետութեան ո՞ր մասերն են պարսկա-արաբական կամ հնդկական:

Ար ցուելիմ որ յաճախ կրկնելու ստիպուեր եմ հրապարակի վրայ եղած ուսումնասիրելի նիւթերու չափազանց նուազութիւնը: Եթէ ոչ, հեղինակին յայտնի պիտի ըլլար թէ հայ ճարտարապետութեան 10-12րդ դարերու ոճը բուրավոր կը գտնազանի վերջին 13-14րդ դարերու վերածնութիւնէն, դարձեալ պահուելով նախորդ ոճէն՝ հաճելի եղած շատ մը աւանդական գծերը:

Գալով բիւզանդական ազդեցութեան, եթէ կայ, ինչպէս վերև բացատրեցի, պէտք է փնտռել եկեղեցական ճարտարապետութեան մէջ յատկապէս յին ոճերու վրայ, որոնք կազմուած են

աւելի կրօնական վարդապետութիւններու ազդեցութեան տակ քան արուեստներու:

Իմ ձեռքի տակ ունեցած բազմաթիւ նիւթերու համեմատութեամբ՝ իմ կարծիքս այն է եղած թէ հայ ճարտարապետութիւնն ու գեղարուեստը մինչև 6րդ դար ազդուած են մեծ մասամբ յունա-հռոմէական արուեստէն. իսկ անկէ առջին ինչպէս նաև հնագոյն ժամանակներ աւելի մեծ կապակցութիւններ ունին ստորաբաղդէական և սասանական արուեստներու հետ: Ինչ կը վերաբերի հնդկական աւանդութիւններուն, ըստ բաւականի ձիշգ նկատողութիւն է հայ արուեստը բաղադրող տարբերքներու նկատմամբ: Բայց Հնդկաստանէն Հայաստանի վրայ ուղիղ ազդեցութիւն այնքան ալ հաւանական չերևիր ինձի:

Հնդկական արուեստի վառարանը նոյն Ասորա-Քաղզէան է ինչպէս հայկականին: Միևնոյն կէտէն բաժնուող երկու ազդեցութեանց մէկը հասեր է մինչև Հնդկաստան, իսկ միւսը Հայաստան: Աւստի դարմանալի չէ որ հայոց և հնդկաց արուեստներուն մէջ մօտաւոր ազգակցութիւն կը նշմարուի:

Թէև Հայոց Հնդկաստանի հետ աւելարկան յարաբերութեան մէջ ըլլալը պատմական և իրական ապացոյցներով ալ յայտնի եղած է, սակայն շատ հին ժամանակներէ սկսեալ Հայոց արուեստին մէջ կը նշմարուին հնդկականը յիշեցնող գծեր որոնց արմատը Ասորա-Քաղզէանի մէջ էր. այս ազդեցութիւնը աւելի ուղիղ ձամբով կարելի էր Ասորեստանէն և Պարսկաստանէն փոխադրուել Հայաստան Արշակունիներու և Պարթևներու միջոցաւ բնիկ երկրէն քան թէ հեռաւոր Հնդկաստանէն: Արդէն Արշակունիներու և Պարթևներու օրով Հայաստանի մէջ կատարելութեան հասած արուեստ մը կայ անկաս յունա-հռոմէականէն, որուն հարազատ շառաւիղներն են կրդ, ծրդ դարու հայկական յիշատակարանները, որոնց վրայ գեւ նոր ուշադրութիւն պիտի դարձընեն գիտնական արուեստագետները:

Հին յունա-հռոմէական արուեստի յանկարծական և վաղանցիկ նշոյններ երևցեր են Հայոց 10-11րդ դարերու ճարտարապետութեան մէջ: Թէ ինչու յունա-հռոմէական և ոչ բիւզանդական, այդ մասին ես կը խօսիմ առանձին յօդուածով մը ներկայացնելով իմ հաւաքած հաւանական փաստերը: Իսկ պարսկա-արաբական յատկանիշ ունեցող չափական զարգաբանականներու մասին, ես ուրիշ անգամ ալ տուիմ եմ ունեցեր ըսելու թէ, ծրդ և 7րդ դարերու հայ-յիշատակարաններու վրայ կան այդ ձիւղի զարգացման նախնական սաղմերը: Այս տեսակէտով պէտք է մանրամասն քննել Տեկորի, Բագարանի, Մրինի, Ալամանի, Զուարթնոցի և ուրիշ 5 և 7րդ դարերուն կանգնուած յիշատակարանները:

Ուղիղ արարական ազդեցութիւն կարծուած չափական զարգաբանականներ Հայաստանի մէջ երևան եկած են 12րդ դարու կէսէն յետոյ,

13 և 14րդ դարերուն մէջ կանգնուած յիշատակարաններուն վրայ: 10-11րդ դարերուն կանգնուած յիշատակարաններ միանգամայն աղաս են արաբական համարուող գծերէն: Մինչդեռ եթէ քաղաքական յարաբերութիւնով բացատրել պէտք ըլլար, պարսկա-արաբական կարծուած զարդաքանդակներ, ինչ որ կ'երևան 13-14րդ դարերուն մէջ. պէտք էր որ երևային ուժեղ թափով գեւ 10-11րդ դարուն, որ միակ շրջանն է Հայաստանի վրայ Պաղտատի քաղաքական զօրեղ ազդեցութեան: Ինչպէս կ'ըլլայ որ արուեստի ներգործութիւնը յանկարծական փայլով կը ծաղկի այն ժամանակ երբ արդէն արաբական ազդեցութիւնը ինկած և տեղի տաւած է յունական և վրացական գերիշխանութեանց առջև 11րդ դարու կէսին մօտ:

Թաթարներու Հայաստան արշաւելէն առաջ Զաքարեաններու շրջանին ծաղկող ճարտարապետութեան նոր վերածնութիւն մը կայ որ ամենավերջինը եղած է Հայ ճարտարապետութեան մէջ: Այս շրջանի վերածնութեան մէջ ունենալով թաթարներու ազդեցութիւն կը նշմարեն: Այս կարծիքով բաւական չէ որ ժամանակագրական մեծ շփոթութեան մէջ կ'իյնան, առանց ինկատի ունենալու որ նոյն ոճով բազմաթիւ շէնքեր արդէն կանգնուած էին թաթարներու արշաւանքէն առաջ, այլ և շատ զարմանալի կերպով այնպիսի յատկութիւններ և նրբացած ճաշակ կը վերագրեն ցեղի մը որ ընդունակ ալ չէր ճշմարիտ քաղաքակրթութեան:

Ինչպէս Արարը, նոյնպէս ալ թաթարը արիւնէ ու թալանէ գատ ոչ մէկ բանի մէջ հաճոյք չէին զգար, քանզի, աւրել և փճացնելու մէջ էր անոնց ամենամեծ բաւականութիւնը. այս ճշմարտութեան անհերքելի վկաներն են այսօրուան եւրոպական բոլոր հնութեանց թանգարաններու մէջ տեղ բռնող հնութեանց առաւելագոյն բաժինները և իսպիւղա աշխարհի տարածուած անհամար կիսականգուն ու փլատակ գեղարուեստական հրաշալիքները, ինչպէս կ'ըսէ առած մը, «անոնց ոտքի կոխած տեղերը կանանչ խօտը կը չորնար»: Ինչ ունէին Արարն ու թաթարը իրենց բնիկ երկրին մէջ, որ ինչ բերէին արդէն քաղաքակրթութեան երկիրներու մէջ. անոնց բնիկ երկիրները տակաւին մինչև այսօր ալ քաղաքակրթական անապատներ են: Մեծ հեղինակներէն մէկը շատ արդարացի կերպով «քաղաքակրթութեան պատուհաս» անուանած է մասնատական արշաւանքները:

Արևելքի այս երկու վայրերի ցեղերը, Արարն ու թաթարը իրենց վայրագ սրածութեամբ տիրապետած երկիրներուն մէջ կամաց կամաց ընտելացան վայելչասիրութեան և քաղաքակրթ կեանքի պայմաններու շնորհիւ իրենց հպատակներու հեռատես և ձկուն բնաւորութեան:

Բունակալ սուրի ու անխնայ հարուածներու տակ ձնշուած հպատակ ազգեր, իրենց անկոչ աէրերուն վայրերի հակումները չափաւորելու

և կատաղութիւններն սանձահարելու միջոցը գտան անոնց համար վայելքներ ստեղծելով, իրենց բոլոր բարոյական և ֆիզիքական արժանաւորութիւնները անխնայ զրին տիրողներու արամադրութեան տակ, ու մեծամեծ կենսական զոհողութիւններով, դարերու տեղութեան մէջ հաղիւ կարողացան զանոնք հակամարդկային կերպարանքէ հանելով փոքր ի շատէ քաղաքակրթ վիճակի մէջ գնել: Բայց անոնց քաղաքակրթութիւնը միայն մեղհօրէն վայելելու մէջ կը կայանար. այդ ցեղերը մինչև այսօր ալ ստեղծագործողներ ըլլալու շոշափելի փաստեր չի կարողացան տալ: Այսօր ալ, դարձեալ, իրենց տիրապետած երկիրներուն մէջ հպատակ տարբերն են որ կոչուած են ամեն տեսակ գիտութիւն և արուեստ զարգացնելու՝ տիրող տարրին հանգստութեան և վայելքներուն համար Ծաներկու երկար դարեր չի կարողացան մահմետականի հոգւոյն պատկերը բարեփոխել, նոյնն են այսօր իրենց բնածին նկարագրով, հակումներով ինչ որ էին սկիզբէն:

Արաբաց տիրապետութեան ամբողջ շրջանին Հայաստանի մէջ քար քարի վրայ դրուած չենք գտներ, մինչև Բագրատունի և Արծրունի թագաւորութեանց վերականգնումը: Այս երկու թագաւորութեանց երկիրները կարճ ժամանակի մէջ բազմաթիւ գեղարուեստական շինութիւններու ցանցով մը ծածկուեցաւ, մինչդեռ արաբական տիրապետութեան տակ մնացած Հայաստանի ուրիշ մասերը մինչև վերջն ալ աւերակ ու անապատ մնացեր են:

Թաթար խաներէն ունենալ իրենց նիւթական շահերուն համար հայ ժողովուրդը իր կրօնի և քաղաքակրթութեան զարգացման մէջ աղատ թողուցին, բաւական սեպելով միայն ծանր տուրքեր աւնելլը. ահա այդ իսկ պատճառով համեմատաբար աւելի շատ գեղարուեստական յիշատակարաններ կանգնուեցան թաթարաց տիրապետութեան ժամանակ մինչև 14րդ դարու վերջերը: Բայց այս պարբերաբար եղած հանգստութիւնը աւելի կորստաբեր կ'ըլլար քան մշտնջենականը. յանկարծ գիտակից և երկրին շահերուն նախանձախնդիր խանին կը յարողդէին կրօնի և աւանդութեանց թշնամի, նախանձով ու ատելութեամբ լեցուած խաներ, ամեն բան տեղն ու տեղը կ'ոչնչացնէին ինչ որ աճեր ու ծաղկեր էր իրենց նախորդի օրով: Յուսահատ ու անբնդհատ դժբաղդութեան ենթարկուած Հայը անգամ մը ևս գաղթականութիւնը ձեռք առաւ և մեծամեծ խուճերով գաղթեց աշխարհի ամեն կողմը: Էպուսայիտ Պահատուր խանը նախագուշակելով Հայոց գաղթականութեամբ երկրին աւերումը և այդ աւերումով իրենց ցեղին և տիրապետութեան սպառնացող վտանգը, 1237 թուին հրովարտակ մը արձանագրեց Անիի մղկիթին վրայ, որով ամեն դիւրութիւն, հանգստութիւն և հարկերու բաշխում կը խոստանար. որպէս զի չի գաղթեն: Սակայն բազմաթիւ դառնաղէտ փորձերով խրատուած

գժբաղդ ժողովուրդը՝ այլ ևս հաւատ չընծայեց սնամէջ խոստումներու և կանոնաւոր կերպով գրեթէ մինչև յետին մարդը գաղթեց Թաթարաց սահմաններէն ամբողջ մէկ դարու տեղութեան մէջ:

Մէկ կողմանէ գաղթը միւս կողմանէ գերեզմարութիւնը՝ ինչպէս ամեն կողմ նոյնպէս ալ գէպ ի Փոքր-Սօխ՝ փոխադրեցին Հայաստանի 13-14րդ դարերու արուեստը, անկէջ ալ մինչև Վոսփորի ու Մարմարայի ափերը, որուն հետքերը նշմարեց առաջին անգամ A. Choisy: (A. Choisy, Hist. de l'Arch, T. II p. 22).

Կիրակոս Գանձակեցին կը պատմէ թէ Չարմազանը երբ Անին առաւ « Սուր ի վերայ եղեալ կոտորեցին սակաւ կանայս և մանկունս թողեալ և արս արհեստաւորս զորս վարեցին ի գերութիւն: (Կիր. Գանձակեցի, Մատուա 1858 երես 152):

Թաթարներու և Սելճուկներու գերեզմարութեամբ հայ արուեստին կատարած արշաւանքը անոր վերջին արշաւանքն է: Անկէջ առաջ կատարած արշաւանքները տակաւին ուսումնասիրելի են և անոր վրայ ծածկուած քօղին ծայրը առաջին անգամ Ստչիգովսկին է որ վեր կը բարձրացնէ իր սրամիտ դատողութեամբ՝ առանց բոլորովին հիմնուելու պատմական անցքերու վրայ:

Արջաի որ քիչ մը առաջ Ch. Diehl ալ կը ջանար Բիւզանդիոնի հայոց վրայ ունեցած ներգործութիւնը պատմութեամբ հաստատել, սակայն ինչպէս կ'երևի այնքան ալ գոհ չի մնաց իր դատողութենէն, հանրեպ հակասական երեւոյթներու և վերջապէս քիչ մ'ալ ինքզինքին հակասելով կը շարունակէ իր տեսութիւնը:

Բիւզանդիոն և Հայաստան: Այստեղ կը դրուի էական հարցը: Ինչպէս որ մեզ կը թուի, իսկապէս հայ արուեստը պարտական է բիւզանդականին թէ ընդհակառակը՝ և է բան տուած է անոր:

« Բանի մը տարիներ առաջ ոչ ոք չէր կասկածեր Բիւզանդիոնի Հայաստանի վրայ ունեցած ներգործութեանը: Այս ամենը Սո իբովսկի յեղաշրջեց: Անոր կարծիքով հայ իշխանական տոհմի մը՝ յանձին Վասիլ Ա. կայսեր, Կոստանդնուպոլսոյ գահը բաժնանալը իր մասնաւոր հետեւանքը պէտք էր սր ունենար արուեստի պատմութեան վրայ, և նոր թագաւորութեան մեծ յիշատակարանը Nea (*) պիտի բղխէր հայկական արուեստէն: Հետեւաբար նաև այն ստեղծագործութիւնը որ նոր ծանապարհ բացաւ Կոստանդնուպոլսոյ հողին վրայ, և յունական խաչաձև եկեղեցոյ յատակագիծը անունով պիտի դառնար Հայաստանէն ծագում առած:

« Այս տեսութիւնը, յիշուի, մասամբ հանձարեղ և համոզիչ է: Անվիճելի է որ Հայաստանի բազմախնդիրներ բազմութեամբ կ'երթային մայրաքաղաքին մէջ բազմ փնտռելու: Անոնցմէ շատերը վարչական, զինուորական և արքունական բարձր պաշտօններու

կը հասնէին: Հայեր տիրապետեցին նոյն իսկ կայսերական գահուն, ինչպէս Ռոման, Նիկիփոս, Չմիլիկ: Հայաստանի և մայրաքաղաքին մէջ, զորապետներու և քաղաքագէտներու երթեկուծութիւնը անպակաս էր: Հայաստանի փոքրիկ գերիշխանները շարունակ կ'այցեցելէին սրբազան պալատը դաշնակցութիւններ, տիրուներ և թոշակներ ձեռք բերելու համար: Յեղապէս գործունեայ, հանձարեղ, շահասէր և դժբաղդ Հայը աշխարհի ամեն կողմը տարածուած էր. 11 և 12րդ դարերուն հայ նկորիչներ կը գտնենք Երուսաղէմի և Եգիպտոսի մէջ: Կոստանդնուպոլսոյ մէջ կը հանդիպինք իրաւագէտներու և որ աւելի կարեւորն է, ճարտարապետներու: 10րդ դարուն վերջը երբ երկրաշարժը 989 թուականին Ս. Սոփիայի գմբէթը կործանեց, հայ ճարտարապետներ աշխատեցան վերանորոգութեան մէջ, անոնց մէջ կար Տրդատ մը որ Անիի կաթողիկէի ճարտարապետն էր:

« Միւս կողմանէ անվիճելի է որ բիւզանդական եկեղեցիներէ ոմանք հայկական քանի մը շէնքեր յիշեցնող յատակագծեր ունին. մասնաւորաբար կը յիշատակուին երեքսորանեան սրբարանները, որոնք կը գտնուին 10րդ դարու վերջերը Աթօսի ամենամեծ եկեղեցիներուն մէջ, որոնցմէ մէկը ճշդիւ ցոյց կը տրուի թէ Իպէրիացիներու շինածն է. և վերջապէս կը նկատուի որ 10-11րդ դարերուն մէջ այնքան ինքնուրոյն և բեղմնաւոր հայկական արուեստը չէր կարող իր ինքնուրոյնութիւնը պահել եթէ անիկա բիւզանդականի ազդեցութեան տակ ըլլար:

« Յոյց տրուած իրողութիւնները ճիշդ են. բայց բացարձակապէս համոզիչ են. չեմ կարծեր: Այս ալ իրողութիւն մ'է որ ամեն երկու քաղաքակրթութեանց մէջ կը պատահի, այն է թէ աւելի զարգացողը կ'ազդէ միւսին վրայ: Արդէն ոչ ոք ալ չէ կարող ուրանալ որ 10րդ դարու Կոստանդնուպոլսը առանձնապէս գերիշխան չեղաւ Հայաստանի վրայ: Միւս կողմանէ այս պատճառաբանութեանց մէջ կը մտնեն շատ մը եկեղեցիներ, վերջապէս մենք բաւական վատ տեղեկութիւն ունինք, — Ստչիգովսկի ինքն ալ ստիպուած է խոստովանելու — էական շէնքին վրայ որուն շուրջը կը դառնայ վէճը, այսինքն նոր եկեղեցոյ ճարտարապետական յատկութիւններուն վրայ, այնպէս որ դժուար է գիտնալ թէ անիկա ունէ առնչութիւն ունէր հայ արուեստի հետ: Եւախորան յատակագիծը միւս կողմանէ աւելի լաւ կարող էր գալ Աթօս, ուղիղ Կոստանդնուպոլսէն ուր գործածութեան մէջ էր 7րդ էն մինչև 9րդ դար: Եւ վերջապէս քանի մը հայկական շէնքեր հետու բիւզանդական ճարտարապետներու ներշնչումէն, կը թուին որպէս հետաքրքրական ալյազանութիւններ, հանձարեղ շինողներու ձեռքով նմանցուած Կոստանդնուպոլսէն բերուած ոճերուն, ըլլայ անկիւնափող, ըլլայ յունական խաչաձև եկեղեցի:

« Իրուած խնդիրը կը մնայ ուրեմն մուծ. ինչ որ կարելի է և համաձայնելի, այն է որ Հայաստանի մէջ պահուած ասիական արուեստի հին աւանդութիւնները, միւսլիման երկրի դրացնութենէն յառաջ եկած ազդեցութիւնները այս երկրին մէջ հակակրճուած են բիւզանդական ազդեցութեան հետ. և ստեղծագործելու մէջ հմուտ ու ձաւաքիկ ճարտարա-

(*) Ս. Չորավար Եկեղեցի կ'անուանէ այս եկեղեցին Սս. Ասողիկ:

պետներու ձեռքին մէջ յառաջ եկեր է արուեստ մը որ բիւզանդականի շատ բան պարտկոյլ հանդիւրձ, երբեք անոր ստրիական ընդօրինակութիւնը չէ: Այլ սակայն, միւս կողմանէ ինչ որ հարկ է ըսել, այն է որ, եթէ այս արուեստը էսկան ոչինչ չէ տուած բիւզանդականին, սակայն իր առանձնայատուկութեան պարտական է ուրիշ կողմերու վրայ հետաքրքրական տարածումը: Հայաստանին հետեւած է Վրաստանը, և այստեղէն բիւզանդական տիրապետութեան երկիրները ջրջան ընելով, ազդեցութեան ընթացքը հասած է Ռուսաստան և հարաւային Սլաւներու մէջ: Մոքովի և Քիէվի Ս. Սոփիա եկեղեցիներու յատակագծերուն մէջ նշանակելի նմանութիւն մը կայ, և մարդ կարող է ինքնին հարց տալ թէ, ռուսական հին եկեղեցին բիւզանդականէ աւելի հայ ճարտարապետի մը գործը չէ արդեօք: Բիւզանդիոնի ենթակայ Հայաստանը զուգահեռաբար օգնել է քրիստոնէական արուեստը արեւելքի մէջ տարածելու »:

Ch. Diehlի աշխատութեան մէջ այս յօդուածով գրեթէ փակուած է հայ արուեստի ռուսումնասիրութիւնը, և ինչպէս կը տեսնենք թէ և անվճռական, բայց աւելի հակուած դէպ ի հայ ստեղծագործութիւն, դէպ ի հայ արուեստի ինքնուրոյնութիւն և որոշ չափով ալ իր դրացիներու վրայ ազդեցութիւն ունենալը:

Այս անվճռականութիւններ և տատանումներ դեռ շատ երկար կը տևեն, եթէ գիտնականներ իրենց ուշադրութիւնը չդարձնեն քանի մը հանրածանօթ շէնքերէ կատ, ուրիշ անծանօթ մնացած անհամար շէնքերու վրայ, և կամ աւելի ճիշդը մենք անոնց ուշադրութիւնը չի հրաւիրենք:

Աշխարհի ամեն կողմէն եկողը կ'երթայ Էջմիածին. Մայր-Տաճարէն յետոյ կը տեսնէ անոր անմիջապէս քովիկը Հռիփսիմէի Գայիտնէի վանքերը և նորագիւտ Զուարթնոցը, և ասով գրեթէ կը վերջանայ Արարատեան նահանգի արշաւանքը: Անդին կը մնան աւելի քան Էջմիածինը հնութեան մեծ հաւաստիք ներկայացնող յիշատակարաններ, որոնք իրենց տարբեր ոճով, տարօրինակ զարդաքանդակներով, իսկական բանալիները պիտի ըլլային հայ ճարտարապետութեան, մինչև իսկ հետնոստական շրջանները լուսաբանելու:

Էջմիածնէն յետոյ արշաւանքի ասպարէզն է աշխարհահռչակ Անին, ուր շնչասպառ կը վազեն անոր կախարդական անուէն յափշտակուած. սակայն այնտեղ գնացողներն ալ, ամենէն շատ մէկ կամ երկու օր միայն ժամանակ ունին տեսնելու: Չորս քիլոմետր տարածութեան վրայ ցրուած ամեն կողմ կանգուն ու կիսականգուն շէնքեր և բազմաթիւ գեղաքանդակ բեկորներ դիտելու, քննելու և ռուսումնասիրելու համար բաւական չեն մէկ երկու օրերը. այսքան կարճ միջոցի մէջ հազիւ հազ կարող է սպաւորութիւններ արձանագրել խուզարկուն և մեկնիլ:

Անիի շուրջը բազմաթիւ յիշատակարաններ կան՝ որոնք երբեմն աւելի գերազանց են քան Անիի յիշատակարանները, ոչ որք մտքէն անգամ

չ'անցնիր անոնք ալ տեսնել, որոնց մէջ 10-14րդ դարերու ճարտարապետական այնպիսի սքանչելի նմոյշներ կան, որպիսիներ Անիի մէջ երբ և իցէ գոյութիւն իսկ չեն ունեցեր:

Թէքսիէն Ֆրանսական կառավարութիւնէն լիազօրուած 1839 թուին եկեր է Հայաստանի հնութիւնները ռուսումնասիրելու. եթէ չեմսխալիւր, իր ամբողջ արշաւանքը կատարել է միայն չորս ամսուան մէջ. Անիի ռուսումնասիրութեան համար թալ հազիւ ժամանակ ունեցեր է չորս օրը Ահա այս տեսակ շտապ գործունէութեան հետեւնքն է որ այսօր քառասներ ստեղծուել է հայ արուեստի ռուսումնասիրութեան գործին մէջ: Նոյնպէս են վարուելու նաև ուրիշ բոլոր ծանօթ հնախոյզներ:

Թէքսիէի նկարագրած Անիի կաթողիկէն բացի ուրիշ իրականին անհամապատասխան մասերէ, հարաւային դուռ մը ունի, որուն ձևը և վրայի զարդաքանդակները երբ և իցէ գոյութիւն իսկ չեն ունեցեր այնտեղ: Գմբէթին տրամագծին մտաւորապէս երեք մետր նեղ նկարագրուելէն, հայ ճարտարապետութեան մէկ առանձնայատուկութիւնը թագուն մնացել է մինչև այսօր, որն որ վերին աստիճան հետաքրքրական ըլլալէն զատ միմիայն Հայաստանի յատուկ գմբէթաշինութեան ոճ է եղած: Յատկապէս այս մասին արժէ առանձին յօդուածով մը խօսիլ:

Նմանապէս Թէքսիէի աշխատութիւնն է Տեկուրի տաճարին planը, façadeներ ևն. որոնք բոլոր ռուսումնասիրողներու քննութեան միակ աղբիւրն են և տասնեակ անգամներ սպաւորուած զանազան հեղինակներու կողմանէ:

Բաց ի այն որ plan և façade լիովին չեն համապատասխաններ, նաև planի մանրամասնութեանց մէջ իրականին անհամապատասխան աւելի կամ պակաս մասեր են մտեր: Ներքին մեծ մոյթերու անհարազատ ընդօրինակութիւնը եթէ չըլլար, թերևս աւելի վաղուց ուշադրութեան կ'առնուէր անոր խիստ հետաքրքրական և առեղծուածներ պարունակող ձևը:

Հակառակ Թէքսիէի բարեխիղճ և ուղիղ դատողութիւններուն, ինչպէս յառաջ եկեր են չափազարական և գծագրական սխալները, այդ մասին արդէն մասամբ խօսեցանք:

Քէսութների նկարած sphérique գմբէթաւոր Մաստարայի եկեղեցին տեսնելը ըստ ամենայնի իրաւունք ունի կարծելու թէ 7րդ դարուն Հայաստանի մէջ բիւզանդական գմբէթներու ազդեցութիւնը անվրէպ էր. մինչդեռ Մաստարայի եկեղեցւոյ գմբէթը ամենէն sphérique չէ եղած, և ամենահին շինուածքն է որ անփոփոխ հասեր է մեզի Մաստարայի եկեղեցին, թերևս նորագուած ըլլայ շատ մասնաւոր կերպով 10րդ դարէն ոչ ուշ՝ բայց առանց ձևի փոփոխութեան: Այս միայն Մաստարայի մէջ այլ և բովանդակ Հայաստանի մէջ Հայերուն մտքէն անգամ չէ անցած արտաքուստ sphérique երևոյթով գրմբէթներ շինել: Այս տեսակ օրինակներ անհատնում են, մանրամասն թուել աւելորդ է. ցանկալի է որ այսուհետև գոնէ չի պատահին, և հին պատ-

կերները ուսումնասիրութեան առարկայ չըլլան: Պահ մը ենթագրերը որ ու ե է հնարաւոր Նինն և Շիրակը շատ լաւ տեսաւ, բայց այս-քան փոքր մաս մը տեսնելը բաւական չէ հայ ճարտարապետութեան իսկական առանձին յատկութիւնները որոշելու: Նինն և Շիրակը իրենց մէջ շատ աննշան թուով ունին 10րդ դարէն անգին անցնող յիշատակարաններ: Աւելի հինները՝ հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն փոխանցման շրջանի մնացորդները բարձրակարգ ուրիշ տեղերու վրայ են, որոնց անունն ու տեղը կարողացի հնարաւոր գիտնականը երբեք լսած չէ կարող ըլլալ: մեր պարսքն է անոնց սեղանին վրայ գնել գոնէ լաւ լուսատիպ պատկերներով և մանրամասն նկարագրութիւններով:

* * *

Սաշիգոփսիկին լիովին համոզուած է որ յունական խաչաձև յատակագծի ոճը Հայաստանի մէջ ծագում առած է, որուն ամենահին օրինակն է Էջմիածնի եկեղեցին: Միւսոյն ժամանակ նաև կը կարծէ թէ այդ յատակագիծը նոյն իսկ Լուսաւորչի ժամանակէն աւանդաբար հասած ըլլայ:

Բայ ի ուրիշ շատ մը փաստացի պատճառներէ, նաև յատակագծերու զարգացման տեսակետով ալ Էջմիածնի յատակագիծը ամենէին քրիստոնէական նախնական եկեղեցւոյ յատկութիւն չունի, ընդհակառակը կրօնական և ծիսական օրէնքներու ըստ բաւականի զարգացումներով մշակուած յատակագիծ մ'է: Հայոց եկեղեցիներու յատակագիծը ուրիշ քրիստոնէայ ազգերու եկեղեցիներէն տարբեր կերպով զարգանալու ոչ մէկ պատճառ չկար Հայաստանի մէջ: Աւրիշ բոլոր քրիստոնէայ ազգերու նախնական եկեղեցիները մեհտաններու և պաղիլիքներու ընդօրինակութիւններ կ'ընէին ի սկզբան: Յետոյ ժամանակի ու դարերու ընթացքին մէջ հետզհետէ հեթանոսական ձևերէն հեռանալով, քրիստոնէական կրօնի խորհրդանշանները ու գրոշմը կրեցին: Ճիշդ այդպէս ալ եղած է Հայոց եկեղեցիներու նկատմամբ և այդպէս ըլլալուն ալ ապացոյցներ չեն պակսիր: Այս մասին աւելի ընդարձակօրէն յայտնած եմ իմ տեսութիւններս «Տեղորի տաճարը» աշխատութեանս մէջ (տպ. Թիֆլիս 1911):

Էջմիածնի լուսաւորչաշէն եկեղեցին չէր կարող խաչաձև յատակագիծ ունենալ, այսօրուան ձևը կը պատկանի Ներսէս Շինող կաթողիկոսին, իսկ անկէջ առաջ Վահան Մամիկոնեանի ծրագրուած վերջին շինածը թէև խաչաձև էր կրկին, սակայն խաչաձևի չորս կիսաբոլորակ թևերը արտաքուստ ամբողջուած էին ուղիղ չորս պատերու մէջ: Չորս անկիւններուն վրայ ալ բացուած էին չորս սենեակներ զանազան ծիսական պահանջներու յատուկ: Յօդուածիս սահմանը չի ներքեր Էջմիածնի մասին աւելի ընդարձակ խօսելու, ցանկացողը թող բարեհաճի

կարգալ մէկ փոքրիկ հրատարակութիւնս «Էջմիածնի տաճարը» անունով: (Թիֆլիս 1910):

Վահան Մամիկոնեանի շինած եկեղեցւոյն խաչաձև յատակագիծը Հայաստանի մէջ ծագում առած ոճ ըլլալը հերքել շատ դժուար է: Իսկ այժմեան խաչաձևն ալ, ինչպէս կը տեսնուի Սաշիգոփսիկի և Շ: Տիլի կարծիքներէն քիչ քիչ Հայաստանի տեղականութիւն դառնալու երևոյթը ունի: Միայն հռափորան եկեղեցիներուն Հայաստանի մէջ ծագում առած ըլլալուն մասին, առ այժմ՝ ես կը դժուարանամ Սաշիգոփսիկին հետ համակարծիք ըլլալու: Մանաւանդ երբ Շ: Տիլ կը հաւատարէ թէ այդ ձևը 7րդ էն մինչև 10րդ դար գոյութիւն ունէր կոստանդնուպոլսոյ մէջ, այդ ասին ինծի կը մնայ հաւատալ որ Հայաստանի մէջ այդ ձևը օտար ազդեցութեան տակ կ'ազմուած է: Վասն զի իմ բոլոր խուզարկութիւններուս ժամանակ դեռ չեմ տեսած հռափորան եկեղեցի մը, որուն շինութեան թուականը 10րդ դարէն առաջ ըլլայ:

Ստուգիւ 7րդ դարու եկեղեցիներ կան, որոնք թէև երբ խորան ունին, սակայն անհերքելի ապացոյցներ ալ կան որ անոնք 10րդ դարու փոփոխութեան արդիւնք են: Թէև Ստեփաննոս Օրպէիան կը պատմէ թէ (Թիֆլիս 1911 երես 71) Գիւտ կաթողիկոսի նախաձեռնութեամբ մեծ կաթողիկէ մը շինուեցաւ (472 թուին) որ երբ խորան և երկու գմբէթ ունէր. բայց անոր երբ խորան լրացած էր աւելի կը հասկնամ Էջմիածնի ներքին կիսաբոլորակ թևերով խաչաձև յատակագիծին նմանը որուն արեւմտեան թևը քառակուսի էր ինչպէս Ալամանի Ս: Անանիայի եկեղեցին, և միւս երեք թևերուն մէջ պատարագի սեղաններ կային՝ ինչպէս այսօր Էջմիածնի եկեղեցիին մէջ: Էջմիածնի շինութիւնն ալ արդէն ժամանակակից է և ամենայն հաւանականութեամբ միւսոյն ձևը ունեցաւ երբև ժամանակակից նոր ոճ: Իսկ երկու գմբէթ միանգամայն միւսոյն եկեղեցւոյ վրայ ինծի բուրովին անհասկնալի կը մնայ, եթէ չերևակայինք Չուարթնոցի նման կրկնակ գմբէթ իրարու վրայ: Արովհետև ուրիշ ձևով պատշաճ տեղ չենք կարող գտնել հայկական ոճի մէջ երկրորդ գմբէթի մը համար:

* * *

Վասիլ կայսեր կոստանդնուպոլսոյ մէջ շինել տուած նոր եկեղեցին Սաշիգոփսիկի կարծիքով հայկական ոճով է և ուղղակի ազգուած Էջմիածնի յատակաձևէն: Թէև Վասիլ կայսեր շինել տուած եկեղեցւոյ յատակագիծը բոլորովին նման չէ Էջմիածնի յատակագիծին, այնու ամենայնիւ Սաշիգոփսիկի համար ներքին էր այդ համեմատութիւնը, հիմնուելով գոնէ անոր մտաւոր նմանութեան վրայ:

Ի՞նչ ձև ունէր Վասիլ կայսեր շինած եկեղեցւոյ յատակագիծը և ի՞նչ տարբերութիւն ունէր Էջմիածնի յատակագիծէն. ատիկայ տեսնելու մենք նոյն իսկ Շ: Տիլի նկարագրութեան մէջ իր կարծիքներով միասին:

« Յատակագիծը կը ներկայացնէր հաւասար թեւերով խաչաձև մը քառակուսի մը մէջ ամփոփուած և հինգ զմբէթներով պսակուած: Բայց զմբէթները այնպէս չէին ինչպէս Առաքելոց եկեղեցիին և անոր ընդօրինակութիւնը եղող Ս. Մարկոսինը, որոնց խաչաձևի չորս թևերուն վրայ զետեղուած էին չորս զմբէթները: Վասն զի եկեղեցուն մէջ կեդրոնական զմբէթին շուրջը չորս երկրորդական զմբէթներ կը բարձրանային bas-coteներուն վրայ՝ խաչաձևի չորս թևերու հետ արտաքին քառակուսի միացումով ձևացած անկիւններուն մէջ: Այսպէսով արտաքին ծակափոխ վրայ խաչաձևը անտեսանելի եղած էր, մինչդեռ Առաքելոց եկեղեցուն վրայ՝ խաչաձևը արտաբուստ տեսանելի էր: Միայն կտուրին վրայ, յայտնի էին չորս թևերու ծածկոյթի կամարաձևին մէջ յառաջ եկող օրօրոյցաձև տանիքներու չորս թեւերը [Վասիլի եկեղեցւոյ վրայ]: (Manuel d'art byzantin. Par Ch. Diehl. Paris 1910 p. 406)

Որչափ լաւ պիտի ըլլար եթէ վերոյիշեալ երկու գիտնականները իրենց սեղանին վրայ ունենային Հայաստանի մէջ տակաւին պահուած քանի մը եկեղեցիներու յատակագծերն ու պատկերները որոնք կէտ առ կէտ Վասիլի եկեղեցւոյն նման ըլլալէ պատ, անոնցմէ ոմանք աւելի հին են քան Վասիլի եկեղեցին:

Էջմիածնի մօտ 7րդ դարուն կանգնուած Հռիփսիմէի վանքի եկեղեցին և Խճկոնքի Ս. Աստուածածինն որ կանգնուած է 10րդ դարէն ոչ ուշ, իրենց յատակագծով բնաւ չեն տարբերիր Վասիլի եկեղեցւոյ յատակագծէն, միևնոյն ձևով ներքուստ խաչաձև, և արտաբուստ ամփոփուած են քառակուսի մէջ, միակ տարբերութիւնը կը կայանայ Հայոց եկեղեցիներուն միայն մէկ զմբէթ ունենալուն մէջ: Բայց խաչաձև Վասիլ կայսեր շինած հինգ զմբէթով եկեղեցիին նման երկու օրինակ ինծի յայտնի են առ այժմ, որոնցմէ մէկը Անիի Առաքելոց եկեղեցին է:


Անիի Առաքելոց եկեղեցւոյ շինութեան թուականը կորած է. սակայն իր 10րդ դարու մաքուր հայկական ոճէն պատ 1031 թուականին Վահրամ Պահլավունիի որդւոյն Ապուղամիի մէկ նախնապատեման արձանագրութենէն կ'երևի որ այս եկեղեցին կանգնուած է 10րդ դարէն ոչ ուշ: Արտաքին որմասեանց խոյակներու և քանի մը ուրիշ զարդաքանդակներու վերին ստաիծան նմանութիւններէն ալ կը հետևեցնեմ որ Անիի Կազկաչէն բոլորակ Ս. Գրիգոր եկեղեցւոյ շինութեան ժամանակակից վարպետներ աշխատեր են անոր մէջ:

Գրեթէ միևնոյն դարուն Անիի և Բիւզանդիոնի մէջ իրարու այսքան նման եկեղեցիներ իրարմէ անկախ կերպով ինչպէս երևան գալերնին գուցէ անբացատրելի մնար, և կամ առաջնութեան մրցանակը Բիւզանդիոնը շահէր, եթէ բարեբաղդաբար Յրդ դարու վերջին Յօհան կաթողիկոսի Երևանի մօտ Աւան գիւղի մէջ կանգնած ներքուստ խաչաձև և հինգ զմբէթանի եկեղեցին կիսականգուն վիճակի մէջ այսօր մեկ

հասած չըլլար: Այս եկեղեցւոյ յատակագիծը բոլորովին անաղարատ է և պատերը կանգուն: Փլած են զմբէթները, սակայն ինչ որ այստեղ մեզի կարևոր է և ըստ ամենայնի հետաքրքրական, երկրորդական չորս զմբէթներու գոյութեան ապացոյցն է, որոնց մէկուն երկու կարգ քարի բոլորակ շարքերը տակաւին կը մնան հարաւ-արեւմտեան անկիւնին վրայ:

Մասնաւոր շնորհակալութեան արժանի է Գարեգին վարդապետ Յովսէփեանի մէկ հոգածութիւնը՝ այս անգնահատելի յիշատակարանի մասին, որ մանրամասն լուսանկարելով կորուստէ ազատեց: Մասնաւորապէս լուսանկարած է նաև հարաւ-արեւմտեան անկիւնի փոքր զմբէթին մնացորդ քարերու բոլորակ շարքերն ալ:

Այստեղ հարկ չեմ տեսներ վերասին պաշտպանել իմ մէկ Բէհլէս՝ որ տեսական և գործնական փաստերով ապացուցանելու աշխատած եմ թէ, Անիի ներքուստ խաչաձև, արտաբուստ քառակուսի, հինգ զմբէթանի Առաքելոց եկեղեցւոյ նախատիպը եղած է 5րդ դարու վերջը Վահան Մամիկոնեանի կանգնած Էջմիածնի տաճարը:




Էջմիածնի սկզբնական յատակագիծը 5րդ դարուն
պս Թ. Թօրամանեանի

Այս տեսութիւնս գրած էի 1909 թուականին, որ նոյն տարին ռուսերէն լեզուով տպագրուեցաւ Ս. Պետերբուրգ Պր. Ն. Մատի թարգմանութեամբ, յետոյ ալ տպագրուեցաւ հայերէն ընագիրը «Ազգագրական Հանգէս»-ի մէջ, առանձին արտատպութիւնով 1910 թուականին, «Էջմիածնի Տաճարը» խորագրով: Այս ամենը վերջանալէն յետոյ էր որ բաղդ ունեցայ Աւան գիւղի եկեղեցին տեսնելու, եթէ ոչ՝ անպայման նախորդ աշխատութիւններուս մէջ իբրև փաստ ներկայացուած պիտի ըլլար այս եկեղեցին ալ:

Բայց քանի որ Էջմիածնի նկատմամբ իմ թէօրիս տակաւին քննութեան չէ տանուած ուրիշ մասնագետներու կողմանէ, բնականաբար

իրբը փաստ չեմ կարող ներկայացնել, միայն կը բաւականանամ՝ ըստ իմ տեսութեան, անոր յատակագիծը և շէնքի պատկերը ներկայացնելով: Սակայն Աւանի եկեղեցին անհրաժեշտ է որ մասնանշեմ իրբը կանգուն և խօսուն օրինակ և ճրգ գարու հարապատ շինութիւն, որուն գոյութիւնը կը յուսամ թէ Ստշիգովսկիի համար հաճելի անակնկալ մը կ'ըլլայ, անգամ մը ևս փաստացի հաստատուելով տարիներ առաջ իր կատարած տեսութիւնը, առանց գիտնալու Աւանի եկեղեցոյ գոյութիւնը: Իսկ Շ: Տիլի համար ալ անշուշտ հետաքրքրական նշութիւն մ'է որով փոխանակ վաստիկ եկեղեցոյն հայ ճարտարապետութեան հետ առնչութիւն ունենալ կամ չունենալուն մասին վարանմուն մէջ մնալու, և նոյն ձևը 10րդ դարու բիւզանդական ոճի յատկանիշը համարելու, առ այժմ գոնէ, եթէ ոչ ճրգ գարու գէթ ճրգ գարու հայ ճարտարապետութեան յատկանիշը պիտի համարի: (— Ainsi l'édifice était conforme au type nouveau et caractéristique de la construction byzantine, tel qu'il apparait presque exclusivement à partir du X. siècle: l'église à croix greque inscrite dans un carré.) [Ch. Diehl. Manuel d'Art Byzantin. Paris 1910 p. 406].



Էջմիածնի սկզբնական ձևը 5րդ դարուն ըստ Թ. Թօրամեանի

չէնքերու պատմութիւնը կը բովանդակէր: Բայց մինչև այսօր Հայաստանի մասին այդ տեսակ պատմութիւն մը գտնուած չէ: Եթէ նոյն իսկ գտնուէր ալ, չէր կարելի երևակայել որ անոր մէջ բովանդակ Հայաստանի եկեղեցիներուն շինութեան պատմութիւնը գրուած ըլլար: Առաւելին Հայաստանի յունական բաժինը պիտի ըլլար. ուր հաւանական է որ գտնուէին թէ՛

կայսեր հրամանով շինուած եկեղեցիներ, և թէ՛ բիւզանդական ազդեցութեան ենթարկուած ձևեր:

— Այս առթիւ պիտի ըսեմ որ իմ բոլոր տեսութիւններս հիմնուած են արեւելեան Հայաստանի հին ճարտարապետութեան վրայ, որովհետեւ բնաւ առիթ չեմ ունեցած Հայաստանի յունական բաժինը ուսումնասիրելու: —

Արեւելեան Հայաստանը, մասնաւորապէս Քաղկեդոնի ժողովէն յետոյ շատ հեռու կը մնար Բիւզանդիայի

կրօնական և քաղաքական ազդեցութիւններէն, և այդ զգուշաւորութիւնն ու ինքնուրոյնութեան ձգտումը Հայերուն համար անթիւ աղէտներու պատճառ դարձեր է միշտ:

Եթէ պարբերաբար բիւզանդական կայսրութիւնը յաջողեցաւ ալ արեւելեան Հայաստանի վրայ կրօնական կամ քաղաքական ազդեցութիւն ձեռք բերել, այն ալ այնքան թոյլ և կարճատե եղած է որ բնականաբար պիտի անհետանար առանց ազդեցութիւն թողելու: Քսան տարի Անիի միջնաբերդի ապարանքին մէջ բնակեր են բիւզանդական կայսրութեան կառավարիչներ, սակայն պեղումներ ցոյց տուին որ, անոնք իրենց քսան տարուան գոյութեան ամենեին հետք չեն թողեր: Ճիշդ է որ Արեւելքի մէջ պակաս չեն եղած կայսրութեան կուսակից ցեղապետներ կամ սոհմեր, բայց անոնց ալ բնաւ չէ յաջողած Արեւմուտքի ազդեցութիւնը ու և է կերպով բնդհանրացնել Հայաստանի վրայ, և իրենք ստիպուել են գաղթել ըսեն բիւզանդական երկիրները:

Թէ՛ Սասանեանց և թէ՛ Արաբական տիրապետութեանց ժամանակակից պատմագիրներէ պարզ վկայութիւններ կան, որոնք ցոյց կուտան թէ՛ Արեւելքին տիրապետող հզօր և բարբարոս պետութիւններուն ո՞րչափ անհաճօյ էր Բիւզանդիոնի հետ նոյն իսկ առևտրական յարաբերութեան մէջ գտնուելը: Բիւզանդիոնի նենգամիտ և միտումաւոր քաղաքականութիւնը միշտ ստի-

* * *

Ch. Diehl երկու պիւսաւոր յննակէտ ունի համոզուելու համար թէ անպայման հայ ճարտարապետութիւնը պէտք էր որ կազմակերպուէր որոշ չափով բիւզանդականի ազդեցութեան տակ յննակէտներէն մէկը Յուստինիանոսի ճարտարապետներուն Հայաստանի մէջ բազմութիւ եկեղեցիներ շինելն է, իսկ միւսը՝ Էրոշտիւն մ'է որ Էրոշտի շարքացած կ'աղբէ Էրոշտի: Յուստինիանոսի ճարտարապետներուն Հայաստանի մէջ բազմութիւ եկեղեցիներ շինած ըլլալու կարծիքը յառաջ եկած է պատմական տեղեկութիւնէ մը, թէ՛ Յուստինիանոս յանձնարարած է իր պատմարան Procopius Գրքի իր կեանքի բոլոր գործունէութիւնը: Միայն շինարարական գործունէութեանը համար Procope Գրքեր էր վեց հատուկ, որուն երրորդ հատորը կայսեր հրամանով Հայաստանի մէջ շինուած

պեր էր Հայերը աւելի Պարսիկներուն ու Արաբներուն ապաւինել քան թէ Բիւզանդիոնի: Այսպէս մտածողներու շնորհիւ էր որ գրեթէ պահուեցաւ հայկական քանի մը գաւառներու անկախ ինքնավարութիւնները, մինչև խամսայի Մեղիքութեանց օրերուն:

Գալով այն մտքին թէ աւելի զարգացած կ'ազնէ, այդ արդէն ճշմարտութիւն է և մեծ նշանակութիւն ունի գիտութեանց և արուեստից պատմութեան համար: Բայց ըստ իս, բան մը կայ որ գեռ անտոյգ է և լուրջ հետազոտութեան կարօտ:

Պէտք է գիտնալ թէ ինչ ազգերէ և ցեղերէ բաղկացած էր բիւզանդական կայսրութեան բնակչութիւնը Արևելքի մէջ: Ի՞նչ թուական համեմատութիւն կը կազմէին այդ ազգերը, և ո՞ր ազգը որ ձիւղին մէջ զարգացած էր:

Ուրիշ բան է տիրապետող ըլլալ, ուրիշ բան է զարգացած ըլլալ: Տակաւին այսօր ալ մենք շատ կենդանի օրինակներ ունինք տիրապետողներու, որոնք ամեն ձեւի մէջ զարգացած չեն, այլ իրենց հպատակներու մէջ որոշ ցեղեր որոշ ձեւերու զարգացման զեկափարներ են երկրին և պետութեան անունով:

Թէ ի՞նչ վիճակագրութիւններ ունին պատմաբաններ արևելեան կայսրութեան բազմացիղ բնակչութեան համար, այդ ինծի յայտնի չէ, բայց բաւական է որ այսօրուան գիտնական ուսումնասիրութիւններ գրեթէ միահամուռ կը հաստատեն որ բիւզանդական ըսուած ճարտարապետութիւնը զուտ արևելեան արուեստներու խառնուրդ է, պատահաբար միայն սեղ տրուած անոր մէջ աւանդական յունականին և հռոմէականին: Այս պարագան արդէն բաւական է մեզ համոզելու որ արևելքից Նոյն ժամանակ աւելի գերազանց զարգացման հասած էին քան Յունաստանն ու Հռոմը և անոնցմէ անկախ փայլուն արուեստ մը ստեղծեցին նոր թագաւորներու Հռոմին համար:

Այժմ արդէն եւրոպական գիտնականներու կողմէն մէջտեղ դրուած է այն հարցը թէ արևելեան որ ազգեր աւելի մեծ դեր ունեցան բիւզանդական ըսուած արուեստի կազմակերպութեան մէջ: Ի հարկէ, ուշ կամ կանուխ, այդ դժուարին խնդիրը պիտի ստանայ իր ցանկալի լուծումը: Ես այստեղ, հայ արուեստին ալ որոշ չափով բիւզանդական արուեստի կազմակերպութեան մէջ բաժին ունեցած ըլլալուն հաւանականութեան մասին պիտի յայտնեմ իմ մասնաւոր կարծիքներս:

Հայաստանը երկու մասի բաժնուելէն յետոյ, արևելեան կայսրութիւնը Հայուն համար Հայաստանի մը կերպարանքը ստացաւ: Եթէ խաղաղ ապրելու և քրիստոնեայ պետութեան մը հովա նաւորութիւնը վայելելու տենչով Հայերը միծ բազմութեամբ կը տեղափոխուէին բիւզանդական կայսրութեան սահմանները, կայսրութեան զեկափարներուն թաքուն նպատակներն ալ հնարքներ կ'ստեղծէին յունական բաժինը գաղթողները

Հայաստանի սահմաններէն հեռացնելով աւելի ներսերը մղելու: Այս միայն մայրաքաղաքի մէջ պատիւ ու աստիճաններ տալով կը հիւրընկալէին, այլ և հեռաւոր տեղեր զրկելու համար առանձնաշնորհումներ և վարչական իրաւունքներ կուտային: Ծրդ դարէն սկսեալ բաւական չէ որ քաղաքագէտներ, գինուորական և պաշտական աստիճանաւորներ կը վստան Բիւզանդիոնի մէջ. տանեակ հայ կայսրեր ալ անոր հօր գահուն վրայ բազմած՝ համայն երկրին ճակատագիրը կը զեկափարէին: Այս իրողութիւնները տրամաբանօրէն մեղ կը համոզեն որ, Հայերը առանց թուական բազմամարդութեան և առանց գերակշռող արժանաւորութիւններու չէին կարող այս բարձրութեան հասնել: Սեփհական կրթութեամբ և ցեղական ինքնուրոյն յատկութիւններով մեծապէս օժտուած ազգ մը՝ տիրող տարրին հետ զուգընթացաբար վարելով ամբողջ երկրին ներքին ու արտաքին քաղաքական կազմակերպութիւնը, անկարելի էր որ իրենց ինքնուրոյն դրոշմը չի դնէին նոյն երկրի քաղաքակրթութեան վրայ: Մանաւանդ, երբ Հայերը բաց ի գինուորականութենէ և քաղաքագիտութենէ՝ նաև շինարար ժողովուրդի մը համբաւը ունէին, անպայման երկրին վարչութիւնը զիրենք այդ ձեւերն մէջ ալ աւելի յառաջ պիտի բշէր յօգուտ կայսրութեան:

Պուլղարասպան Ասիլ Բ. կայսրը (976-1028) իր անընդհատ պատերազմներով քանդած երկիրները շինելու համար, իրեն հպատակ շատ մը Հայեր Մակեդոնիա գաղթեցուց, կ'ըսէ Ասողկի-

« Այլ յորժամ էր ի Բուղարս թագաւորն Վարդ և խաղաղանայր թագաւորութիւն Վասիլին, կամեցաւ յաղգէն Հայոց որ ընդ իւրով թագաւորութեամբն, անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեցցեն գերկիրն: Որ և տարեալ բնակեցոյց զյուրվս յաշխարհն յայն »: (Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, երես 201):

Ի՞նչ հարկ պիտի ստիպէր Վասիլը միայն Հայերը գատել և գաղթեցնել, եթէ գաղթողները իրենց աշխարհաչէն յատկութիւններով չի գերազանցէին բնիկ տարրը: Աշխարհաչէն համարուելու համար ալ ժողովուրդ մը, բաց ի նիւթական և ֆիզիքական աւաւելութիւններէ, պէտք է որ ունենայ նաև գիտութիւն և արուեստներ:

Անտարակոյս, այս գաղթականութեան բուրբ բարեմասնութեանց արդիւնքը արձանագրուեցաւ բիւզանդական կայսրութեան անունով: Այս միայն Մակեդոնիոյ և կամ բիւզանդական հողի վրայ, այլև բիւզանդական բաժին եղող Հայաստանի մէջ ալ զուտ Հայերու ձեռքով զարգացած քաղաքակրթութեան անունն ու պատիւը դարձեալ իրեն պիտի սեփականէր տիրող տարրը: Այսպէս է եղեր միշտ ազգերու պատմութեան մէջ. ստեղծագործող ցեղի իրաւունքը շփոթուած կամ նուիրուած է տիրապետող ցեղին:

Այսօրինակ պարագաներու մէջ հայ արուեստ-

տապէսներ պարտական ալ չէին մտածելու թէ ապագան ի՞նչ անուն պիտի տար իրենց արուեստին, բաւական էր որ ներկան զիրենք նիւթապէս և բարոյապէս լիառատ կը վարձատրէր: Անշուշտ ուրախ կ'ըլլային նաև որ մեծ կայսրութեան ընդարձակ երկիրներուն մէջ ոսկիով ողողուած պարարտ հող կար, իրենց հանձարն ու բեղմնաւոր երևակայութիւնը կեանքի մէջ իրագործելու համար:

* * *

Բիւզանդական կայսրներու մէջ ամենէն փառասէրն ու ամենէն շայլը Թուստինիանոս, քան զՍողոմոն գերագանցելու անշուշտ, Երբ դարու սկիզբը ձեռնարկեց կոստանդնուպոլսոյ հրաշակերտ Ս. Սոփիա եկեղեցւոյ շինութեան:

Մրցուք յաջողութեամբ պսակուեցաւ քանի մը տարի յետոյ արդէն պատրաստ էր այդ հսկայ մեծագործութիւնը՝ որն որ Թուստինիանոս միմիայն իր անունն հետ կապել կ'ուզէր: Օձման նաւահատիքի ժամանակ, Նոր բերուելու ոսկի ու արծաթ ջահերով ու կանթիկներով լուսազարդուած տաճարը մտաւ, հպարտ շեշտով մը գոչեց « Յաւնէջի տէր, Սուրմն »:

Բայց ապագայ փոփոխական անաշտ դատաստանը անարդար գտաւ Թուստինիանոսի հպարտութիւնը, և երկրորդական տեղ տուաւ անոր այդ հսկայ յիշատակարանի շինութեան մէջ, և այն օրէն սկսեալ Ս. Սոփիան փոքր Ասիացի երկու համեստ ճարտարապետներու՝ Թրալացի Անթէմիուսի և Մեկիտացի Իգիտորի յաւիտենական անմահութեան կոթող արձանագրուեցաւ արուեստից պատմութեան մէջ: Արովհետև, կըրնար ըլլալ որ, մէկէ աւելի արքայական գանձեր բացուէին յիշատակարան մը կանգնելու համար, բայց երբ այդ արքայական գանձերուն չի միանար Անթէմիուսներու և Իգիտորներու շնաշխարհիկ հանձարը, արդիւնքը ոսկիէ աղիւսներու կոյտի մը արժէքը միայն կ'ունենար:

Բայց միւս կողմանէ, եթէ բազլի բերմամբ չի գտնուէր միլիոնաւոր հպատակներու քրտանց կաթիլները իր փառասիրութեան զոհելու մէջ չի խղճահարուող Թուստինիանոս մը, մենք միտեղ պիտի կարգայինք Անթէմիուսի և Իգիտորի փառաւոր անունները: Արքայական գանձին հետ միացած թագակրին փառասիրութիւնը, հանձարի հրաբուխը պայթեցնող միակ ոյժն է, առանց այդ ոյժին շատ հանձարներ անյիշատակ կորսուեր են ու պիտի կորսուին, ինչպէս պիտի կորսուէին Անթէմիուսն ու Իգիտորը՝ առանց Թուստինիանոսի: Մոլութիւններ կան որ երբեմն առաքինութիւն կը ծնին, տաքարազ դարձկութիւնը ստիպուեր է երբեմն խրախուսել մոլութիւնները՝ հանձարները փրկելու համար:

Ինչո՞ւ Ս. Սոփիան մինակ մնաց Բիւզանդիայի փառքի պատմութեան մէջ ու այլևս չի կանգնուեցաւ անոր նման հրաշալիք մը՝ Թուստինիա-

նոսէն յետոյ, գրեթէ ինը դար տեղ կայսրութեան մէջ: Արովհետև, եթէ պահ մը գտնուեցան ալ Թուստինիանոսը գերագանցելու ձգտող ինքնակաշններ, այլևս չի գտնուեցաւ ո՛չ արքայական գանձի այն առատութիւնը և ո՛չ ալ ինքնակաշի մը արժանիքը հսկայ տաճարներ կանգնելուն մէջ փնտոող պարզամիտ ժողովուրդը:

Արաբական արշաւանքները արդէն սկսեր էին կամոց կամոց կազմալուծել Բիւզանդիայի աշխարհաստան օյժը. հետեւաբար նաև ցամքեցնել հարստութեան աղբիւրները:

Թուստինիանոս ալ շատ զիւրութեամբ չի կարողացաւ ոսկի ու արծաթ հասցընել Ս. Սոփիայի շինութեան համար, քանի մը անգամ ստիպուեցաւ զանազան միջոցներով ձեռք առտաստօր տուրքերու պատճառաւ նիւթապէս հարստահարող ժողովուրդի ընդվզելու պատրաստ խլրտումները: Ֆիզիքական ոյժէ աւելի աստուածային հրամաններով և հրեշտակներու պատգամներով սանձահարեց մոլեւանդ հաւասացեալ ամբողջը: Մէկ կողմանէ բիւզանդական կայսրութեան փառքն էր Ս. Սոփիան, միւս կողմանէ աղէտ ժողովրդի անտեսական կացութեան: Միմիայն ներքին շարժական վարդարանքներուն համար հոպիւ բաւական եղաւ ամբողջ Եգիպտոսի մէկ սարուան տուրքը:

Թուստինիանոսէն յետոյ, մեծատարած ծովերու և ցամաքներու հրամայող շատ քիչ թագաւորներ գտնուեցան, անոր յաջորդները հազիւ հազ յաջողիւ էին Թուստինիանոսի անտեսապէս քաջքայած ժողովուրդը կազդուրելու, ահա հարաւի պատուհասը հասաւ Արևելքն ու Արևմուտքը քանգելու:

Հայաստանը, հակառակ իր փոքրութեան և քաղաքական ու անտեսական անմիթար գրութեան, ապացոյցներ շատ տուեր է որ, եթէ ոչ բիւզանդական կայսրութիւնը գերագանցող, գոնէ անոր հետ մրցելու շափ կարող արուեստագէտներ զարգացուցեր է իր հարազատ ծոցին մէջ:

Ս. Սոփիայի կանգնուածէն զար մը յետոյ, Հայաստանի սրտին վրայ կանգնուել է Զուարթնոց եկեղեցի մը, որուն հանձարեղ կազմութիւնը դարձեալ կոչուած է ընդ միշտ զարմացնելու արուեստագիտական աշխարհը:

Այս շնաշխարհիկ յիշատակարանին Հայաստանի մէջ գոյութիւնն ալ պարտական ենք ներսէս Շինողին, որուն փառասիրութիւնը և թագուն ձգտումները թուրք տուին բնիկ հայ հողի վրայ, հայրենիքի ծոցին մէջ ծնող ու զարգացող արուեստագէտի մը հանձարին: Ինչպէս առանց Թուստինիանոսի Անթէմիուս և Իգիտոր գոյութիւն չէին ունենար, հետեւաբար բիւզանդական արուեստն ալ այսօրուան անունն ու հոչակը չէր վայելեր, այնպէս ալ Հայաստանը առանց ներսէսի պիտի զրկուէր ճարտարապե-

տական սքանչելիքէ մը. որն որ շատ իրաւամբ Ս. Սոփիայի բարձակից պիտի ըլլայ արուեստից պատմութեան մէջ:

Աջ նուազ յանդգնութիւն, համարձակութիւն և արուեստագիտական նուրբ հաշիւներ կը բովանդակէ Զուարթնոցի շէնքը, որպիսին էր Ս. Սոփիան: Քսան և հինգ մեթրէ աւելի տրամագիծ ունեցող միջին յարկ մը ունեցեր է, որն որ կատարեալ փտահոսութեամբ ճարտարապետը յանձներ է ութը սիւններու և կամ զանոնք միացնող աղեղներու տարողութեան, որոնց տրամագիծ ու թանձրութիւնը 60-80 սանթիմետրէն աւելի չեն:

Մովսէս կաղանկատուացիի պատմելով կոստանդինոս կայսեր ծախքով շինուեցաւ այս եկեղեցին և ինքն ալ հրաւիրուեցաւ օծման հանդէսին ներկայ գտնուելու: Կայսրը այնքան յափշտակուեցաւ այս շէնքով որ անմիջապէս հրամայեց շինողներուն հետեւի իրեն մինչև կոստանդնուպոլիս՝ այնտեղ ալ նմանը կանգնելու համար:

Բիւզանդացի հպարտ կայսրը Յուստինիանոսին Ս. Սոփիայով ստեղծած փառքը նսեմացնելու միջոցը գտած էր յանակնկալս. պէտք էր ինքն ալ յաղթէր իր նախորդին, ինչպէս նախորդը Սողոմոնին: Այդ յաղթութեան կոթողը պէտք էր ըլլար Զուարթնոցի օրինակը՝ բնականաբար աւելի մեծ և աւելի շքեղ քան իր նախատիպը:

Անտարակոյս կայսեր ծանօթ չէր իր բովանդակ երկրին մէջ այդքան գեղարուեստական ներդաշնակութեամբ և անօրինակ հանձարով գլուխ հանուած շէնք մը, գուցէ նախ փտահոս ալ չէր իր օրով Բիւզանդիոնի մէջ նոյն ծրագիրը իրագործելու կարող ճարտարապետի մը գոյութեան, այդ պատճառով ալ ստիպուեցաւ իր բաղձանքի իրագործումը յուսալ Զուարթնոցի ճարտարապետէն:

Բայց դժբաղդարար մահուան մանգաղը չորացուց ոչ միայն կայսեր սրտին բաղձանքը, այլև ապագայ Հայութիւնը կորսնցուց Բիւզանդիոնի մէջ հիւսուելիք նախանձելի փառաց սլուակ մը:

« Սա (Ներսէս Գ.) էր հայրագիր նորին Կոստանդինի և գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի քաղաքադաշտի ի սուրբն Գրիգոր և ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց որ յաւէժ հիացեալ ընդ շինուածն ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր զի գնոյնաձեն յօրինեացէ ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ գնալ ի տուն իւր ի ձանապարհին վախճանէր: (Մովսէս Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից, Մոսկվա 1860 երես 255):

Ինչ փաստ կարող ենք գտնել որ Զուարթնոցի ճարտարապետը միևնոյն ծրագիրը չէր կարող երկու անգամէն ալ աւելի մեծ շինել, եթէ բաւարար քանակութեամբ ոսկի ու արծաթ գտնուէր Ներսէսի գանձարանին մէջ: Բայց այս եղածն ալ բաւական փաստ է հաւատարու

որ Զուարթնոցի ճարտարապետը Հայաստանի մէջ պակաս մրցակից չէր բիւզանդական ճարտարապետ Անթէմիուսի և Իգիտօրի:

Երրորդ անգամ ըլլալով Ս. Սոփիայի գրմբէթը կործանեցաւ 989 թուականին մեծ երկրաշարժի մը ժամանակ: Բիւզանդիոնի մէջ ոչ մէկ ճարտարապետ չի համարձակեցաւ այդ վիթխարի գործին մօտենալ, և ահա Շիրակի փոքրիկ թագաւորութեան մէջ ծնած ու զարգացած համեստ ճարտարապետ մը, համարձակ կը մօտենայ այդ մեծ ու պատասխանատու գործին և այնպիսի կատարելութեամբ կը վերականգնէ այն ահաւոր գմբէթը որ մինչև այսօր նմանօրինակ տաանեակ երկրաշարժներու անասան կուրծք տուեր է:

« Եւ զկնի սակաւ աւուրց շարժեցաւ աշխարհն ինուայ ահաւոր դրրդմամբ, մինչև կործանել զբազում քաղաքաց և զիւրից և զաւառաց ևս առաւել ի Թրակացոց և Բիւզանդացոց աշխարհին հանդերձ ծովովն, որ ի մէջ նոցա ծածանեալ ծիւր սասանմամբ մինչև ի նոյն ինքն ի թագաւորական քաղաքին Կոստանդնուպոլիս մեծաշուք և բազմապայծառ կարգ հրաշատեսիկ սեանց և պատկերաց եկեղեցեաց մեծամեծաց կործանեալ փլուզանիւր. և նոյն ինքն Սոփիայն որ կաթողիկէն է հերձանայր պատառմամբ վերուստ ի վար, վասն որոյ բազում ջան եղև արհեստաւոր ճարտարացն յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ զիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի տայ զօրինակ շինուածոյն իմաստուն հանձնարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն, որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն »: (Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան պատմ. տիեզերական Ս. Պետրբուրգ, 1885, երես 250-251):

Արդ՝ միթէ Տրդատ չի գերազանցեց Անթէմիուսն ու Իգիտօրը Ս. Սոփիայի գմբէթին տալով մշտնջենական անասանութիւն և դայժուութիւն Կոստանդնուպոլիս: Ար միևնոյն ժամանակ հայ ճարտարապետը իր հայրենի երկրի արուեստի գրոշմը դրաւ անոր վրայ, անուղղակի կերպով կը խոստովանին մեկ ժամանակակից քննող մեծ արուեստագետներէ ոմանք: Ար հաւաստեն թէ, գմբէթի կիսագունդի տակ իբրև խորիսի զըրուած ցածլիկ թմբուկը վերջին նորոգութեան ժամանակ աւելցած մաս է, նախկին գմբէթները չունէին այդ թմբուկը, և արդէն գրիթէ մինչև Տրդ դարու վերջն ալ անծանօթ էր այդ ոճը Բիւզանդիոնին, անսր ալ արմասը պէտք է Հայաստանի մէջ փնտռել:

Ս. Սոփիայի շինութեան մէջ, ինչ որ այսօր արուեստագիտական աշխարհը կը գարմացնէ, գմբէթի ահաւոր գանգուածն է 31 մեթր (*)

(*) Զանազան եղիմակներու տուած չափերը համահման չեն Ս. Սոփիայի գմբէթի տրամագիծ կիսամասը . 31 էն մինչև 35 մեթր տրամագիծ ցոյց տուողներ կան, չզիսեմ քէ ո՞րն է նիզը :

տրամագծով որ ահեղատեսիլ հանգչած է չորր աղեղներու վրայ: Այս արտասովոր մեծութեամբ գմբէթը pendentif ներու օժանդակութեամբ չորս աղ: գներէ կազմուած քառակուսի խորիխի մը վրայ հանգչեցնելը ոչ միայն կատարեալ գիտակցութիւն այլ և մեծ յանդգնութիւն կը պահանջէր: Մնացեալ մասերը ամենն ալ մատչելի և իրագործելի են՝ ամեն դասակարգի բանիմաց ճարտարապետներու կողմանէ և շին պահանջեր արտակարգ հանձար: Աղեղներու և կամարներու ծանրութիւնները շատ գիւրտար էին անհամեմատ թանձրութեամբ շինուած պատերուն և հսկայ մոյթերուն համար, իսկ պատերու և մոյթերու ապահովութեան պատասխանատու էր անոնց ներքէ հաստատուն երկիրը:

Ս. Սոփիայի ահաւոր գմբէթին վերաշինութիւնը, Տրդատ նախորդ ճարտարապետներէն աւելի գերազանց կատարելութեամբ զուլս բերելէն յետոյ, այլևս ի՞նչ կասկած կը մնայ որ անիկա Հայաստանի մէջ ալ կարող էր նոյնորինակ հսկայ ծրագիրներ ի կատար ածել, եթէ Սմբատներու և Գագիկներու գանձարաններուն մէջ բիւզանդական հարստութիւն գտնուէր: Շիրակի փոքրիկ թագաւորներու և թագուհիներու համար ի՞նչ օգուտ ունէր գիտնալ թէ Տրդատ մեծագործութիւններ արտագրելու համար ստեղծուած հպրակաբեր հանձար էր. երբ միջոցներ կը պահէին այդ հանձարին իրականութիւն տալու. բնականաբար Տրդատի անունն ալ անհետ ու անյիշատակ պիտի կորսուէր, եթէ գիպուածով չի կործանէր Ս. Սոփիայի գմբէթը և անոր վերաշինութեամբ չանմահանար հայ արուեստագործութիւնը՝ յանձին Տրդատ ճարտարապետի:

Իսկ եթէ այս ցանկալի տեղեկութիւնը մեզի հասցնող միակ պատմագիր Մտեփաննոս Ասողիկ ալ մոռնար այս փաստը արձանագրելու, անտարակոյս բոլոր աշխարհ միահամուռ բիւզանդական կայսրութեան թագին վրայ գոհար մը ևս պիտի աւելցնէին անյայտ Տրդատի յայտնի մեծագործութիւնով:

Հայաստանի ժողովուրդը միշտ ճնշուած, հալածուած և հազար տեսակ քաղաքական արկածներով դժբաղդացած, սակայն այդ գրութեան մէջ երբեք չէ կորած անոնց հոգեկան արիութիւնը, փսմին ու գեղեցկին ծայրայեղ սէրը, չէ թուլացած անոնց ստեղծագործող ու անընդհատ շինող յատկութիւնը: Այսօրուան գիտական աշխարհի ուշադրութիւնը քրաւող Ձուարթնոցի երկք հսկայ օրինակներ միանգամայն կանգներ են երեք դարաշրջաններու մէջ, արդեօք ինչէ՞ր ալ կային որ կորսուեցան առանց մեզի յայտնի ըլլալու:

Վասպուրականի մէջ տակաւին կանգուն է Արծրունի Գագիկ թագաւորի շինած եկեղեցին, որ բիւզանդական ոճէն շատ հեռու, հարազատ քղըն է 10-11րդ դարերուն Շիրակի և շրջակայից մէջ ծաղկող հայ արուեստին:

Թովմա Արծրունի միակն է հայ պատմա-

գրութեանց շարքին մէջ, որ ոչ միայն Աղթամարի եկեղեցւոյ շինութեան մանրամասնութիւնը կուտայ այլ և Գագիկ Արծրունիի շատ մը շինարարական նշանաւոր գործերուն, որոնց մէջ թագաւորը ինքն ալ գործնական մասնակցութիւն ունեցած էր, լարը ձեռքին չափելով ու գասաւորելով:

Գագիկ Արծրունիի գործերէն ամենէն ուշագրաւը, որու մասին թովմա Արծրունիի մտքէն անգամ չէր կրնար անցնիլ թէ ապագայ սերունդին համար անհունապէս մեծ նշանակութիւն պիտի ունենար քան եկեղեցիներն ու պալատները, Վանայ ծովին մէջ Աղթամար կըզգիլի աւջը շինած նաւահանգիստն (port) էր:

Փոթորիկ ժամանակ նաւերը պաշտպանուելու համար հինգ ձիարշաւ երկայնութեամբ ծովը լեցնել և պարսպապատ լիճ մը կազմել, մեր յուսեալս քննադատներու հայեացքով հին Հայերու ի՞նչ խելքի գործն էր, այն ալ փոքրիկ նահանգի մը թագաւոր Գագիկ Արծրունիի համար: Բայց իրողութիւնն այն է որ բաց ի թում Արծրունիի նկարագրութեանն, այսօր շատ մը հետաքրքիր ճանապարհորդներու ալ յայտնի եղած են նաւահանգիստի հսկայ պարիսպներու մնացորդները, որոնք մնացեր են 3-4 մետր խորութեամբ ջրի մէջ, Վանայ ծովի մոկերեւոյթին հետոյցետէ բարձրանալովը:

Ցանկալի է որ ընթերցողը ինք կարգայ թովմա Արծրունիի նկարագրութիւնը և համեմատէ թէ ի՞նչ տարբերութիւն կայ 10րդ դարու և մեր 20րդ դարու գաղափարներու, նպատակներու և շինելակերպերու մէջ:

« Եւ քաջակորով գիտակցութեամբ նայեցեալ [Ի-գիւյ] ի տեղոյն [Աշխարհ կըշ-ոյն] գրօսանս և ճանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց, ձեռնարկէ հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանալի հիացմամբ: Հրաման տուեալ բազում արհեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմն ճանուենս և դժուարակիրս հոսել ընկեցուլ յառակս ծովուն անհնարին խորութեամբ. և ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կայեալ մեծի արքային, և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայտապին ամբարտակ կանգունս հինգ ի վերայ բարձրացեալ մկահաց ծովուն, որ մտացն աջօք իբրև ի ցամաքի շարայարեալ տողադրէ զհաստակաւուցն վիմաց կարգըս. յորոյ վերայ լար եղեալ ձգէ զպարիսպն շուրջանակի իբր ձիարշաւօք հինգ. և պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ լայնանիտ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ. անկիւնաւոր խորանանման յինքեան ունելով զահոյք գրօսանաց, յորում հանդերձ որդուլքն և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայն: Իսկ և զգլուխ պարսպին ածեալ ի կիրճս դժուարամնծս քարանձաւին ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայտակ հիմանց ծովուն զնէ զրունս ահաւորատեսս հաստահեղոյս բեւեռապինդս որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով հրաշալիս իմն ներդրծեաց, բազում նաւաց յորինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց

քան զԱղեքսանդրին ի Մակեդոն քաղաքի և որպէս ինձ թուի զանցոյց զարմանալեօք զճամիրամեան փորուածոյ սենեկօք և զամբարտակաւ գետոյն որ առ ստորստու լերինն Վարազայ, զի նորայն գոնեա ի ցամաքի, իսկ սա ի մէջ խորոց ծովուս արուեստակեալ հարստահարէ զամենայն միտս և զգործս իմաստուոցն առ ի քան զինքն եղելոց »: (Պատմութիւն տանն Արժրուենեաց ի Թովմս վարդապետէ Արժրուենոյ. Կոստանդնուպոլիս 1852, երես 330):

Բարեբաղդաբար պատմագիրը չէ մոռացեր նաև յիշատակելու թէ՛ « ճարտարապետ արուեստին էր Մանուէլն զոր ի վեր անոր ցուցաք, այլ լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր: (նոյն. երես 334):

Վանայ ծովի շրջակայքը և աւելի ձիջըլ ամբողջ Վասպուրականի մէջ հոյակապ հայ յիշատակներու մնացորդներ, ճշմարտապատում վկաներ են որ, իւրաքանչիւր զարաշրջաններու մէջ Մանուէլի պէս շատ արուեստագէտներ ծներ ապրեր ու գործեր են այնտեղ անջնջելի հետքեր թողելով իրենց ետևը:

Անպասելի կերպով Արդ դարուն Վասպուրականի ճակատագիրը մռայլուեցաւ. մէկ կողմէ դրացի փոքրիկ հայ թագաւորներուն ներքին կռիւնները, միւս կողմանէ Սելճուկներու կործանարար արշաւանքները ստիպեցին Սենեքերիմ Արժրուենին Վասիլ կայսեր հաւանութեամբ թողուլ Վասպուրականը և իր երկրի բնակչութեան մեծամասնութեամբ անդափոխուիլ Սերաստիոյ նահանգը (1021 թուին) քրիստոնեայ մեծ պիտութեան մը տակ խաղաղութիւն գանելու համար:

Այս ժամանակ Վասպուրականի գաղթականութիւնը չէր որ բիւզանդական կայսրութեան երկիրները կ'ողողէր. ահագին հոսանքներ սկսեր էին Շիրակէն, Արարատէն, Վանանդէն ու Սիւնիքէն. թողլով հայրենիքի մէջ կայք և ստացուածք, հետերնին առեր էին միայն իրենց մտաւոր և Ֆիզիքական կարողութիւնները նոր հայրենիքի փառաց համար ի գործ դնելու:

Անտարակոյս, այս միլիոնաւոր բազմութիւնը տարաւ իրեն հետ ինքնուրոյն բարքեր, սովորութիւններ և արուեստներ: Այլևս ինչո՞ւ գորմանալ որ Ստշիգոփսի բիւզանդական արուեստի 10-11րդ դարերու վերածնութեան մէջ հայկական ազդեցութիւն կը տեսնէ, և ինչո՞ւ Շ. Տիլ անյայտ հոսանքներ փնտռէ նոյն դարերուն Բիւզանդիոնի մէջ կանգնուած քանի մը եկեղեցիներուն հայկականի նմանութիւնը սասանալուն վրայ, քանի որ գաղթողներու կատարեալ քաղաքակրթութեամբ ըլլալը ամենեւին կասկածի տակ չէ:

1888ին ուումանահայ հռչակաւոր հայագէտ և պատմագէտ Գր. Պըյըզլեան յօդուած մը հրատարակեր է Բաշմալեղի կերդ հատորին մէջ որ հիմնուելով ի միջի այլոց ուսէն պատմագիր B. P. Hasdeuի տուած տեղեկութեանց վրայ, կը ջանար ապացուցանել թէ Ռուսմանիոյ մէջ

Արձէշ գիւղը Հայաստանի Արձէշէն գաղթող Հայերն են հիմնած և այնտեղի աշխարհահռչակ եկեղեցին նոյն գաղթականութեան նախածնութեամբ հիմնուած է նախապէս:

Բաշմալեղի խմբագրութիւնը այս յօդուածը սպելով հանդերձ առանց ուէկ պատճառարանութեան հաւանական չէ համարած յօդուածագրի տեսութիւնը:

Երկար տարիներ յետոյ, ճարտարապետութեան բազմահմուտ պատմաբան A. Choisy իր ուսումնասիրութեանց մէջ ամբողջ Գանուբի եղերքները հայ ճարտարապետութեամբ ողջուած տեսնելէն յետոյ, մասնաւորապէս Արձէշի եկեղեցին ալ կը մատնանշէր իր հայկական ոճի մեծ խառնուրդով:

Բուսմանիոյ Արձէշը Հայաստանի Արձէշցիներուն բնակավայրն է թէ ոչ և կամ հայկական ոճը ի՞նչ աստիճան ազդեցութիւն ունեցրի է Գանուբի հովիտներուն մէջ ծաղկող ճարտարապետութեան վրայ, այդ մասին արդէն սկսեր են խօսիլ մասնագէտ գիտնականներ և զեռ պիտի խօսին յառաջիկային՝ երբ հեռոյհեռ ծանօթանան նորանոր նիւթերու և փաստերու հետ: Ես այստեղ պիտի ներկայացնեմ Բուսմանիոյ Արձէշին հետ կապուած աւանդութիւն մը որ զարմանալի նմանութիւն ունի մինչև այսօր Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող հեռաբարձական աւանդութեան մը հետ:

Գեղարուեստական ոճերու պատմագիր Barbetot, Բուսմանիոյ Արձէշի եկեղեցւոյ մասին խօսած ժամանակ, աւանդութիւն մը կը պատմէ այն եկեղեցւոյն հետ կապուած:

Արպէս թէ այդ եկեղեցին շինող ճարտարագետը յոյն մ'էր, Մանօլ անուանով:

Մանօլ իր ծրագրած մեծագործ եկեղեցին հիմնարկելու նախազիշերը երազ մը կը տեսնէ, և արթննալով իր ընկերներուն կը պատմէ թէ երկիրքէն եկած ձայն մը իրեն կ'ըսէր. — Ձեր բոլոր շինածները պիտի քանգուին եթէ առաւօտուն կանուխ ձեզմէ մէկուն առաջին անգամ կերակուր բերող կինը չի հիւսէք եկեղեցւոյ հիմին մէջ:

Ամենը երգուեցան սասուածային պատգամին հնազանդիլ, իրենց ձեռնարկելիք մեծ գործին յաջողութեան համար:

Առաւօտուն կանուխ, յանկարծ Մանօլի նորապսակ ամուսինը Քլօբան երեսց հեռուէն, որ իր սիրելի լծակցին կերակուր կը բերէր: Հակառակ Մանօլի արտասուելի աղօթքներուն և աղօթքներուն շնորհիւ յառաջացող յորդ անձրեւներուն ու հեղեղներուն, հաւասարիմ ու անձնուէր կինը առանց ծամբայէն ետ կենալու կը յառաջանար գէպ ի Մանօլը:

Մանօլ ճարտաստած, սասուածային պատգամին հնազանդելու համար իր կինը հիւսեց պատին մէջ:

Եկեղեցին շինել տուող իշխանը, չէնքը բոլորովին աւարտելէն յետոյ, նախանձով լիցուած,

որպէս զի ուրիշ տեղ իր եկեղեցւոյն նմանը չի գտնուի, ուզեց ճարտարապետը և իր ընկեր- ները սպաննել: Աւստի քանի դեռ տանիքէն վար իջած չէին անտէք, հրամայեց քանդել բոլոր սանդուղներն ու լաստերը, որպէս զի շէնքի կտուրին վրայ անսուաղ մեռնին: Սակայն ամե- նակարող ճարտարապետները սկսեցին փոքրիկ փայտի կտորներով թևեր շինել ու թռչել, բայց շուտով վար ինկան և քար կարեցան: Նոյնպէս Մանօլ, երբ սկսեց թռչել, յանկարծ լսեց իր սիրելի Ֆլորայի ողբապիւն հեծեծանքը, արիւնը սառեցաւ, աչքերը խաւարեցան և ինկաւ գե- տին: Մանօլի ինկած տեղը հրաշքով փորուեցաւ և աղբիւր մը բղխեցաւ, ուրիկէց կը հասի յատակ բայց դառն ու ազի ջուր մը արցունքով խառ- նուած: (E. Barberot. Histoire des styles d'Ar- chitecture. Paris 1891 T. II. p. 268-269):

Արձէշի հուշակոթող եկեղեցւոյն մօտիկ այ- սոր ալ կայ աղբիւր մը, որուն ջուրը ազի է. և բուսմանացիք fontana misterului Manola անունը կուտան:

Հայաստանի մէջ այս աւանդութեան մէկ ուրիշ այլադանութիւնը կայ հսկայական պա- րիսպի մը շինութեան նկատմամբ, որուն հաս- տատութիւնը և յաջողութեամբ ամբողջացումը մարդկային զո՛Տ՝ ազջկան մը մարմինը՝ կը պա- հանջէր, հիմին մէջ հիւսելու համար:

Ար գտնուի քարախրտ պառաւ մը, որ շրջացած իրեն խոստացուած աւատ ոսկիներու փայլէն, իր ինամքին յանձնուած քրօջը որբացած ազջիկը կը տանի իբրև զո՛Տ:

Պատին մէջ հիւսուող դժբաղդ ազջիկը ի զուր կ'աղաչէ մօրաբրօջը զինքը ապատել, մինչև որ քարերը կը ծածկեն ամբողջ մարմինը: Աւր- ջապէս յուսահատ ազջկան անէծքով չար պա- ռաւը սև ագռաւի մը կը փոխուի և մինչև այսօր կը զոզուայ այն պատին մօտ ուր ազջիկը հիւս- ուած է:

Այս աւանդութիւնը մեր ժողովրդական բա- նաստեղծները ոտանաւորի մը փոխած են, որ աւելորդ չեմ համարիր այստեղ գնել:

— Եարեցին, մօրքուր, շարեցին,
Մինչև ծնկներս քարեցին.
Ազատիր, մօրքուր, ազատիր,
Մատաղ կեանքիս խընայիր:

— Թող շարեն, բայա ջան, թող շարեն,
Մինչև սրունքներդ թող քարեն.
Համբերիր, չար տանիմ, համբերիր,
Կ'աղատուիս, հողիս, սիրտդ պինդ պահիր:

— Եարեցին, մօրքուր, շարեցին,
Մինչև սրունքներս քարեցին.
Մօրքուր, ճար ունիս, ճարդ տես.
Փրկէ ինձ թէ Աստուած կը սիրես:

— Թող շարեն, բայա ջան, թող շարեն՝
Մինչև կուրծքդ թող քարեն.

Ծաւղ տանիմ, քիչ սպասիր.
Գնամ իշխանից բերեմ՝ գիր:

— Եարեցին, մօրքուր, շարեցին,
Մինչև կուրծքս ալ քարեցին.
Բաշխիր մօրս գերեզմանին,
Մի կորցնեմ կեանքս անգին:

— Թող շարեն, բայա ջան, թող շարեն,
Մինչև շինեց թող քարեն.
Իշխանը ձեռք քաշեց թղթին,
Նա անխիղճ չէ, կ'ուզէ որբին:

— Եարեցին, մօրքուր, շարեցին,
Մինչև գլուխս ալ քարեցին.
Սիրտդ քար է, անխիղճ մօրքուր.
Հօգիդ ընկնի գեհնի հուր:

— Անաստուած, դու ինձ ծախեցիր,
Ջան քարով թոխմանեցիր.
Մօրքուր, մխիթար չունենա՛մ
Քեզ տեսնեմ, սև ագռաւ գառնաւ,
Բովանդակ երկիրը ման գաւ,
Տեղ չի գաւած՝ պարիսպիս վրայ
Նստիս զուրաւ.....

Արգեօք դիպուածակա՞ն է այս նոյն աւան- դութեան գտնուիլը իրարմէ անհունապէս հեռու երկու երկիրներու մէջ: Անշուշտ ոչ: Յարաբերու- թիւնը կամ հաղորդակցութիւնը փոխադրեր է մէկտեղէն միւսը: Ամենայն հաւանականութեամբ Հայաստանի անընդհատ գաղթականութիւններու միջոցաւ այս աւանդութիւնը հասեր է մինչև Բուսանիա: Իբրև և իցէ յետագարձ գաղթակա- նութեան հոսանք չէ եղած որ պահ մը մաս- ծ ենք թէ Բուսանիայէն դէպ ի Հայաստան եկաւ:

Barberot արգէն ժամանակագրական շիտ- թութիւն մը կը գտնէ եկեղեցւոյ շինութեան և աւանդութեան մէջ մասնանշուած իշխանին նը- կատմամբ:

Եկեղեցին շինուեր է 1513—1521 թուին, Negru-Voda անուն իշխանի մը ձեռքով: Այս իշխանը ապրած է 1250ին, այսինքն եկեղեցւոյ շինութենէն 268 տարի առաջ: Աւրեմն նախ քան եկեղեցւոյ շինութիւնը, աւանդութիւնը շատ կանուխէն գոյութիւն ունեցեր է Բուսանիոյ մէջ, որ գլխաւոր գիծ մըն է Հայոց գաղթականու- թեան: Ասպուրականի Սենեքերիմ թագաւորի ժամանակակից Աստիլ Բ. կայսրն է որ Հայերու մեծ գաղթականութիւն մը տարաւ Մակեդո- նիա, որուն մասին վերև տեսանք Ստեփաննոս Ասողկի վկայութիւնը: Կարելի է որ նոյն իսկ այդ Ասպուրականի գաղթականութեան մէկ հատուածն էր որ Աստիլ Բ. գաղթեցուց, որոնց մէջ անշուշտ կը գտնուէին Հայաստանցի Արձէշ- ցիներէն ալ:

Արգեօք կապ չունի՞ այս աւանդութիւնը Հայաստանի Արձէշին հետ և Արձէշով ալ անոր շատ մօտիկ Աղթամար կղզւոյն մէջ շինուած

ծովային պարիսպներուն հետ որ ըստ Թովմա Արծրունույ գերմարդկային հրաշքներ էին ճարտարապետ Մանուէլի ձեռքով իրագործուած : Արդեօք Հայաստանի, մասնաւորապէս Վասպուրականի մէջ համբաւ ու հռչակ ունեցող Մանուէլը չէ՞ Բուսանիոյ Արձէշի աւանդութեան պատմած Մանօլը: Ժամանակագրական դէպքերը և աւանդութեան պատմուածքի նմանութիւնները անչափ համոզիչ են որ ես կ'ուզեմ՝ հաւատալ թէ Վասպուրականցի հրաշագործ Մանուէլն է քանի մը դար յետոյ Բուսանիոյ ժողովուրդի բերնին մէջ Մանօլի փոխուած: Այս մասին քընտութիւնը յառաջ տանիլ և աւելի լուսարանել կը թողում մասնագէտներուն:

Ա.Լ.ԻՍԱՀԱՆՅԱՆ
1911, Յուլիս

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

Հ Ա Յ Է Ջ Ե Ր

Հետեւեալ տաղը, իր լեզուի բարբարոսութեանց եւ ձեւի միամտութեանց մէջ, զմայելի կտոր մըն է՝ անկեղծ, բնական, կենդանի ներշնչմամբ, կարծես միջնադարեան գոթական նկար մը՝ հողիսով լեցուն:

Տ Ա Ղ Խ Ա Չ Ի Ա Ս Ա

Դու ի խաչի, այ որդեակ, կաս բեւեռեալ,
Եւ իմ սրտիկս է խոցոտեալ.
Փոխանակ քո, այ որդեակ, լիցիմ մեռեալ.
Ձի է յանցանքդ, որդեակ Յիսուս:

Ասե որդին

Ի չարչարանս, այ մայրիկ, կամաւ եկի
Ջախելոյ զգլուխ (1) իմոյն խակի,
Վասընքսիրոյ, այ մայրիկ, մարդկան ազգի.
Մի լար վասն իմ, ով (2) սրբուհի:

Ասե մայրն.

Թագիւ (3) պըճնեալ, այ որդեակ, ինձ ծանուցար,
Ձի արդ փրջօք պըսակեցար.

(1) Ձեռ. Ձգլոխ: (2) Ձեռ. Օ՛վ: (3) Ձեռ. Թագիւ:

Յընծութիւն իմ՝ այ որդեակ, էր տըրտեցար.
Ձի է յանցանքդ (1), Յիսուս որդեակ:

Ասե որդին (2)

Յուժգին ցաւոցս, այ մայրիկ, խորովեալ եմ,
Եւ ի շընչոյս նըւաղեալ (3) եմ.
Կաթ մի ջուր բեր, այ մայրիկ, ծարաւեալ եմ.
Մի լար (4), մայր իմ, ով սրբուհի (5):

Ասե մայրն.

Ջքեղ յաւիտեան (6), այ որդի, ես գիտէի՝
Ըստ ասելոյն Գաբրիէլի.
Իսկ դու արդէն, այ որդեակ, երեսնամի (7).
Ձի է յանցանքդ, Յիսուս որդեակ:

Ասե որդին (8)

Սակըս մահու, այ մայրիկ, սիրտըս խարտի (9).
Ձայն քո լըւեալ ցաւս իմ բարդի (10).
Ջարծիւն Յոհան, այ մայրիկ, առ քեղ որդի.
Մի լար, մայր իմ, ով սրբուհի.
Ըմբերելոյ ոչ ունիմ կար.
Իսկ դու լըւեա, ով սրբուհի (11):

Ս. Ղազարու Ձեռ. թիւ 730 Տաղարան

Վ Ր Ի Պ Ա Կ

Անահիթի նախորդ թիւին մէջ (7-8), հետեւեալ վրիպակները սպրդած են.

Էջ 169, բ. սիւնակ, տող 27, թէեւ, պէտք է ըլլայ՝ քե: Էջ 192, ա. սիւնակ տող 18, կամ չէ, պէտք է ըլլայ՝ կամ քե: Էջ 192, բ. սիւնակ, տող 29, ընտրութեան շահուն, պէտք է ըլլայ՝ ընտրութեան պահուն:

(1) Ձեռ. Անցանք: (2) Ձեռ. Կը պակսի: (3) Ձեռ. Նըվաղեալ: (4) Ձեռ. Լայր: (5) Ձեռ. Օ՛վ սրբուհի: (6) Ձեռ. Աւտան: (7) Ըսել կ'ուզէ՝ քեզ անմահ կը կարծէի, մինչ ահա երեսնամայ ես [ու կը մեռնիս արդէն]: (8) Ձեռ. կը պակսի: (9) Ձեռ. Խարդի. (10) Ձեռ. Բարթի: (11) Ձեռ. սրբոյն:

Ք Ր Ո Ն Ի Կ

Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը տօնեց իր հիմնադրութեան հարիւրամեակը, իր այժմեան արքայ՝ Գեր Գովրիկեան արքեպիսկոպոսին՝ քահանայութեան յիսնամեակը եւ Հանդէս Ամսօրեայի քսանեւէնդամեակը: Այս երբեակ տօնին մասնակցեցան Հայութեան բոլոր կարեւոր հիմնադրութիւններն ու անձնաւորութիւնները. եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, որովհետեւ Վիեննայի Մխիթարեան Տունը՝ Հայ ցեղին մտաւոր կեանքի գլխաւոր վառարաններէն մէկն է, հայկական բանասիրութեան գերագոյն դարբնոցը: Տալով ազգին Գաթրճեաններու, Գարպաշեաններու, Այտրեաններու, Տաշեաններու պէս ճշմարիտ գիտուններ, այդ տունը ոչ միայն հայկական գիտութեան յառաջդիմութեանը մեծապէս նպաստած է, այլ եւ այդ հմուտ մեծ դէմքերուն Եւրոպացւոյ մօտ յարուցած յարգանքովն ու սքանչացմամբ մեր ցեղին վարկը բարձրացուցած է իբր բանասիրութեան մէջ արեւմտեան մեծ վարպեաներու հետ մրցող ուղեղներ հասցընելու կարող ցեղ: Հանդէս Ամսօրեան իբր բարձր բանասիրութեան մասնագիտական օրկան՝ մեր մտաւոր կեանքին անհրաժեշտ գործիքներէն մին է, զոր ամբողջ Հայութիւնը շահ ունի պահպանելու, զօրացնելու, ընդարձակելու: Կոչը զոր Հանդէսի խմբագրութիւնը կ'ուղղէ այս առթիւ հայ հասարակութեան, երանի՜ թէ լսելի ըլլայ:

Հայ գրասէր ունեւորները, ուսումնասիրական նպատակով հիմնուած ընկերութիւնները, պէտք է փութան մասնակցիլ այն հանգանակութեան որ բացուած է գրամագլուխ մը կազմելու համար, որպէս զի Հանդէս Ամսօրեան ոչ միայն այսուհետեւ Միաբանութեան վրայ տարին 3000 Քրօնքի շնու ջըլլայ, այլ եւ կարենայ ի վիճակի ըլլալ օտար եւ հայ բոլոր հայագէտ բանասէրները հաւաքել Հանդէսին շուրջը, ինչպէս կ'առաջարկէ Միաբանութեան պատուական ուժերէն մին՝ Հ. Գրիգորի Մենէվիչեան: Թէ այդ փափաքին իրագործումը ի՞նչ հոյակապ ու օգտաւէտ արդիւնք

կրնայ տալ, ատոր մասին գաղափար կազմելու համար կը բաւէ աչքէ անցընել բովանդակութիւնը Յուստինիանոսի զոր Միաբանութիւնը պիտի հրատարակէ ի մօտոյ՝ ի պատիւ Հանդէս Ամսօրեայի քսանեւէնդամեակին, եւ որուն աշխատակցած են եւրոպացի եւ հայ գրեթէ բոլոր ծանօթ բանասէրները:

* * *

Հ. Արսէն Ղազիկեան, որմէ երկու գեղեցիկ թարգմանութիւններ կը զարդարեն Անահիթի այս թիւը, ի լոյս ընծայեց վերջապէս շատոնց ի վեր սպասուած Իլիականի աշխարհաբար թարգմանութիւնը:

Իլիականի աշխարհաբար թարգմանութիւն մը՝ թուական մըն է աշխարհաբարի պատմութեան մէջ: Աշխարհաբարի յաղթանակին վերջնական նուիրագործումն է: Այդ տեսակէտով Հ. Ղազիկեան նորնաւորութեանց արժանի է: Թէ ինչքան յաջող է այդ թարգմանութիւնը, թէ՛ հարազատութեան տեսակետով, թէ՛ իբր հայերէն լեզու եւ սաղաշարիութիւն, ասիկա կ'արժէ մանրամասնորէն եւ խզմտորէն քննել: Թողլով զայդ յունագէտ քննադատներու, եւ կ'ուզեմ միայն ողջունել պատուական Մխիթարեանին անխոնջ ու գեղեցիկ ջանքին պատկումը, եւ համոզուած եմ որ եթէ նոյն իսկ մանրամասնութեան թերութիւններ նշմարուին հոն՝ մեր մէջ Հոմերոս ասիկց աւելի լաւ աշխարհաբար թարգմանող ուրիշ մը պիտի չկրնայինք գտնել: Ու երբ կը նկատենք որ Հ. Ղազիկեան քանի մը տարուան մէջ, Տանթէն եւ Սասնէն յետոյ, մեզի տուաւ Լէոփարտիի եւ Վիթթորիո Աղանուրի քերթուածներուն, Երուսաղեմ Ազատեալին, Եեթեակներն եւ Իլիականի թարգմանութիւնը վրայէ վրայ, եւ ատոնց հետ Մատենագիտութեան պատկառելի ու սաժանելի գործն ալ կը շարունակէ յառաջ տանիլ, կը մնայ մեզի գործվագին սքանչացմամբ շնորհակալութիւն յայտնել նրբաճաշակ եւ բազմախառ Մխիթարեանին եւ մաղթել որ ան կարենայ իրագործել իր — եւ մեր — փափաքը, այն է աշխարհաբարի վերածել դասական բոլոր մեծ գլուխ-գործոցները:

Գրիգորի

Հայկական Ընդհ. Բարեգործական Միութեան հիմնադիրներէն եւ գլխաւոր ղեկավարներէն՝ Երուանդ պէյ Ազաթօն վերջերս Փարիզի մէջ՝ բանախօսութիւն մը արտասանելով, ինչպէս եւ անձամբ գիմուսներ ընկելով մեր գաղութին հարուստներուն մօտ, կազմեց այդ Միութեան տեղական Մասնաճիւղ մը, հաւաքեց 50,000 ֆրանքի մօտ մուտքի դրամ, եւ սարեկան մօտ 7000 ֆրանքի անդամավճար։ Այս յաջողութիւնը հաճոյքով պիտի լսուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան բարեկամներուն կողմէ։

Երկու տարի առաջ ես առաջարկած էի որ Փարիզի Հայկական Միութիւնը, որ իր հայկական «Ալիանս Իսրայէլիթ»ի ուրուագծի գերը կատարած վերջացուցած է եւ այլ եւս գոյութեան հիմք չունի, իր ունեցած գրամազուրքը յանձնէր Բարեգործական Ընդհ. Միութեան, եւ ինքն իսկ նախաձեռնութիւնն առնէր Փարիզի տեղական քօմիթէն կազմելու։ Փարիզի Հայկ. Միութեան ղեկավարներէն ոմանք համամիտ չեղան՝ յարգելի պատճառներով, Այժմ անշուշտ բոլորը համաձայն պիտի ըլլան թէ Փարիզի Հայկ. Միութեան գրամազուրք պէտք է յանձնել Բարեգործական Ընդհ. Միութեան։ Կարելի է յանձնել Փ. Հ. Միութեան անունով, եւ որոշ նպատակի համար։

Ինչպէս արդէն իսկ գրած եմ այստեղ, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը կոչուած է Հայութեան ամենամեծ ընկերութիւնն ըլլալ, եւ ամէն Հայ այս կամ այն ձեւով անոր ընդարձակման եւ զօրացման պէտք է նպաստէ։ Իսկ Միութեան ղեկավարները պէտք է միշտ հետու կենան կուսակցական ո եւ է մոլեռանդութենէ, ամբողջ ազգին սէրն ու համակրութիւնը վաստակելու ջանադիր ըլլան, եւ երբէք չմոռնան թէ նոյն իսկ Ալիանս Իսրայէլիթը յայտարարած է որ տղքատախնամ ընկերութիւն մը չէ ինքը, այլ Հրէութեան բարձրագոյն շահերը, պատիւը, վարկը պաշտպանող, անոր բարոյապէս եւ նիւթապէս զօրանալուն նպաստող ընկերութիւն մը։

Անահիտի փարիզարնակ երաժշտագէտ ընթերցողներէն ոմանք գիտողութիւն ըրին ինծի՝ Փրօֆֆ. Գալֆահանի նուիրուած յօդուածին մասին որ վերջին թիւով հրատարակուեցաւ. ըստ իրենց՝ չափազանցութիւններ կան այդ յօդուածին մէջ, եւ ինքս ալ համամիտ եմ այդ գիտողութիւն ընտղներուն. կան արդարեւ հոն՝ արդար գնահատումի առդերու հետ եւ քանի մը չափազանցութիւններ ու անձնութիւններ։ Այդ յօդուածը Փրօֆֆ-Գալֆահան ինքն իսկ թարգմանելով յանձնած էր մեզի՝ հրատարակելու խնդրանքով եւ մենք զայն հրատարակեցինք երիտասարդ հայ երաժիշտը քաջալերելու համար։ Օտար մը որ մեր մէկ հայրենակիցը կը դրուատէ, ասի մեզի հաճոյք միայն պէտք է պատճառէ։ Ատոր մէջ ոչ մէկ վեաս չկայ։ Իրական վեասը ինքն իսկ Փրօֆֆ-Գալֆահանը պիտի կրէր, եթէ շփանար այգպիսի ներքողներէ զոր երիտասարդ խանդոտ վեհանձն քրահասցի մը չըռայեր է, եւ իրօք կարծէր թէ իր գործերը կարող են կլիւքի կամ ժՁրդ դարու մեծ վարպետներուն գործերուն հետ բաղդատութեան զրուիլ, կամ թէ իրօք իրմէ կը սկսի համաձուլում մը եւրոպական ու արեւելիան երաժշտութեանց։ Սկսնակ մը պէտք է որ փոռասէր ըլլայ եւ ցանկայ հասնիլ ամենամեծ բարձունքներուն. բայց յաւակնոտ եւ մեծամիտ պէտք չէ ըլլալ, որովհետեւ յաւակնութիւնը կ'արգիլէ հասնիլ այդ բարձունքներուն։

Անահիտի ներկայ թիւով կը հրատարակեմ Ռուբէն Զարդարեանի մէկ հէքեաթը, զոր այս այս օրերս գտայ հին թուղթերու մէջ։ Զարդարեանի առաջին արտագրութիւններէն մին է, գրուած 1895ի Մաղիկին համար, եւ որ՝ Մաղիկի հրատարակութեան զազարմամբ՝ մնաց անտիպ, Տեսակ մը վարիանթ է նոյն հեղինակին Մաղիկի մէջ հրատարակած Մովակիկն հարսը հէքեաթին, բայց ունի իր ուրոյն գոյնը, նշանակութիւնը, եւ գրուած է այն նոյն սաք, կենդանի եւ գունապեղ ոճովը զոր

Սեւ հաւը կանցեց գլուխ-գործոցին սքանչելի բանաստեղծը երեւան բերաւ առաջին օրէն : Ես կը կարծեմ թէ այս էջը արժանի է օր մը Յայգալոյսին երկրորդ ապագութեան մէջ իր տեղն ունենալու՝ միւս քերթուածներուն քով, — ինչպէս որ կը կարծեմ թէ այդ գրքին մէջ պէտք է նաեւ իր տեղն ունենայ Ճախարակից Բերրուածը, զոր Հրաչ ծածկանունով Զարգարեան հրատարակեց Անահիտի առաջին տարուան 5-6 թիւին մէջ եւ որ իր — եւ հայ գրականութեան — ամենէն հրաշալի էջերէն մէկն է :

* * *

Փրօֆէսօր Սաչիգովսկի, ծանօթ գեղարուեստագետագէտը, հայ մամուլին միջոցով հայ հասարակութեան կ'ուզէ կոչ մը, որ պէտք է ընդունուի խանդավառօրէն. « Եջմիածնայ Աւետարան »-ին հեղինակը հաստատած է Վիեննայի Համալսարանին կից՝ Գեղարուեստի Պատմութեան Ուսումնարան մը (Institut), որ նպատակ պիտի ունենայ ուսումնասիրել Յունաստանի, Սիրիոյ, Միջագետքի, Փոքր-Ասիոյ, Ռուսաստանի հին գեղարուեստին հետ՝ եւ Հայոց հին գեղարուեստը : Բայց որպէս զի կ'ըսէ փրօֆէսօրը, կարելի ըլլայ հայ գեղարուեստը ուսումնասիրել իր ամբողջութեան մէջ, եւ ճշդել գեղարուեստի պատմութեան մէջ անոր տեղը՝ որ առաջնակարգներէն է, նորահաստա ուսումնարանը, որ նիւթական մեծ միջոցներէ դեռ զուրկ է, պէտք ունի Հայոց օգնութեանը. այդ օգնութիւնը կարելի է հասցնել՝ շէնքերու, յիշատակարաններու, գեղարուեստական առարկաներու լուսանկարներ հանելով ու զրկելով փրօֆէսօրին. եւ յետոյ՝ հայ արուեստի վրայ հայերէն լեզուով երեւոյցած ուսումնասիրութեանց թարգմանութիւնը իրեն ուղարկելով : Փրօֆէսօրը կ'աւելցնէ թէ մասնաւորապէս կը փափաքի ամենէն առաջ Թօրամանեանի աշխատութեանց թարգմանութիւնն ունենալ :

Մենք ամենախոր ու րախուժութիւն կը զգանք անհնելով որ մեր ազգային գեղարուեստին ինքնատիպ հանգամանքն ու առաջնակարգ կարեւորութիւնը, զոր այնքան անգամ շեշտած ենք այս թիւթին մէջ, կը սկսի ընդու-

նուիլ եւրոպացի մասնագէտներէ, եւ այդ թէզը վերջնապէս ու մանրամասնօրէն հաստատելու համար՝ գիտականօրէն կազմակերպուած ջանքեր կը փորձուին Եւրոպացոց եւ Հայերու կողմէ : Ամէն Հայ, որ ո՛ր եւ է ձեւով կարող է օգնել Պ. Սաչիգովսկիին, պէտք է է իրեն պարտք համարի այդ օգնութիւնը չզլանալ :

Ահա Ուսումնարանին հասցէն՝
Kunsthistorisches Institut,
1. Franzensring 22, Vienne, (Autriche)

Ու նոյն ատեն, անհնելով այն մեծ կարեւորութիւնը զոր եւրոպացի վարպետ մը կ'ընծայէ մեր տաղանդաւոր ու բազմավաստակ հայրենակից Թօրամանեանի աշխատութեանց, կը մաղթենք որ հայ հասարակութիւնը թօթափէ վերջապէս անտարբերութիւնը զոր ցարդ ցոյց առած է հանդէպ այդ կարող գործիչին, օգնէ անոր ի լոյս ընծայել իր բազմաթիւ ուսումնասիրութիւնները, որոնցմէ դեռ շատ քիչը հրատարակուած են :

Ա. ԶՕՊԱՆԵՍԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՊԱՐՍԻԿ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԻՑ

Գէթ մի լոպէ քո կրքերին թէ իշխես,
Մարգարէից ողջ զիտութեան կը տիրես.
Այն դէմքն անտես, որ ողջ աշխարհն է պտուղ,
Դու քո մտքի հայելու մէջ կը դիտես :

Սիրողների կըրօնում կան այլ կարգեր.
Այս անապակ զինին կը տայ այլ բարքեր.
Այլ է ուսումն ինչ որ ուսաք դպրոցում,
Այլ է ինչ որ երբ ձեր սրտում ըզգաք սէր :

Խոստովանիր, որ սէրն ընտիր մի բան է,
Որ չարիքը վատ բընոյթի նըշան է.
Դու քո կրքին սէր անունն ես զըրոշմած,
Անցքը կըբի ու սիրոյ մէջ շատ լայն է :

Ջալալեդդին Մաուլևի

Չեմ իմանում, ինչու մարդ որ պիտ' մեռնի,
Պատանքից զատ հետ էլ ոչինչ պիտ' տանի, —
Թէ ինքն իրան թէ սիրելուն է տանջում
Գանձի համար, որից բընաւ շահ չունի:

Ջամալի Արսասանի

Ո՛վ դու կազմանձրդ շաղախից հակատարր,
Է՛ր վանել ես մահը մտքից քո խպառ.
Գիտես ինչ են քո այդ պատկերն ու այդ շունչ.
Մի բուռը հող ձամբի վըրնայ հողմավար:

Մօլլա Կասիմ Մեքեդի

Լըսիր, զանգուածը չորս տարբեր տարբերից,
Ի՛նչ են ձայնում քեզ հոգեւոր աշխարհից.
« Դու մի դե ես, գազան և մարդ և հրեշտակ,
Ո՛րն որ յաղթէ ան ես դու այս քառեակից »:

ԱՖգէլ

Ով իր աչուին արցունքով է ողորում,
Կեանքի հունձից աւելի է հասկ կորզում.
Երիտասարդ, լաց քանի դեռ կարող ես,
Գարնան անձրեւն ուրիշ արդիւնք է յորդում:

Միւր Թալեպ Թեքզիբի

Ամէն ծաղիկ որ զարդն է այս ծաղկոցի,
Դիտես՝ վարդ է, քաղես՝ փուշ է — կը խոցի.
Ջահը հեռուից դիտի, մտը մի՛ գընալ,
Լոյս կ'երեւայ, բայց բընոյթն է հընոցի:

Բեհա՛ի Աւիլ

Աւաղ, կեանքումն ինչ որ լաւ էր անց կացաւ.
Շըջանը, ուր սիրտս ուրախ էր, անց կացաւ.
Երիտասարդ սրտի գարնան քաղցր օրեր,
Ձերդ մի շողիւն, դերդ վարդի բոյր անց կացաւ:

Սեյթ Էդդիմ Էսմեքեքգի

Փարզմ. պարսկ.

Փարիզ. ՄԵՍՐՈՊ վարդպ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆՅ



ԵՐՈՒԱՆԴԻ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՄԷԿ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐ

Քանի մը ամիս առաջ, էնսթիթիւ Փասթօրի տնօրէն Տր. Ռու Գիտութեանց Ակադեմիային ներկայացուց Երուանդ Մանուէլեանի մէկ նոր աշխատութիւնը կարծրերակուծեան ծագման մասին: L'illustrationի գիտական քրոնիկագիրը այդ մասին հետեւեալը կը գրէ այդ թերթին գեկտ. 30ի թիւին մէջ.

« Յայտնի է որ քանի մը տարիներէ ի վեր Պ. Մեչնիքոֆ կարծրերակուծեան (arterio-sclérose) խոցերը կը բացատրէ այն ազդեցութեամբ զոր միքրոպային զանազան թոյնները (toxine) կը գործեն փողերուն (vaisseaux) վրայ, որու հետեւանքը եղած էր այդ հիւանդութիւնը բուժելու համար մարտողական խողովակին ապանեխման դիմելը:

« Տեսականօրէն, այս վարդապետութիւնը ամուր կը թուի, եւ ապացուցուած է որ աղիքներու խմորմանց առաջին առնել ձգտող դարմանում մը նպաստաւոր ներգործութիւն մը կ'ունենայ կարծրերակուծեանէ բռնուած անձին առողջական ընդհանուր վիճակին վրայ:

« Միայն թէ՛ գործնականին մէջ, Պ. Ն. Մանուէլեան հաստատած է թէ կարծրերակալ փողերը շատ բացառապէս կ'ընծային խոցուածներ vaso-vasorumին, այսինքն աւելի կարեւոր կոճղերուն երեսներուն մէջ շըջան ընող փողերուն: Թօքսիններու ուղղակի ներգործութիւն մը, ինչպէս որ Պ. Մեչնիքոֆ կ'ընդունի, անհաւանական կ'երեւայ ուրեմն: Պ. Ն. Մանուէլեան, այն նօթին մէջ զոր վերջերս ներկայացուց Գիտութեանց Ակադեմիային, հարց կը դնէ թէ արդեօք կարծրերակային խոցերը աւելի՛ ջղային խանգարումներէ չէ՞ որ յառաջ կուզան: Շան վրայ փորձեր կատարելով՝ նկատած է որ ջղային թելիկներուն փորձարկութեան արդիւնքով գոյացած խոցերը երբ փողերուն մէջ կը տարածուին, քիչ յետոյ՝ այդ թելիկներէն ջղաւորեալ մասին մէջ կարծրերակային նիշեր (plaque) երեւան կուզան:

« Ապացուցուած է ուրեմն որ ջղային խոցերը շատ կարեւոր դեր մը կը կատարեն կար-

ծրերակային խոցերուն յառաջ գալուն մէջ : Ուրեմն պէտք է ընդունի՞ր թէ Պ. Մեչնիքոֆի կողմէ չարիքին բուն պատճառ համարուած թօքսինները անուղղակի՞ կը ներգործեն, իրենց ազդեցութիւնը բանեցնելով ոչ թէ փողերուն վրայ, այլ այդ փողերուն յանգող ջիղերուն վրայ : Այս վարկածն է որ հաւանա՛յան կը թուի . ամէն պարագայի մէջ, կարծրերակու- թեան ախտածնութիւնը պէտք ունի աւելի մօակն ուսումնասիրուելու :

« Եթէ ջղային դրութիւնը դեր մը կը կա- տարէ այս հիւանդութեան մէջ, անշուշտ ատով լաւ եւս կը բացատրուի ելեկտրական հոսանք- ներով եւ տարսոնովալեան դրութեամբ՝ խոցե- րուն եւ թօքսիններուն վրայ գործուած ազ- գեցութիւնը, ազդեցութիւն որ մինչեւ ցարդ չէր բացատրուեր : »

Մեկնելով իր այս գիւտէն, Պ. Մանուէլ- գրադած է այժմ անոր շարունակութիւնն ու պսակումն ըլլալ ձգտող աւելի կարեւոր աշխա- տութեամբ մը, որ կը յուսանք պիտի յանգի կատարեալ յաջողութեան :

**ԻՏԿԱՐ ՇԱՀԻՆԻ
Ն Ո Ր Գ Ո Ր Ծ Ե Ր Ը**

